Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Հայ գրականություն, Արձակ, Վեպ

13+

Վրթանես Փափազյան

Ալեմգիր[1]

(վեպ պարսկական կյանքից)

Ա

Շուկան, Պարսկաստանի մանավանդ մեծ քաղաքներում, մի տեսակ զբոսավայր է գրեթե:

Արևը ծագելուց հետո, երկու սեռի բազմություն հետզհետե սկսում է ներս լցվել այդ կամարածածկ փողոցները, որոնք նեղ և երկար տարածվում են զանազան ուղղությամբ, երկու կողմում ունենալով բազմաթիվ խանութներ:

Խանութները բաց են, աղմուկը շատանում է, օդը հեղձուցիչ դառնում և կեսօրվա մոտերը ժխորով այնպես լի են անցքերը, որ երթևեկությունը դառնում է գրեթե տաժանելի, մանավանդ, երբ ձիերի, ջորիների երկար շարքեր, փշաբարձ էշերի, բեռնավորված ծանրաքայլ ուղտերի կարավաններ գալիս մտնում են ամբոխի մեջ և սեղմում նոցա դեպի խանութների առջևը շինված պատվանդանները:

Գրեթե միշտ բաց, հաճախ լպրծուն, անհարթ և առանց որոշ հատակագծի շինված, կիսախավար ու վերից տեղ-տեղ բացված երդիկներից լույս ստացող այդ մութ բազաները ավելի դժվարանցանելի են լինում, մանավանդ տոն և ուրբաթ օրերը: Բազմությունը այդպիսի օրերում ավելի է խռնվում, խանութների մեջ ավելի են հաճախորդներ — մանավանդ կանայք. ամեն կողմից երևում են նոցա կապույտ սավանները և դեմքերը լիովին ծածկող, ծակոտկեն դիմակով երկար քողերը (ռուբենդ):

[1] Պարսկերեն նշանակում է «աշխարհակալ»:

Անցնում են ահա հարուստ արքայազնի կամ որևէ մեծավորի հարեմի կանայք աղախիններով, երբեմն ներքինին իրենց հետ: Նրանց կողքից հրելով, հրմշտելով, վազում են մարդիկ, էշեր, ջորիներ, օրորվելով ծանրաքայլ՝ գնում են միմյանց կապած ուղտերի երկար շարքեր... Մի կողմից լսվում են զանգահարություններ,— կերակուր կամ քաղցրեղեն ու չոր միրգ ծախող խանութներն են, որոնք ահագնապես զանգահարում են՝ անցորդների ուշադրությունը գրավելու համար: Վաճառքն ամեն կողմ բաց՝ ի տես է դրված դեզ առ դեզ կրպակների առաջ. մի խանութում՝ բազմատեսակ խմորեղեն ու շաքարեղեն, մյուս կողմը՝ այլազան չոր միրգ՝ թութ, թուզ, չամիչ, պիստակ, նուշ ու կաղին. մի այլ կողմ, փիլավ ու չիլավ եփողի խանութն է, որ սիրտ խառնող ճարպահոտ շոգիով ծխում է անցնողների քթին. նրա դիմաց՝ շաքարի մերկ գլուխներով լի խանութը, ցածում՝ ճոթեղենների, զենքերի, հագուստի, գորգերի... խանութներ. մեջ առ մեջ՝ դեղատներ, ասիական այդ աղտոտ բժշկանոցները, ուր ծալապատիկ նստած՝ ինքնակոչ բժիշկներն ընդունում են հիվանդը, դեղ են տալիս... Քիչ ցած՝ որևէ փակված խանութի առաջ, պատվանդանի վրա՝ սափրիչն է, որ կկզացրել-նստեցրել է մի աղտոտ թուրքի, կարմիր աղտոտ վարշամակով ծածկել է նրա կուրծքը և ածելում է լերկ գանգը: Ուրիշ կողմ երևում է ջուր բաժանողը, որ կուժը մեջքին կապած, սառույցով լի հողե գավաթը ձեռքին՝ հրելով ամբոխը՝ գոռում է.

— Սիբիլ-ուլլա՛հ, սիբի՛լ...

Վազվզում են, սպրդում անցորդների միջից՝ թափառիկ թեյ տվողներ, կերակրատան ճարպոտ մանչուկներ, ղեյլան տանող սրճատան ծառայողներ. անցնում է մրգավաճառը էշն առաջն արած, կշեռքն ուսին□□□ և խանութվորներն ու ամբոխը անվրդով, սովոր այդ բոլոր խաժամուժին, այդ դժոխային աղմուկին — խոսակցում են, առևտուր անում, կանանց առաջ պարզում խանութի ապրանքը…

Երբեմն մի սեփական կառք, գալիս-հրում է, հրմշտկում, կառապանը գոռում է «խաբեպ-դար», մարդիկ կպչում, սեղմվում են այս-այն պատին... Մի այլ ոոպե, մի ձիավոր, արշավակի, մտրակը շառաչեցնելով պատռում է ամբոխը և անցնում, իսկ ամեն քայլին մոլլաներ ու սեյիդներ, ապա աջ ու ահյակ եղած քարվանսարաներից, բաղնիքներից, մզկիթներից դուրս թափվող մարդիկ, աղաղակ, աղոթքի, հայհոյանքի, կռվի, ծիծաղի մի այլանդակ խառնուրդ...

Եվ այդ բոլոր խառնիճաղանջի մեջ հաճախ երևում է նաև սևամորթ, շեկ կամ թխադեմ երկար մազերով դերվիշը, որ վագրի մորթին ուսին, **քեշկյուլը** /Քոքո ընկույզի պատյանը, որը ծառայում է դերվիշներին իբր գանձանակ, ջուր խմելու և այլն:/ ձեռին, **նաջախը** /Երկաթյա գավազան երբեմնյա Ալի տառեր ձուլած վրան. ամեն դերվիշ ունի:/ բարձր, դերասանական քայլերով, անվրդով կանգ է առնում յուրաքանչյուր խանութի առաջ, երգում կամ բարձրաձայն ու ողբագին նվիրական ոտանավորներ արտասանում, ապա տալիս է խանութպանին մի կտոր մեխակ կամ մի փունջ **նանե** /Անանուխի բույսը:/ և առած դրամը քեշկյուլի մեջ ձգելով՝ շարունակում իր գնացքը: Հետո երևում է մուրացիկը իր պարբերական, միաձայն նախադասությունը կրկնելով. նրան հետևում է տաք և խաշած ճակնդեղ ծախողը, պնակը գլխի վրա դրած, մեծաձայն գովասանելով ապրանքը…

Եվ այսպես, ամեն ոք գոռում է, ամեն ոք քայլում, շարժվում, աղմկում: Ուտում են, խմում, նստած, կանգնած. երգում են, աղոթում, բանաստեղծում, զվարճանում այդ արևելյան երկար շուկաների բոլոր շարքերի երկարությամբ:

Զբոսնողներն ավելի շատ են: Մարդիկ կան, որոնց միակ զվարճատեղին շուկան է: Այդտեղ նոքա ժամադրում են միմյանց, այդտեղ խմբվում են ծանոթի խանութի մեջ, այդտեղ խումբ առ խումբ, կուտ, շաքարեղեն և այլն ուտելով, ճեմում են պարսիկ երիտասարդ ազնվականները՝ շքեղ հագնված, այդտեղ նոքա ճգնում են տեսնել՝ երբեմն շոգից երեսը բաց անող, շատ անգամ դիտմամբ իրենց գեղեցկությունը երևցնել ցանկացող կանանց, այդտեղ քսվելով նոքա սիրուհիների՝ խոսք են նետում, խոսակցում հաճախ կամ իրենց ծանոթների խանութների մեջ նստած՝ աշխատում են խոսել հաճախորդ կանանց հետ, սիրային արկածներ որոնել և սակավ չէ, որ այդ երկար շուկաների խուլ անկյուններում տեղի են ունենում սիրային ժամադրություններ:

Ահա այդպիսի զբոսասեր երիտասարդների մի խումբ էր, որ մի աշնանային օր Թեհրանի մեծ շուկան էր մտնում Շեմսյուլ-իմարեթի կողմից: Չորս լավ հագնված գեղեցկադեմ պատանիներ էին. քրքիջներով սկսել էին անցնել խանութների առջևից. մեկը գնել էր կուտ ու պիստակ, մյուսը շաքարեղեն (շիրինի), երրորդը՝ նուշ, հետո ծիծաղելով, կատակելով ու հանդարտաքայլ, այս-այն խանութը, այս-այն անցնող կինը զննելով՝ մտնում էին շուկայի խորքերը:

Սակայն երկար չկարողացան նոքա միասին մնալ: Բազմությունը շատ էր, շարժումը մեծ: Շուտով երկուսի բաժանվեցան, հետո, ավելի ցածում — երբ նոցանից յուրաքանչյուրը ընտրել էր մի-մի բան զննելու, հանկարծ մի ինչ-որ մերկ մարդ, կողմնակի փողոցից ոստնելով՝ բազմության մեջ ընկավ և նրանց լիովին բաժանեց միմյանցից:

Բազմությունն իսկույն շրջան կազմեց մերկ ու այլանդակ ոստնողի շուրջը. երիտասարդներից ամենակրտսերը սեղմված մնաց շրջանակի մի կողմում երկու կանանց և առջևից կանգնած աղտոտ գործավորների մեջտեղում: Նախ՝ ոտների ծայրերի վրա բարձրացած՝ ճգնեց ընկերներին գտնել. ձայնեց նոցա, բայց երբ տեսավ, որ իզուր էր այդ, համակերպությամբ սպասեց և սկսեց դիտել:

Մերկ մարդն այժմ կանգ էր առել բացված շրջանի մեջտեղը և ոստոստելով՝ երգում էր: Բոլորը ծիծաղում էին. մանավանդ որ երգողն այլանդակ, հրեշավոր ծամածռություններ էր անում. բերանը ահագնապես բացած՝ լեզվով խռպոտ թմբկահարում, կոկորդից ոռնոցներ վիժում և մեծ գալարումներով օդի մեջ ցատկոտելով՝ երգում էր.

Ջան, Ֆերրաշ, Մախմարի՛,

Մախմարի սեն, Մախմարի՛…

Անմիտ այդ երգը նորա բերնում հնչում էր այնքա՜ն ծիծաղաշարժ, որ պատանին իսկույն մոռացավ ընկերներին ու սկսեց սաստիկ զվարճանալ:

Այդ միջոցին էր, որ նա զգաց իր վզի վրա մի ինչ-որ տաք, գգվող շունչ և դառնալով՝ նկատեց երկու կանանց: Մեկը ավելի շքեղ հագնված, հարուստ հարեմի կին էր երևում, իսկ մյուսը, ավելի պարզ սավանով՝ աղախինն էր: (Երկուսն էլ ծիծաղում էին, և, որովհետև բազմությունը շատ խռնված էր, գրեթե կպել էին պատանուն):

Ֆերրաշ Մախմարին — այդ էր խենթ ոստոստողի անունը — դեռ շարունակում էր իր ծամածռություններն ու երգը: Անվնաս մի խենթուկ էր, որ նոր էր հայտնվել Թեհրանի փողոցներում: Սակայն նա հռչակ ուներ որպես լավ գուշակող. երգելուց, ոստոստելուց հետո, իբր թե, նա ընդունակ էր դառնում ճշգրիտ գուշակելու. մանավանդ որ փող էլ չէր պահանջում՝ առնում էր ինչ տալիս էին, գուշակում էր, եթե չտային իսկ:

Ու պատանին այժմ երկու զբաղմունք ունեցավ — խենթուկի ծամածռություններն և իրեն՝ հետևից սեղմող կանայք: Առիթ որոնեց խոսակցություն սկսելու մանավանդ պերճ սավանով կնոջ հետ, սակայն դեռ չէր համարձակվում. գիտեր, որ վտանգավոր բան էր այդպիսի բազմության մեջ խոսք ուղղել որևէ անծանոթ կնոջ:

Առիթը սակայն ինքն իրեն ներկայացավ: Աղախինն ասաց տիրուհուն.

— Խանում, կուզես քեզ համար էլ գուշակել տանք Ֆերրաշին. շատ ճիշտ բաներ է ասում:

— Հիմարություն…— արեց արհամարհությամբ տիրուհին,— խենթ է, ուրիշ ոչինչ…

Պատանին մի րոպե վարանեց, ապա դողդոջուն և ամաչկոտ դարձավ տիկնոջ և մեղմ ձայնով ասաց.

— Խանումն իրավունք ունի, ճիշտ խոսք ե՞րբ կարելի է լսել խենթից:

Կինը կռացավ և քողը շատ քիչ բարձրացնելով՝ զննեց պատանուն, հետո դարձավ իր աղախնին, կպավ նրա ականջին ու մի բան փսփսաց.

Աղախինն էլ կռացավ ու նայեց հետո երկուսն էլ լռեցին: Պատանին ոչ մի պատասխան չստացավ:

— Հիմա՞ր բան ասացի արդյոք,— խոսեց նա կարմրելով,— ներեցեք…

— Հըմ...— արեց աղախինը ու տիրուհուն նայեց:

— Գնանք,— ասաց տիրուհին աղախնի թևը բռնելով: Ապա երբ շարժվել էին, ավելացրեց հեգնորեն.

— Ասա այդ երիտասարդին, Ֆաթմա, որ շատ անգամ ճիշտ խոսքը միմիայն խենթի բերնից կարելի է լսել…

Ու մեջքը դարձնելով դուրս սահեց բազմությունից:

Պատանին կնոջ թարմ ձայնից գրավված, նայեց երկար նոցա հետևից, հետո ինքն էլ դուրս եկավ ու սկսեց հետևել:

Գիտեր, որ վտանգավոր բան է արածը, սակայն չկարողացավ զսպել իրեն. ուզում էր տեսնել կնոջ դեմքը. հեռվից էր քայլում, մինչև որ ստուգեց, թե ծառա չկա՞ր նրանց հետ: Երբ մտել էին շուկայի մի ուրիշ թև, ավելի մոտ գնաց և մտադրեց մինչև վերջը հետևել, մինչև որ կամ խոսեին և կամ գոնե տիրուհու դեմքը տեսներ որևէ կերպով:

Շուկայի խորքում երկու կանայք մտան մի խանութ: Պատանին հանկարծակիի եկավ: Խանութը ճոթեղենի էր, խանութպանն անծանոթ: Ինչպե՞ս ներս գնալ և ի՞նչ պատրվակով: Հետաքրքրությունը և ցանկությունը տեսնելու տիկնոջ — ավելի մեծանում էր. այժմ նա մոռացել էր իր ընկերներին, և մինչև իսկ գրպանի միջի չոր մրգեղենին էլ ձեռք չէր տալիս: Հեռու կանգնած, աչքը խանութի վրա, մի հնարք էր մտածում:

Այդպես նա քիչ ետ ու առաջ գնաց, կանգ առավ մոտակա մի խանութի մոտ, բայց ոչ մի հնարք դեռ գտնել չկարողացավ: Կանայքն էլ այնտեղ հանդարտ նստել էին և զննում խանութպանի մեջտեղ բերած կտորները: Ի՞նչ անել:

Շվարած շուրջն էր նայում, երբ զգաց, որ մեկը բռնում է իր թևը:

— Ի՞նչ կա, Միրզա Խոսրև,— լսեց նա մի հաստ ձայն,— փո՞ղ չունիս, թե մարդու ես սպասում:

Ծանոթ շահզադա էր, մի ընկեր:

— Ո՛չ,— ասաց երիտասարդը,— ուզում եմ մի կերպով մտնել այդ խանութը, բայց պատրվակ չեմ գտնում:

Շահզադեն նայեց և իսկույն հասկացավ, թե բանն ինչումն էր:

— Հը՞,— արեց նա ժպտալով,— այդ երկու կանանցից մե՞կը…

Խոսրևը գլխով դրական շարժում գործեց:

— Երեխա ես, ճշմարիտ,— գոչեց շահզադեն,— արի ինձ հետ:

— Բայց ի՞նչ պատրվակով,— շփոթեց Խոսրևը,— մենք խո կին չենք, որ ճոթեղեն առնենք:

— Հիմար ես, ահա թե ինչ. դու երևի Ալի աղային չես ճանաչում:

— Ալի աղան... Ո՞վ է այդ:

— Խանութի տերը... Մի շնծեր մոլլա է, որ շատ է սիրում գեղեցիկ երիտասարդների այցելությունը... Վատ բան չկարծես, ճարպիկ մարդ է. գիտե, որ գեղեցիկ տղամարդիկ իր խանութի մեջ նստած, կգրավեն կանանց և առևտուրը լավ կլինի... Գնանք այժմ, ես ծանոթ եմ այդ շնծերի հետ:

Հետո, առանց պատասխանի սպասելու, բռնեց Խոսրևի թևը և համարձակ մտավ խանութը:

Շահզադեն սակայն սիրուն տղամարդ չէր, հաստ, կարճլիկ, տգեղ քթով և չեչոտ այտեր. աչքերն իսկ ճարպոտ և փոքր էին: Թեհրանին հայտնի կնամոլ և զվարճասեր երիտասարդ էր, որ կյանքն անց էր կացնում քեֆերի և կանանց մեջ:

— Սալա՛մ□□□ Ալի աղա՛,— գոչեց նա ներս մտնելով,— թույլ կտա՞ս քիչ քեզ մոտ նստել, շատ հոգնած ենք, մանավանդ այս հետիս շահզադեն, որ դեռ պատանի է, այսքան փխրուն ու քայլելու անսովոր:

— Ալեյքումա-սալա՛մ, Մեհմեդ խան, համեցե՛ք, համեցե՛ք,— գոչեց Ալի աղան,— նստեք որքան կուզեք. ո՞վ է այդ սիրուն պատանին:

— Իմ բարեկամս է... բայց դու առևտուրդ արա խանումների հետ, մենք չենք ուզում խանգարել գործդ:

Կանայք նայեցին նրանց տիրուհին մի շարժում գործեց, կռացավ դեպի աղախինը և մի բան փսփսաց:

— Տասնհինգ արշին կտրեմ, խանում,— հարցրեց խանութպանն այդ միջոցին:

— Այո՛,— ասաց խանումը գրավիչ ձայնով,— սակայն թանկ ես հաշվում այս կտորը:

— Աստված էլ գիտե, որ վնասով եմ տալիս, խանում. բայց ձեզ թող ղուրբան լինի ողջ ունեցածս... Ուրիշ ինչ կիրամայեք. կուզե՞ք այս հնդկական դիպակից, լավ վերմակացու է. կամ այս թավիշներից, որոնցից ո՛չ մի տեղ չեք գտնիլ... անցյալ օր, ահա, այս շահզադեի մայրը 20 արշին տարավ…

— Շահզադենե՞ր են այդ տղաները,— ընդհատեց խանումը նրան և նայեց երիտասարդների կողմը:

— Ձեր ծառայության համար պատրաստ,— հանդգնաբար մեջ մտավ Մեհմեդ միրզան:

— Ես ձեզ հետ չխոսեցի,— ասաց խստությամբ խանումը, հետո դարձավ խանութպանին և ավելացրեց,— ո՛չ, չեմ ուզում. իսկ այդ աղային ասա, որ չհանդգնի ուրիշի կանանց հետ խոսելու:

Խոսրևը գունատվեց և տեղիցը շարժվեց ելնելու:

— Ի՞նչ մեղք արինք, խանում, որ մեզ վռնդում ես,— ասաց դարձյալ շահզադեն ժպտալով,— հոգնած մարդիկ ենք և եկանք քիչ հանգստանալու. բայց եթե կիրամայեք, կերթանք:

— Նստեցե՛ք,— ասաց հրամայական ձայնով կինը,— խանութը իմը չէ և ով կամենա կմտնի. բայց չեմ ուզում, որ ինձ հետ խոսես՝ երբ ես քեզ հետ չեմ խոսում... Ալի աղա, ցույց տուր ինձ ուրիշ դիպակներ ևս: Ցույց տվածդ ամբողջը կառնեմ, մի կողմ դիր:

Թե խանութպանը և թե շահզադեն հասկացան տիկնոջ ձևերը, դրա համար էլ ժպտուն՝ լռեցին: Իսկ Խոսրևն ամոթ զգաց և դառնալով շահզադեին՝ ասաց.

— Ես գնում եմ, դու կուզես՝ նստիր:

— Ո՞ւր է գնում այդ երիտասարդը,— բացականչեց կինը, որ լսել էր,— Ալի աղա՛, ասա, որ ես հրաման եմ տալիս մնալու. թեյ հրամցրու նրանց:

Շահզադեն ժպտաց և թևովը կպավ Խոսրևին ու աչքովն ակնարկեց՝ որ նստի:

Շուկայի ընդհանուր աղմուկի մեջ ո՛չ մի անցորդ ուշք չէր դարձնում նոցա և ոչ էլ լսում այդ խոսակցությունը: Խանութի մի ծառան թեյ բերեց: Խոսրևը հուզված՝ սկսեց խմել:

— Այս դիպակը…— խոսում էր կինը խանութպանին,— շատ լավը չէ, ցույց տուր թավիշներդ... Եվ ո՞վքեր են այդ շահզադեները, Ալի աղա. ո՞վ է այդ պատանին, որ համեստ է երևում. ինչո՞ւ չէ խոսում երբեք: Լավ, այս թավիշը հավանում եմ, բայց աղախինիս համար կառնեմ. ես չեմ հագնում

այսպիսի բաներ□□□ կարող ես ասել դոցա, որ խոսեն միմյանց հետ, բայց ինձ հետ ոչ... Ֆաթմա, հավանո՞ւմ ես այս թավիշը...

— Խոսիր, անմիտ,— ատամների միջից խոսեց շահզադեն Խոսրևին,— խոսիր, հիմա՛ր, մի բան ասա, չե՞ս տեսնում, որ կինն ուզում է խոսակցել քեզ հետ:

— Ի՞նչ խոսեմ...— դողում էր Խոսրևը,— որ երբեք չեմ եղել այդպիսի հանգամանքներում:

— Իսկ ի՞նչ են փսփսում այդ շահզադեները,— ասաց խանումը խստությամբ,— քաղաքավարի բան չէ այդ. ինձ վրա՞ են խոսում□□□ հրաման չե՛մ տալիս... Ֆաթմա, քիչ այսպես նստիր, շոգ է, ուզում եմ երեսս բաց անել. այնպես նստիր, որ այդ մարդիկ երեսս չտեսնեն…

Սակայն նա, երբ երեսը շրջած՝ քողը վերցրեց, դիտավորությամբ այնպես դարձավ, որ Խոսրևը տեսավ նրա հմայիչ գեղեցկությունը և կախարդող, ժպտուն սև աչքերը:

Կինը երկար նայեց պատանուն, մինչև իսկ քիչ ժպտաց, հետո մեկեն երեսը ծածկեց քողով և դարձավ խանութպանին:

— Ալի աղա,— ասաց,— շատ շոգ է այստեղ... Ծալիր այդ բոլորը և ուղարկիր Նասրուլլահ խանի տունը, Այիշե խանումի համար... իսկ ի՞նչ է այս շահզադեի անունը:

— Մեհմեդ խան...— շտապեց ստել շահզադեն, Խոսրևի խոսելուց առաջ:

— Ես քեզ չեմ խոսեցնում,— գոչեց կինը,— դու անամոթն ես երևում... Ալի աղա, ուրիշ անգամ չեմ ուզում, որ այդ անամոթն այստեղ գա, երբ ես գալիս եմ…

— Իսկ ե՞ս... — հարցրեց ամաչելով Խոսրևը:

— Դու կարող ես,— ասաց ավելի մեղմ ձայնով կինը,— դու անամոթ չես…

— Հը՛մ, հը՛մ...— մռմռաց շահզադեն,— ավելի լավ է ասես, որ սիրուն է…

— Մնաք բարև,— ելավ կինը,— ուղարկիր և փողը ստացիր:

Հետո պարուրվեց սավանի մեջ, մի անգամ էլ նայեց Խոսրևին և իջավ շուկան աղախնի հետ:

— Հետևից գնա՛, շուտ...— բոթեց շահզադեն Խոսրևին:

Պատանին առանց այն էլ ելել էր և երբ կանայք քիչ հեռացան, ցատկեց շուկայի մեջ և սկսեց հետևել նոցա:

Քիչ հեռու կանայք դարձան և նրան նայեցին, և այդպես բավական տեղ, մի քանի անգամ կրկնեցին նույն շարժումը:

Երկար նոքա շուկայից շուկա անցան և երբ հասել էին մի ավելի խուլ տեղ, մեկեն աղախինը ետ մնաց, սպասեց Խոսրևին և երբ սա մոտեցել էր, արագությամբ ասաց.

— Հետևիր մեզ և սպասիր մինչև ես գամ իմաց տամ... Խանում ուզում է խոսել քեզ հետ…

Ապա, որպես թե մի տեղեկություն էր հարցրածը, շնորհակալություն հայտնեց բարձրաձայն և առաջ անցավ:

Խոսրևը մի րոպե, սրտի ուժգին բաբախումից, կանգ առավ գունատ և հուզված: Անակնկալը խիստ էր:

Բայց երբ կանայք հեռացան, թոթվեց իրեն և արագ քայլերով, անցորդներին հրելով՝ գնաց նրանց հետևից:

Քիչ հետո փողոց ելան□ կանայք պատի տակից և Խոսրևը փողոցի մեջտեղից, ետ մնացած, սակայն գաղտագողի աչքը միշտ նրանց, գնաց ուր նոքա գնացին:

Բ

Ցերեկով կատարելապես լի երկար շուկաները, ամայի, մութ և դատարկ են լինում գիշերները:

Մթնանալուն պես, գրեթե բոլոր խանութները գոցվում են: Մնում են շարքերի ծայրերում միայն ընդեղենի կամ մրգեղենի մի քանի կրպակներ, որոնք ժամը 8-ից հետո նույնպես փակվում են: Ապա, այլևս ոչ ոք չէ մնում շարքերի մեջ, եթե ոչ՝ բազարում վխտացող բազմաթիվ շներն՝ իրենց անհամար լակոտներով: Տեղ-տեղ, միմյանցից շատ հեռու՝ ծխում են աղոտ փայլով ձեթե փոքրիկ ճրագներ և նրանց կողքերին կուչ են եկել պահնորդները, որոնք հսկում են խանութներին (դարուղաներ):

Ընդարձակ կամարների տակ հնչում է միայն շների ձայնը պահնորդները սակավ են միմյանց ձայն տալիս. բայց եթե որևէ ուշ մնացած անցորդ առանց լապտերի մտնե այդ մութ կամարների տակ, իսկույն շների ոհմակներն ամեն կողմից թափվում են նրա վրա կամ բզկտելու և կամ եթե անցորդը փայտով զինված է, անընդհատ հաչոցներով ընկերանում են մինչև շուկայից դուրս գնալը:

Սակայն դրանցից դուրս, շուկայի մեջ գիշերով անցնում կամ նրանց պատվանդանների վրա կծկված երևում են նաև ուրիշ տեսակ բնակիչներ, որոնք հին ու գզգզված վերմակ կամ կարպետ վրանին առած, սպրդելով մտնում են մթության մեջ, կծկվում մի անկյուն ու լուռ, անշարժ մնում մինչև լույս: Ոչ շներն են հաչում նրանց վրա, ոչ էլ պահնորդները տեսնել ձևացնում, թեև նրանց անցնելու ժամանակ ձայն են տալիս միմյանց և աչքի տակով զննում՝ թե ո՞ւր գնացին և ո՞ր կողմը կծկվեցին:

Շուկայի և խանութների համար նոքա անվտանգ մարդիկ են. շներն ու պահնորդները լավ գիտեն այդ. խեսփուշը /Խեսփուշ և ոչ թե խասփուշ: Խեսփուշ նշանակում է վատ, ցնցոտի հագնված, իսկ փասփուշ՝ լավ, թանկագին կտորներ հագած:/ գողանալ չգիտե, և եթե նա օպիում ծխողներից էլ է, անշուշտ մի մութ անկյունում կծկվելու և կամ քնելու է կողմնակի բաղնիքներից մեկի մոխրատան տանիքի վրա:

Այդպիսի տարօրինակ մի խեսփուշ էր նաև Սեյիդ խանը, որ Էմիրի շուկայի անկյունում, ըստ յուր սովորության, ժամը 7-ից սկսած արդեն, եկել կծկվել էր և անշարժ, կարծես ննջում էր: Փաթաթված էր աղտոտ, կապտագույն, հնամաշ վերարկուի մեջ. ալեխառն մորուքն ու մազերը հազիվ երևում էին, գլխին աղտոտ թաղյա գլխարկ, բոբիկ ոտներին՝ դիվե կոչվող կոշիկներ:

Չնայելով անշարժությանը՝ չէր քնել: Օպիումի մոլին այժմ գտնվում էր մի տեսակ անզգայության մեջ և աչքերը բաց՝ նստել դողում էր: Հազիվ ուրեմն շարժում էր աջ ձեռքը՝ մոխիրով ծածկելու համար կրակը, որ կողքին դրված կրակարանի մեջ պլպլում էր: Սեյիդ խանը, որպես ամեն օպիում գործածող, ամառ թե ձմեռ՝ մրսում էր:

Այդ միջոցին փակվում էին նաև շուկայի ծայրերում գտնվող մրգեղենի կրպակները. ուշ մնացած անցորդները շների ընկերակցությամբ դուրս գնացին և մի քիչ հետո լսվեց պահնորդների առաջին կոչը.

— Խաբեր դա՛ր /«Զգույշ եղիր»:/…

Երբ այդ առաջին ձայնի արձագանքը կամարների բախվելով մտավ մյուս անցքերի մեջ, մթությունից դուրս վիժեց նրան պատասխանող կոչը ուրիշ կողմից.

— Խաբեր դա՛ր…

Շները սկսեցին նորից հաչել, ապա իսկույն լռեցին, թեև շուկա էր մտել կապերտով փաթաթված մի երկրորդ անձ ևս, որ հանդարտ քայլերով անցավ պահնորդի առջևից և եկավ կանգնելու Սեյիդ խանի առաջ:

— Բարի երեկո, Սեյիդ խան:

Վերջինս առանց շարժվելու՝ ասաց.

— Սալե՛մ, Աքպե՛ր:

Հետո մի կողմ քաշվեց և տեղ տվավ: Աքպերը չբարձրացավ պատվանդանի վրա, այլ կռթնեց նրան և քիչ լռելուց հետո՝ ասաց.

— Սեյիդ Համզայի ավերակները գնանք, Սեյիդ խան:

Սեյիդ խանը լուռ՝ չպատասխանեց:

— Չե՞ս ուզում գալ,— կրկնեց Աքպերը:

— Ի՞նչ կա այնտեղ,— մրմնջաց Սեյիդ խանը,— ձանձրալի է:

— Շատերը կլինեն... Աղալար խանը, մոլա Նեջեֆկուլին…

Սեյիդ խանը քիչ էլ լռեց, հետո ծանրությամբ շարժվեց, ելավ, ոտները ցած կախեց պատվանդանից և ասաց.

— Գնանք: Միևնույն է. այստեղ կամ այնտեղ:

Երբ բոլորովին իջել էր, կրակարանը մոտ քաշեց, խնամքով մոխիրը հավաքեց առկայծող մի քանի կտոր կրակի վրա և դրեց պատվանդանի տակը գտնվող ծակի մեջ, ապա կուլ եկավ վերարկուով և առաջ անցավ:

Աքպերը նրա կողքից էր քայլում: Տասը րոպե լուռ ու հանդարտ՝ անցան նոքա մութ անցքերով՝ առանց մոլորվելու. այնպես որ կարծես՝ լապտերով էին քայլում, հետո ծռեցին դեպի Սեր-չեշմե և մտան ավելի լայն շուկա: Մի փուռի մեջ վառվող կրակը խոշոր եփուն լույսի շրջան էր գործում այնտեղ, թաց գետնի և սև պատերի վրա:

— Հաց են թխում վաղվա համար,— խոսեց Աքպերը,— անոթի չե՞ս Սեյիդ խան:

Սեյիդ խանը ուսերը թոթվեց.

— Կարծեմ... Բայց անոթություն չեմ զգում... Խեսփուշը միշտ անոթի է և... երբե՛ք չէ զգում:

— Իրավունք ունիս:

Նորից լռեցին: Շները նրանց տեսնելուն պես հաչում էին, երբ մոտենալով հոտոտում էին և ճանաչում՝ լռում էին: Մութը հետզհետե թանձրանում էր: Շատ հեռու խորքում երևում էին ձեթե ճրագները՝ մի տեսակ դեղին ամպի մեջ աղոտացած:

Երբ երկար լռել էին, Աքպերը կծկվեց իր կապերտի մեջ և ասաց փիլիսոփայորեն.

— Ասա տեսնենք, Սեյիդ խան. ինչի՞ց է, որ երբ անոթի ես մուրալ անգամ չես ցանկանում:

— Պարզ է,— խոսեց Սեյիդ խանը,— խեսփուշ ենք, խեսփուշը մուրալ չգիտե. եթե պետք ունի՝ առնում է:

— Իսկ եթե չտա՞ն:

— Առնում է,— պնդեց Սեյիդ խանը առանց շեշտի, հավասար ձայնով:

— Հըմ,— արեց Աքպերը,— իրավունք ունիս...

Ապա նորից մտածեց քիչ և հարցրեց.

— Իրավացի՞ է, օրինակ, Սեյիդ խան, որ մեր ընկերները — Ջավադը, Իսմայիլ խանը այժմ իրենց տներում քնեն, իսկ մենք՝ ավերակների մեջ:

— Իրավացի է,— պնդեց Սեյիդ խանը,— մենք խեսփուշ ենք:

Հետո, երբ ընկերը սպասում էր, ավելացրեց.

— Մենք էլ պառկել ենք մեր տներում: Բայց այժմ... Միևնույն է... Մենք ավելի երջանիկ ենք. կորցնելու ոչինչ չունենք…

Երևի Աքպերը այլևս չկարողացավ այդ ուղղությամբ մտածել կամ նրա ասածներին առարկել, որովհետև փոխեց.

— Այսօր ծխե՞լ ես,— հարցրեց նա:

— Ծխել էի…

— Ե՞վ…

— Մենք ապրում ենք՝ քնած ժամանակ:

— Իսկ ի՞նչ ես մտածում այժմ:

— Որ զարթնում եմ...

— Իրավունք ունիս:

— Այնտեղ ափիոն չի՞ լինի:

— Գուցե:

Նորից լռեցին: Բայց այս անգամ ընդհանուր լռությունը մեկեն խանգարվեց: Շուկայի բերնի կողմից հանկարծ լսվեց շների բուռն հաչելու, ապա պահնորդի ձայնը,— խաբեր դա՛ր…

Սեյիդն ու Աքպերը կանգ առին. լսվում էր վազող ոտների ձայն թաց գետնի վրա. շները հետապնդում էին, իսկ պահնորդները իրար անցած՝ անընդհատ գոռում էին միմյանց.

— Ո՞վ պիտի լինի,— մռմռաց Աքպերը:

— Կտեսնենք:

Վազողը մոտենում էր: Բանն այն է, որ շներից բացի, ոչ մի հետապնդող չկար. պահնորդները իրենց տեղերում կանգնած էին միայն գոռում, իսկ վազողը հալածվածի նման կարծես փախչում էր:

Երբ հավասարվել էր խեսփուշներին, Աքպերը մթան միջից քիչ հառաջացավ, ոտը դեմ տվեց և վազողը արգելքի հանդիպած՝ փռվեց գետին: Շները հարձակվեցին, բայց Սեյիդ խանը աքացիներով վռնդեց նրանց:

Մինչ այդ, Աքպերը բռնել էր ընկնողին թևից և ճգնում էր մթան մեջ իմանալ, թե ով էր:

— Խեսփուշ է,— ասաց քիչ հետո.— ապա ելիր, մարդ, ո՞ւր ես փախչում:

Ձայնից կամ շարժվածքներից գուցե, ընկածը իմացավ, որ խեսփուշների հետ գործ ունի: Ելավ, տրորեց ծնկները և գոչեց.

— Ինչո՞ւ եք արգելք լինում ինձ, մարդիկ. ես խո գող չեմ:

— Ավելի լավ. ո՞ւր էիր վազում:

— Աղան հրամայեց Սեյիդ խանին գտնել:

— Հը՛մ,— արեց Աքպերը,— այդ ի՞նչ աղա է, որ աղայի գտնել է հրամայում:

— Մոլա Նեջեֆ-կուլին:

— Սեյիդ Համզայի՞ց ես գալիս:

— Այո՛, իսկ դո՞ւ ով ես:

— Ի՞նչ է եղել այնտեղ,— հարցրեց Սեյիդ խանը՝ առաջ գալով:

Խեսփուշը ճանաչեց նրան:

— Աղեն խնդրում է քեզ անմիջապես գալ, մոտ 20-30 մարդ է հավաքվել այնտեղ:

— Փլատակների մե՞ջ,— հարցրեց Աքպերը,— ի՞նչ կա որ, նոր բա՞ն է եղել:

— Սպանված են գտել:

— Սպանվա՞ծ…

— Սեյիդ Համզայի մեջ ձգված,— շարունակեց խեսփուշը,— կուրծքը դաշույն խրած... լավ հագնված մարդ... ճիշտ փլատակների մեջ□□□ Աղան խնդրեց, որ Սեյիդ խանը շուտ գար:

— Ես դատավո՞ր եմ…

— Ոչ ոք չճանաչեց սպանվածին…

— Հը՛մ...— մռմռաց Աքպերը,— Սեյիդ խանը կճանաչի՞:

— Աղեն ասում էր, որ Սեյիդ խանը հին խեսփուշ է…

— Իրավունք ունիս,— ասաց Սեյիդ խանը,— շահը դեռ նոր էր գահ նստել... գնանք, ես կճանաչեմ:

Ու սկսեցին քայլել. շները լռում էին□ պահնորդներից մեկը, որին երևի ուղարկված էր գաղտնապես տեսնելու, թե ո՞վ էր եկողը, այժմ, երբ տեսավ, որ երեք խեսփուշ են անցնում, լռեց և քաշվեց մթան մեջ ու թողեց անցնելու:

Բայց այնքան հեշտ չեղավ նոցա անցքը շուկայի բերնի մոտ: Այնտեղ պահնորդը նրանց առաջը կտրեց և գոռաց.

— Ո՞վ է այն:

— Ձայնդ կտրիր, ախմախ,— գոչեց նրա երեսնիվեր Աքպերը,— չե՞ս տեսնում, որ խեսփուշ է…

Պահնորդը ապշած՝ մոտեցավ ավելի լավ տեսնելու:

— Ո՞վ է այն, ասում եմ,— կրկնեց նա փայտը բարձրացնելով:

— Ասացին քեզ, որ խեսփուշ է,— գոռաց մեկեն Սեյիդ խանը և դեն հրեց նրան:— Անպիտան, վաղո՞ւց է, որ Սեյիդ խանին չես ճանաչում:

Պահնորդը քաշվեց և թողեց անցնելու:

Շուկան դեպի աջ, զանազան ծուռումուռ թաղերով՝ հանգում էր նեղլիկ, ցեխոտ ու գալարուն փողոցներով աղտոտ թաղի, որ Սեր-չեշմե է կոչվում: Խեսփուշների այնտեղ մտած ժամանակ բոլոր փողոցները ամայի էին. միմիայն շներ կային ամեն պատի տակ, որոնք աղաղակներով ընկերանում էին նոցա մինչև իրենց թաղի գլուխը, ապա թողնում, որ անցորդները մտնեն մյուս թաղի շների աղմուկի մեջ:

Բայց այդ բոլորը անդրդվելի էին թողնում խեսփուշներին, որոնք պարուրված իրենց ցնցոտիներով, հանդարտ, չափված քայլեր էին անում, անխտիր կոխում ցեխ, ջուր, աղբակույտ. ոչ իսկ շարժում էին գործում հետևից խմբովին եկող և աղմկող շներին քշելու. մթան մեջ ճանապարհը շատ լավ գիտենալով՝ հետզհետե մտնում էին թաղի ավելի խուլ, աղտոտ ու նեղ փողոցները:

— Իսկ ե՞րբ է ձգված դիակը,— հարցրեց Սեյիդ խանը, երբ խրված մի ցեխակույտի մեջ, համակերպությամբ, առանց տրտունջի՝ ճգնում էր կոշիկը չթողնել այնտեղ:

— Այսօր չէ համենայն դեպս,— ասաց եկվոր խեսփուշը,— ամենից առաջ այնտեղ եկող խումբն է տեսել... Աղան է եղել... Իսկույն մարդ է ուղարկել շատերի իմաց տալու, որ գան, որովհետև ամենքը գիտեն, որ Սեյիդ Համզան մեր հավաքվելու տեղն է և եթե դիակը գտնեն՝ կկարծեն թե մենք ենք սպանել:

— Հը՛մ...— արեց Աքպերը,— չէիք կարող վերցնել և տանել ձգել մի ուրիշ փլատակի մեջ, օրինակ, հենց դարբասի փոսերում:

— Նախ, որ տանելիս կտեսնվեր և երկրորդ, որ աղեն չթողեց:

— Աղան բա՞ն է մտածում դիակի մասին:

— Չգիտեմ. բարկացած էր. հայհոյում էր թագավորին, սադրազամին□□□ բոլորին:

— Հը՛մ...— արեց Սեյիդ խանը,— սպանվածը երիտասա՞րդ է:

— Բոլորովին երիտասարդ:

— Հասկանում եմ ուրեմն:

Եվ չնայելով մյուս երկու խեսփուշների սպասողության, որ Սեյիդը բացատրեր ասածը՝ լռեց ու շարունակեց ճանապարհը՝ այս անգամ քայլելով ջրալի ցեխի մեջ, որ գոյացել էր փողոցի միջի աղտոտ առվակից:

— Սպանվածը պատանի՞ է,— ավելացրեց խեսփուշը, կամենալով Սեյիդ խանին խոսեցնել:

— Այո...— մռմռաց Սեյիդ խանը և ապա հանկարծ ավելացրեց խուլ ձայնով.

— Սեյիդ խանը չէ հրավիրվում դիակը ճանաչելու:

— Ապա՞.... վրա տվավ Աքպերը հետաքրքրությամբ:

— Հասկանում եմ դարձյալ,— ասաց Սեյիդ խանը անվրդով ու դարձյալ լռեց:

Մյուս երկուսը հուսահատվեցին Սեյիդ խանին խոսեցնելու փորձեր անելուց և լուռ՝ քայլեցին նրա հետևից:

Շուտով դուրս եկան ձիաքարշի գծի վրա. այստեղ շները նրանց հանգիստ թողին. ցեխ էլ չկար: Սեյիդ խանը արագացրեց քայլերը:

Գծի ծռված տեղում նա մի անգամ ևս դարձավ հրավեր բերող խեսփուշին և հարցրեց.

— Կողոպտվա՞ծ է…

Խեսփուշը հասկացավ, որ խոսքը դիակի մասին էր:

— Ո՛չ... վրան գտնվեց ոսկի ժամացույց և մի քսակ ոսկի…

— Ահա՛ թե ինչ,— մռմռաց Սեյիդ խանը,— ոսկի ժամացույց... քսակ ոսկի՛... հասկանում եմ…

Գ

Ժողովը բազմամարդ էր փլատակների մեջ: Ընտրել էին ավերակ մզկիթի ամենալայն մասը, ուր դեռ կային չորս պատեր և գետնի վրա ընկած քարեր ու սալեր, առաստաղը չկար. աստղալից երկինքն էր փայլում վերևում:

Պատերից մեկի փլվածքից ներս էին մտել այդ այլանդակ դեմքերով բազմազան ցնցոտիներով մարդիկ և տեղ բռնել զանազան կողմերում խառնիխուռն, իրար մոտ կկզած, պառկած, թիկն տված կամ հետույքի վրա նստած, ծնկները ցցած, գլուխնին ծնկների ծայրին կռթնեցրած: Ոչ մի

լույս չէր վառված. մթության մեջ պլպլում էին երբեմն չիբուխների եփուն կայծեր, երբեմն էլ մի վառվող լուցկի ի ցույց էր հանում մի գիսախռիվ, սև և այլանդակ դեմք և իսկույն հանգում:

Չէին խոսում բարձրաձայն. խուլ փսփսոց, փոքրիկ շշուկ,— ահա բոլորը:

Ոչ ոքի դեմքը պարզ չէր երևում. սև ուրվականների էին նման՝ որոնք շարժվում էին այս-այն կողմ:

Պատի՞ թե առաստաղի փլվածքից մի խոշոր կտոր գլորված՝ ընկել էր մուտքի մոտ և այդ խոշոր, բարձր կտորի վրա նստած կային երեք անձեր: Երկուսը՝ չոր ու երկար, մյուսը՝ կլորիկ ու աբայի մեջ փաթաթված. երևում էր երբեմն նրա գլխին սպիտակ ապարոշը: Եվ երեքն էլ ծխում էին. երեքի բերնի մոտ էլ պլպլում էին չիբուխների կայծեր և նրանց կարմրության մեջ պահ մի օձապտույտ ելնում էին երեք սև ծուխի սյունակներ:

Դրսումն էլ ոչ մի աղմուկ: Ավերակը բնակություններից հեռու, բազմաթիվ փլատակների խորքումն էր և գիշերվա այդ պահուն ոչ ոք չէր համարձակվիլ մտնել քաղաքի այդ փլատակների մասը: Շներ իսկ չկային: Թաղը վաղուց ամայի էր, գտնվում էր Շահաբդյուլազիմի դարբասի մոտերը և ոչ մի օգուտ չէր ներկայացնում շների համար:

Եվ հետզհետե, ընդհանուր լռության մեջ, փլվածքից ներս էին լցվում սև ստվերներ, անխոս անցնում, խառնվում էին գետնի վրա նստածների մեջ լայն ավերակը լցվում էր ցնցոտիազգեստ ամբոխով:

Վերջապես փլվածքի խոշոր կտորի վրա նստողներից միջինը հանեց բերնից չիբուխը, խփեց նրա գլուխը իր մոտի քարին, դատարկեց մոխիրը և կարծես ընդհատված մի խոսակցություն շարունակելով՝ գոչեց.

— Մարգարե՛ն վկա թող լինի... համբերությամբ տարինք ամեն բան. մեզ կեղեքեցին, մեզ զրկեցին ամեն իրավունքից, մեզ հոշոտեցին, տանջեցին, մեզ մի օր, մի ժամ հանգիստ չթողին մեր ցավերի հետ. մեր որդիներին էլ, այժմ ահա այդպես, դաշունահար, ո՞վ գիտե ինչպիսի անզգամ գործից հետո, բերում ձգում են խեսփուշների հավաքատեղին, որ վաղը մեզ բոլորիս բռնեն՝ բանտերում փտեցնեն և ասեն թե խեսփուշները մարդասպան են, կողոպտող են…

Ոչ ոք չպատասխանեց. չիբուխների կայծերը միայն պլպլացին այս-այն կողմ, լուռ ու անշարժ բերաններ ու դեմքեր լուսավորելով:

Խոսողը սպասեց մի վայրկյան, հետո ապարոշը վերցնելով սրբեց գլուխը և ավելի մեղմ, վշտալի ձայնով շարունակեց.

— Իհարկե կլռեք, երբեք ձայն չեք հանիլ, կհամրանաք ձկան նման□□□ կկրեք ամեն բան, խեսփուշներ. թող ձեր ամեն բանը, ձեր ստացվածքը խլեն…

— Ստացվա՞ծք...— լսվեց մթան միջից մի ծաղրող ձայն:

— Ճիշտ է, ծաղրող շուն,— գոչեց ուժգնաբար ճառողը, որ կարծես մի առիթ էր սպասում ավելի բարկանալու համար:— Ճիշտ է. դուք և ես ստացվածք բառի մասին գաղափար չունինք, որովհետև ոչինչ չունինք. բայց, դո՛ւ, քոսոտ մուրացիկ, դու պատի՞վ էլ չունիս, դո՛ւ սի՞րտ էլ չունիս... իսկ այդ երկու բանը քո ստացվածքը չե՞ն, շան զավակ... Եթե այժմ էլ կծիծաղես, ես քեզ շանսատակ կանեմ այս սրբատեղիի խոշոր քարերով... Խոսիր, փետեր սուխտա /«Հայրդ այրված». մի սովորական հայհոյանք է:/, ինչո՞ւ ես լուռ…

— Աղան շատ է բարկացած,— լսվեց հանկարծ մի ձայն մուտքի կողմից,— աղան հայհոյում է վատ կերպով: Ճիշտ է, մեր լեզուն էլ մեր ստացվածքն է, բայց և ականջը նույնպես, որ չպիտի հարստահարել...

Ճառախոսը կատաղեց, շարժվեց ոտքի ելնելու, ոչ ոք չգիտեր, թե ինչով խփեց ծնկան և ասաց.

— Ո՞վ էր խոսողը:

— Ես էի,— ասաց ձայնը և առաջ եկավ՝ զատվելով մուտքի մոտից,— ես էի, Սեյիդ խանը:

— Սեյիդ խան...— ձայնեց ուրախությամբ և բոլորովին մեղմանալով ճառախոսը,— եկար ուրեմն: Այստեղ, վեր համեցեք դեռ... Իրավունք ունիս, այս երեկո իմ ականջը չէ լսում իմ բերնի ասածը... այս երեկո ես կատաղած եմ…

— Հասկանում եմ... սպանվածը պատանի է ուրեմն:

— Բոլորովին պատանի,— ասաց ճառախոսը դողդոջուն ձայնով,— բոլորովին... Մի անմեղ, մի սիրուն տղա…

— Հասկանում եմ... Տեղ տվեք ինձ.. Ո՞ւր է դիակը:

— Այստեղ է,— լսվեցին մի քանի ձայներ ցածի կողմից:

— Կմորթեմ, եթե մի բան պակասել է վրայից,— դարձավ ճառախոսը հանկարծ դեպի այն կողմը:

— Խեսփուշը գող չէ,— գոռաց մի ձայն,— ասելիքդ ասա:

Բայց ոչ ոք նրան չպատասխանեց. բարձրության վրա տեղի ունեցավ մի շարժում: Սեյիդ խանն էր տեղավորվում մոլլա Նեջեֆի կողքին. մյուսները քիչ ետ էին քաշվում:

— Չիբուխ կուզե՞ս,— հարցրեց մոլլա Նեջեֆը:

— Լեցուր:

Աքպերը և մյուս խեսփուշը խառնվեցին գետնի վրա նստողներին, որոնց մեջ այժմ սկսեց շշուկ բարձրանալ, որովհետև Աքպերը հարցուփորձ էր անում եղածի մասին:

— Լռություն այդտեղ,— գոչեց բարձրից մոլլան,— ես դեռ չեմ վերջացրել…

— Դեռ չես էլ սկսել,— միջամտեց Սեյիդ խանը,— ճառդ թող հետո. փաստը ցույց տուր մեզ. ասա եղածը:

— Եղածը սա է,— դարձավ դեպի նա մոլլան,— մտնում ենք այստեղ մեր սովորականի կերպով: Վեց հոգի ենք: Տեղավորվում ենք մի անկյուն, երբ մեզնից մեկը, կարծես Հասանն էր...

— Ալին էր,— լսվեց մի ձայն վարից:

— Ալին թող լինի... կպչում է մի բանի և երեսի վրա ընկնում մի այլ փափուկ բանի վրա ու զգում, որ երեսին կպածը քար չէր՝ բայց սառն էր: Վառում ենք լուցկի, տեսնում ենք դիակ□ դիակ՝ կրծքի մեջ խրված մի դաշույն, մեռած և այսօր սպանված անշուշտ: Այո՛, չէ հոտել, բայց արյուն էլ չէ մնացել: Կողոպտված չէ. ոսկի ժամացույց, քսան ոսկի... լավ հագուստ□□□ և□□□ պատանի՛, առույգ, ծաղիկ հասակում:

Այստեղ մոլլայի ձայնը դարձյալ դողաց ու նա խորին վշտով շարունակեց.

— Չորանա այն ձեռքը, որ կտրում է կոկոնը... Կոկոն է կտրված, վարդի շքեղ թարմ կոկոն և ով գիտե, որպեսի աղտոտ կերպով բռնաբարելուց հետո...

— Մի՞թե բռնաբարված է…

— Չգիտեմ... Ինչո՞ւ ուրեմն սպանել այդպիսի մի անմեղ, հրեշտակի դեմքով պատանու և այն էլ այստեղ ձգել, այստեղ սրբատեղիի մեջ... Աստված է վկա, եթե բաբիներին չճանաչեի, կասեի, որ նա նոքա են... Բայց, էյ, խեսփուշներ, եթե չգիտեք դուք, ես կասեմ ձեզ, որ ոչ մի բաբի դեռ չի տվել ավազակ այնքան անգութ, մարդասպան այնքան ստոր, որ թափեր մի կոկոնի տերևները, խավարեցներ այդպիսի մի երիտասարդ արև... ո՛չ մի բաբի. ո՛չ մի գեբր, այո□□□ Ամեն կեղտ, ամեն ստորություն միմիայն մյուսիլմանն է անում այս անիծյալ տերության մեջ... Երդվում եմ մարգարեի մորուքով…

— Ցույց տվեք ինձ դիակը,— ցած իջավ Սեյիդը բարձրությունից և գնաց դեպի խավար անկյունը,— ո՞վ լուցկի ունի, թող վառի դիակի դեմքի մոտ:

Տեղի ունեցավ մի թեթև իրարանցում, հետո լսվեց լուցկու ձայն և փլատակի աջ անկյունում ցոլաց մի լույս: Սեյիդ խանը մոտ գնաց և կռացավ:

Գետնին, երեսի վրա պառկեցրած էր մի գեղեցկադեմ պատանի, խիստ գունատ, աչքերը բաց և սոսկումով լի:

Հագուստը թեև ցեխոտ էր, բայց ճոխ: Իսկ, որը քստմնեցուցիչ էր, ձախ կուրծքի վրա բացված մի խոշոր վերքից, դաշույնի տակով դուրս էր բխել արյունի հոսանք և սևացել, ծածկել էր կուրծքը: Դաշույնը մինչև երախակալը մնում էր վերքի մեջ:

Սեյիդ խանը պահ մի նայեց դեմքին, զննեց շորերի փոշին ու ցեխը, գլուխը երկարացրեց, փլատակի գետնին նայեց, ապա խնդրեց մի լուցկի ևս վառել և, երբ շատ գլուխներ կռացել էին դեպի նա՝ լուցկիի լույսի մեջ, քանդեց դիակի վերարկուն, բռնեց դաշույնի երախակալից և բուռն շարժմամբ հանեց կուրծքից:

Ոչ մի կաթիլ արյուն ո՛չ վերքից և ո՛չ իսկ դաշույնից:

— Ուղղակի սրտին...— մռմռաց նա,— և լավ խփված…

Ապա դաշույնը ծոցը դրավ ու ավելացրեց.

— Լավ□ տեսա ինչ որ ուզում էի... Հասկանում եմ…

Եվ երբ վերադարձել էր մոլլայի մոտ, մի րոպե լուռ ու մտախոհ նստել, երբ բոլորը անշշուկ սպասում էին նրա խոսելուն, մոլլան հարցրեց.

— Տեսա՞ր…

Սեյիդը մի վայրկյան ևս լռեց և ասաց.

— Տեսա□□□ Սպանված է հեռու, ձգված է այստեղ դիտմամբ: Ձգողը գիտե, որ խեսփուշների ժողովատեղին է այս. կամեցել է իր մեղքը մեր վզին փաթաթել... Դաշույնը պարզ դաշույն է. ո՛չ մի բռնաբարություն... սպանված է անհայտ պատճառով... թողեք մտածել…

Ապա մեկեն գոչեց.

— Ո՞վ ափիոն ունի...

— Այստեղ,— ձայնեց մեկը:

— Իսկ բաֆո՞ւր…

— Չկա. ուտելու համար է:

— Լավ, մի նոխուդ տուր... Պետք է լավ մտածել: Սեյիդ խանը ուզում է զարթնել և մտածել...

— Մի՞թե Սեյիդ խանը զարթուն չէ,— հարցրեց մի ձայն:

— Ո՛չ... քնած է. տվեք ափիոնը... Ո՞վ կարող է ասել. ո՞րն է Սեյիդ Համզային ամենամոտ մեծավորի տունը…

— Նասրուլլահ խան…

— Հը՛մ... Կարող են և հեռվից բերած լինել:

— Առանց տեսնվելո՞ւ,— ասաց մոլլան:

— Իրավունք ունիս... Գաղտնիքը այս Նասրուլլաի խանի տան մեջ է: Թողեք ես մտածեմ, թե ո՞վ է նա... Այո՛... գանձապահ, շատ հարուստ□□□ որդիների և կանանց տեր... Հը՛մ, հը՛մ... ինքը ծեր, բայց լիրբ մարդ... Սակայն պատանին բռնաբարված չէ…

Ու հետզհետե ավելի մեղմ ձայնով սկսեց ինքն իրեն դատել, մտածողությունները կցկտուր արտահայտել, սակայն այնքան ցած ձայնով, որ մոլլան իսկ այլևս չէր հասկանում նրա մռմռոցները:

Պահ մի լռություն տիրեց փլատակներում, դարձյալ վառվեցին չիբուխներ. մոլլան լուռ՝ վառած չիբուխը պարզեց Սեյիդին. սա առավ, ծխեց մի քանի կում և դարձյալ սկսեց քթի տակ մռմռալ:

— Թողնենք, որ Սեյիդ խանը, որի մեզնից խելոք ու փորձված լինելը լավ գիտենք՝ մտածե ու լուծե հանելուկը,— խոսեց դարձյալ մոլլան,— թողնենք նրան մտածելու, բայց ինքներդ էլ լսեցիք, որ այս բանը կատարվել է դիտմամբ՝ մեզ, խեսփուշներիս վնասելու նպատակով…

— Ո՛չ...— միջամտեց Սեյիդ խանը հանկարծ,— ո՛չ դիտմամբ մեզ վնասելու, այլ հանցանքը ուրիշի վրա ձգելու, ով որ էլ լիներ այդ ուրիշը... Ամենամոտ տեղն են ձգել այդ դիակը և ընտրել այնպես տեղ, դեպի որը մի դիակ տանելիս՝ ոչ ոքի հանդիպել չէ կարելի գիշերով... այո՛, այդպես է եղել…

— Համենայն դեպս խեսփուշները, մենք, մնում ենք պատասխանատու: Դիակը կամ պիտի թաղել այստեղ և լռել անցնել և կամ... Բայց խեսփուշը գաղտնիք չէր սիրում. այստեղ կանք ավելի քան 30 հոգի, վաղը Թեհրանի 30 տեղում կիմացվի, որ Սեյիդ Համզայում դիակ է գտնված... կգան ֆերրաշները և կսկսեն մեզ բոլորիս բռնել մեկ-մեկ:

— Մենք կլռենք...— ձայնեցին ամեն կողմից:

— Լռե՞լ...— գոչեց մոլլան զայրացկոտ,— լռե՞լ... Ո՛չ, բավական է լռել: Պետք է գոռալ այժմ, պետք է մզկիթների, հրապարակների մեջ գոռալ, որ մեծամեծները մորթում են ժողովրդի զավակներին — դիակները ձգում խեսփուշների բնակարաններում և իրենք անպատիժ մնում... Պիտի գոռալ, որ նոքա մեր մեջ այլևս պատիվ չթողին, որ չխլեն, սիրտ չթողին, որ չպատառոտեին... և, ասում եմ ձեզ, դիակի վրայից ոչինչ չկորսվի պիտի□ մենք կապացուցենք դրանով միայն, որ մենք չենք մարդասպանը, գողը, ավազակն ու հարստահարողը, այլ այդ մեծամեծները, պաշտոնյաները, այդ վեզիր-վիզարեթը, այդ բոլոր պաշտոնական կողոպտողներն ու ավազակները... Այո, պիտի գոռալ, կանչել այնպես գոռալ, որ մարգարեն իր գերեզմանում դողա, թագավորը իր գահի վրա, մեծամեծները իրենց հարեմներում…

— Ավելորդ բաներ...— ասաց Սեյիդ խանը,— ճառ ավելորդ. գործ պետք է... Բայց Սեյիդ խանի ուղեղը չէ գործում... Տվեք ափիոնը: Սեյիդ խանը փորձում է դիակի վրա մտածել, բայց ափիոնին է խելքը, ափիոնին՝ որ այդ մարդի գրպանումն է□□□ Տո՛ւր ափիոնը,— գոչեց նա հանկարծ ավելի ուժգին և շարժվելով,— տո՛ւր, թե չէ՝ ես կառնեմ…

Ու այնքան զայրացկոտ էր նրա շարժումը, որ մոլլան իսկ վախեցավ: Մոլի ծխողի ցանկությունը զարթնել էր Սեյիդ խանի մեջ. գուցե և խեղդեր ափիոն ունեցողին, եթե նա չտար:

Բայց խեսփուշը շարժվեց, մոտեցավ և դրեց Սեյիդ խանի ափում մի կլորիկ դեղահատ, որ իսկույն ընկավ Սեյիդի բերանը:

— Այսպես...— ասաց նա աշխուժացած ու ավելի կենդանի ձայնով:— Այժմ Սեյիդ խանը երկար չի մտածիլ, որովհետև նա ձեզ ահա թե ինչ խրատ կտա…

Բայց այդ միջոցին հանկարծ մուտքի կողմից լսվեց մի քարի գլորվելու ձայն և պատի փլվածքի վրա հայտնվեց մի երկար ստվեր՝ սպիտակ պարեգոտի մեջ ծածկված:

Բոլորը ապշած ու լուռ այն կողմը նայեցին: Ստվերը պահ մի անշարժ զննեց բոլորին, հետո ցնցեց սպիտակ երկար վերարկուն և ծանրաքայլ իջավ դեպի խեսփուշները:

Եկողը խեսփուշ չէր, ոչ էլ մուրացիկ: Ավելի դերվիշի էր նման. հարուստ հագնված դերվիշի, որովհետև մինչև ոտները հասնող վերարկուն ձյունի պես սպիտակ էր ու մաքուր: Գլխին կրում էր գորշախառն ապարոշ, որին խեսփուշները դեռ որոշել չէին կարողանում՝ թե ինչ տեսակ գլխարկ է:

Մոլլան, Սեյիդ խանն իսկ կռացել, հետաքրքրությամբ զննում էին ներս մտնողին:

— Խեսփուշնե՞ր եք այստեղ, թե գողեր կամ ավազակներ,— ասաց եկողը զիլ ու արծաթահնչուն ձայնով՝ կանգ առած դեռևս հատակից բարձր մի քարի վրա:

Ոչ ոք ձայն չհանեց. չիբուխներն իսկ չէին առկայծում: Սեյիդ խանը սակայն, որ սկսում էր քիչ կենդանանալ, բոլորովին թմրության մեջ ընկնելուց առաջ, ոտքի ելավ և կամենալով մոտից տեսնել նոր անձին, իջավ պատվանդանից ցած:

— Ուրեմն սխալված եմ եղել,— շարունակեց նորեկը,— ինձ ասել են, որ այստեղ կգտնեմ խեսփուշների…

— Իսկ դու ո՞վ ես,— հանկարծ ձայնեց նրա երեսն ի վեր Սեյիդ խանը, որ մոտեցել էր նորեկի կանգնած քարին:

— Մի աստծո արարած, որ կամենում է խոսել խեսփուշների հետ:

— Խոսի՛ր,— ասաց իր նստած տեղից մոլլան,— բոլորս այստեղ խեսփուշներ ենք... և, վայ քեզ, եթե որևէ վատ մտքով ես մտնում մեր մեջ... նախքան խոսելդ, եկ այս կողմ, ինձ մոտ, որ տեսնենք քո երեսը:

Նորեկը լռությամբ իջավ քարից և քայլեց դեպի մոլլայի բարձրությունը: Երկարահասակ էր ու նիհար. հագած էր բոլորովին սպիտակ և այժմ, երբ անցնում էր խեսփուշների միջով, մի քանի վառվող լուցկիներ պարզված դեպի նա, ցույց տվին համակրելի դեմքով մի երիտասարդի, որ նախ՝ բոլորովին անզեն էր և ապա, մի հպարտ ժպիտ դեմքին, ինքնավստահ քայլերով մոտեցել մոլլա Նեջեֆ-կուլիին, ինքն էլ փոխադարձաբար, վառվող լուցկիի լույսով, զննում էր բարձրության վրա նստած անձերին:

— Դու մոլլա Նեջեֆն ես,— ասաց նորեկը մատը պարզելով դեպի մոլլան,— ես քեզ ճանաչում եմ:

— Շատ կարելի է, ինձ ամենքը ճանաչում են Թեհրանում, իսկ ի՞նչ է քո անունը:

— Սեյիդ Հաբիբուլլահ…

— Լավ ուրեմն, Սեյիդ աղա, ահա մի տեղ իմ կողքին, եկ նստիր և եթե խոսելու բան ունիս խեսփուշներին՝ սկսիր. այստեղ է խեսփուշների ամենալավ մասը:

Մինչ այդ Սեյիդ խանը մնացել էր իր իջած տեղում. թմրությունը սկսել էր, օպիումը կատարում էր իր գործը. մի քանի րոպեից հետո կծկվեց նա քարի կողքին և մինչ նորեկը սկսում էր խոսել, ափիոն ծխողը ընկնում էր երազների մեջ:

Մյուս բոլոր խեսփուշները խիստ հետաքրքրված, փոքր-ինչ կասկածավոր, ականջները սրած՝ սպասում էին, թե ինչ կասեր անծանոթ սեյիդը, որին ոչ ոք չէր հիշում որևէ տեղ տեսած լինելը:

— Դու թեհրանցի չես,— ասաց մոլլան նրան,— ես քեզ երբեք չեմ տեսել. որտեղի՞ց ես գալիս:

— Խելարդեշտից... ծովի ափերից ո՛չ հեռու, Դեմավենդի ստորոտներից. բայց ես մի ամիս է, որ Թեհրան եմ և մի ամբողջ ամիս է, որ զննում եմ ժողովրդի, ձեր բոլորի կյանքը... Դուք խեսփուշներ եք, այդ ես գիտեմ. բայց մի՞թե խեսփուշին հարկավոր է անպատճառ մնալ միշտ այդպես թշվառական ու ողորմելի, եթե ոչ սողոսկող, գոնե միշտ մութ ու խուլ տեղեր փնտրող արարած: Չէ՞ որ խեսփուշն իր ցնցոտի հագուստի տակ ունի մի համարձակ, վեհանձն ու գթոտ սիրտ, ինչպես ասել են ինձ, չէ՞ որ գիտե նա խորապես զգալ, երբ տեսնում է իր ընկերոջ թշվառությունը, ճնշված ու հարստահարված լինելը. գիտե բողոքել, երբ խասփուշներն այլևս հոգի, կյանք, արև չեն թողնում ժողովրդի մեջ, երբ օտարը, շնորհիվ մեր պետության թուլությանը, բույն դրած մեր մեջ,

ձեռք է դնում մեր ամեն սեփականության վրա և երբ մեր սուրբ կրոնի հակառակ սոսկալի իրողություններ են կատարվում ամբողջ երկրում... Խեսփուշները, ասել են ինձ, որ ճնշվող, հավատացյալ և լավ ժողովրդի զավակներ են, որ նոքա չեն իմանում վախ, որ նոքա գիտեն մեռնել, որովհետև կյանքի վրա արհամարհաբար են նայում, բայց խեսփուշներն, ինչպես տեսնում եմ այժմ մոտից, կարծես ընկել են, թուլացել, վատահոգի դարձել և նմանում են այն ողորմելի կանանց, որոնք բացի ուտել ու քնելուց, ուրիշ ոչինչ նպատակ չունեն կյանքի մեջ…

Նորեկ սեյիդի հանկարծական զայրացկոտ ու բուռն հանդիմանությունները, լեզվի այնքան շքեղ դարձվածքները և պերճախոսի ձայնն ու վայելուչ շարժվածքները, սկսում էին սաստիկ ազդել:

— Ահա լավ, մարգարիտի նմանող խոսքեր, մարգարեն է վկա,— գոչեց մոլլա Նեջեֆը մեծ ուրախությամբ,— ահա իմ ասածների շարունակությունը, իմ սրտի եղածը և իմ ցանկություններն ու երազները... Խոսիր դարձյալ, Սեյիդ աղա, այս՝ ցածում նստած ապուշները շատ կնամարդի են դարձել, խոսիր և ասա նրանց, որ մեր ժողովուրդը հարստահարվում է, գյուղերը թալանվում, մարդիկ են սպանում-ոչնչացնում, որ մեր կրոնը պղծվում է ամեն րոպե և, որ օտարները գալիս խլում են մեր ունեցածն ու հարամ անում մեր կերածը…

— Ավելորդ բան. ճառերն ավելորդ...— Լսվեց Սեյիդ խանի խուլ, կցկտուր բառերը ներքևից,— այո, հասկանում եմ□□□ Մոլլա Նեջեֆի որդին սպանել են... Հը՛մ... իհարկե, դա անգթություն է... Կանայք... Բայց, ավելորդ բան ճառը…

Մոլլա Նեջեֆը հանկարծակիի եկավ և նա մանավանդ ցնցվեց, երբ ականջ դրավ Սեյիդ խանի բարբաջանքներին:

— Լռի՛ր, Սեյիդ խան... լռիր, թե աստված կսիրես... Ես քեզ կխեղդեմ, եթե էլի խոսես,— գոչեց նա զայրագին:

— Ավելորդ բան... Հըմ... հասկանում եմ…— մրմնջաց նորից արբածը և այս անգամ բոլորովին լռեց:

— Ափիոն է կերել,— դարձավ սեյիդին մոլլան:

— Տեսնո՞ւմ եք,— գոչեց սեյիդ Հաբիբուլլահը վշտալի կերպով,— տեսնո՞ւմ եք, մյուսիլմաններ. մինչդեռ ամեն կողմ արտասուք է հոսում, մինչ այլևս շունչ չի մնացել մեր բոլոր՝ գյուղացիներիս, հասարակ գործող ժողովրդի մեջ. մինչ ժողովրդի տասից ինն օրվա հացի կարոտ մուրացկան եղած, իր երկրից վռնդվում է օտարների ձեռքով և օտարը գալիս տեր է դառնում մեր երկրին, մինչ մեր կրոնը պղծվում է ամեն մի քայլում, դուք այստեղ ափիոնով հարբում եք. քնում, փլատակների մեջ և ծիծաղում այդ բոլորի վրա. բայց սպասեցեք, շուտով թե՛ ափիոն և թե՛ ծխախոտ, ամեն, ամեն բան դուք օտարներից թանկ գնով, աղաչելով ձեռք պիտի բերեք և ֆրանգին տուրք պիտի դնի նույնիսկ ձեր բաֆուրների, ձեր չիբուխների վրա. շուտով ֆրանգիները ձեռք կտան ձեր ուտելու հացին, ձեր խմելու ջրին և այլևս ղուրանի ոչ մի խոսքը սուրբ չի համարվի, մյուսիլմանությունը կվերանա այս երկրում... Ահա, այդպես եք դուք, ողորմելի խեսփուշներ, որ պարծենում եք, թե թշվառի, կրոնի, հալածվածի և զրկվողի պաշտպան եք եղել, որ պարծենում եք, թե չնայելով խեսփուշ եք, բայց խաս սիրտ ունիք... Որ թեև ցնցոտի, աղքատ հագուստ եք հագնում, միշտ անոթի է ձեր փորը, բայց հարուստ է և լայն է ձեր սիրտը և ազնիվ ու բարձր ձեր զգացմունքները... Բայց այդ է ուրեմն ձեր լայն սիրտը, ազնիվ զգացմունքները, խեսփուշներն արդյոք իսկապես ցնցոտի սրտի տեր և կուշտ ուտել երազողնե՞ր են եղել... Եթե այդ է բոլորը, ուրեմն ես խիստ սխալվել եմ ու այլևս գործ չունիմ անհավատ, անսիրտ և մուրացիկ մարդկանց մեջ: Ես չեմ եկել խոզերի հետ խոսելու, այլ ճշմարիտ մյուսիլմանների և լավ սրտի տեր մարդկանց... Մնաք բարև, մնացեք միշտ այդպես ողորմելի, ցնցոտի սրտով, ծխեք ափիոն, մինչև իսկ գինի-արաղով հարբեցեք, ծիծաղեք ոչնչացող եղբայրների տանջանքների վրա և թող այլևս չասեն, որ արտաքինով խեսփուշները սրտով խաս են... Մնաք բարև, բռնավորների ընկերներ և ղուրանը ծաղրող անհավատների համախոհներ — մոտեցել են օրերը, երբ դուք ամենքդ էլ պիտի ստիպվեք ձեր գլուխն օտարի առաջ ծռել, ձեր կրոնի վրա թքել, ձեր չիբուխն օտարներից մուրալ և ձեր ծխած թամբաքուի համար անհավատներին գլուխ խոնարհեցնել...

Ասաց և շարժվեցավ ելնելու: Մոլլա Նեջեֆ-կուլին սակայն բռնեց նրան մեղմությամբ և ասաց.

— Սպասի՛ր, աղա Սեյիդ, նստիր քիչ, իզուր մեզ բոլորիս այդքան ցնցոտի սրտերի տեր ես համարում, խեսփուշը կմեռնի, բայց չի մուրալ օտարներից ոչ թե իր չիբուխը, այլև ուտելիքը... Այդ այդպես է. խեսփուշն իրավ է, թուլամորթ է դարձել, բայց դեռ երբեք ստոր բան չի արել և չի անիլ... Այսպես չէ՞, ով ժողովուրդ…— դարձավ նա ամենքին:

Խուլ քրթմնջյուն բարձրացավ խեսփուշների մեջ և մեկը նոցանից գոչեց.

— Ո՞վ կարող է ապացուցանել, որ որևէ խեսփուշ մի ցած գործ, մի գողություն, մարդասպանություն է արել: Իրավ է, նա արբում է, ափիոն է ծխում, բայց նա դրան պետք ունի, որովհետև տեսնում է թշնամություն, տեսնում է անիրավություն և անզոր է նրա դեմ…

— Ճշմարիտ է,— ասաց մի ուրիշը մութ անկյունից,— խեսփուշը ծխում է, որովհետև մոռանալ է ուզում... նա հանդարտ սրտով, արթուն մտքով անիրավություններ տեսնել չէ կարող…

— Այլևս իրավունք չէ մնացել,— վրա բերեց երրորդը,— այժմ էլ ուզում են մեր ծխած թամբաքուն օտարի ձեռքը տալ, տուրքի տակ դնել, մեր կրոնը ծաղրել...

— Այո՛,— խոսեց սեյիդ Հաբիբուլլահը,— ձեր ծխած թամբաքուն, թյությունն այժմ ինգլիզները կմանրեն իրենց ձեռքով և կծախեն ձեզ թանկ գնով. այլևս ոչ մի մյուսիլմանի ձեռք չէ կարող առանց ինգլիզի արտոնության ծխախոտ մշակել... Չնայելով շահի խոստումներին, այդ կատարվելու է, շուտով ձեզնից ոչ ոք չէ կարող իր չիբուխը լցնել մյուսիլմանի ծխախոտով... Եվ այդ բոլորը, ոչ միայն այդ, այլև ամբողջ մեր հավատքը ծախված է ինգլիզին, որովհետև նա ոսկով կաշառել է մեր իշխաններին և վեզիրներին... Բայց մի՞թե մյուսիլմանը կարող է ընդունել, որ իր ծխելիքը ծախե իրեն ինգլիզը, անցկացնելով իր պիղծ ձեռքերից: Ամեն ինչի, որին կպչում է անհավատի ձեռքը, պիղծ է մյուսիլմանի համար, պիղծ է և անընդունելի... Մեր իշխաններն ու վեզիրները ծախել են ղուրանը, պղծել մեր օրենքները...

— Այս ի՞նչ է,— ընդհատեց մի ձայն, որ խոսում էր մի երկրորդի հետ,— ուրեմն դեռ չվերջացա՞վ այդ. իրա՞վ է, որ այսուհետև իմ թամբաքուն ես ինգլիզից պիտի առնեմ:

— Իհարկե, հիմար,— պատասխանում էր մյուսը,— ինգլիզը իր խաչը նախ կքաշի ծխախոտիդ վրա և ապա քեզ կծախի:

— Նահլա՛թ, նահլա՛թ...— գոռացին մի քանիսը,— անհավատներին են ծախել մեր երկիրը, հասել են վերջին օրերը...

Սեյիդ Հաբիբուլլահը, որ լռել էր լսելու համար այդ խոսակցությունը, հանկարծ ոտքի ելավ, հանդիսավորապես առաջ պարզեց ձեռքերը և գոչեց մեծաձայն.

— Հանուն Քելբելայի մեծ մուշտեհիդի…

Հազիվ թե արտասանել էր այդ բառերը, որ բոլորը ոտքի ելան և գոռացին գրեթե միաձայն.

— Խոսի՛ր, ի՞նչ է ասում մեծ մուշտեհիդը:

— Հանուն Քելբելայի մեծ մուշտեհիդի,— շարունակեց ուժգնությամբ սեյիդը,— հրավիրում եմ ձեզ, բոլոր խեսփուշներիդ, ամեն մի հավատացյալ ճշմարիտ մյուսիլմանի. չթողնենք, որ անհավատները տիրեն մեր երկրին և պղծեն մեր օրենքները... Քելբելայի մեծ մուշտեհիդը ասում է.— այն ծխախոտը, այն թամբաքուն և այն որևէ բանը, որին դիպչում է անհավատը, նա պիղծ է և պիղծ պիտի համարվի... Ով ճշմարիտ մյուսիլման է, թող միանա ինձ և քշենք մեր երկիրը և մեր հավատքը պղծող մարդկանց, լինեն նոքա իրանցի կամ օտարերկրացի, իշխան կամ թագավոր... Ղուրանը և իր օրենքներն ավելի բարձր են, քան ամեն իշխան և թագավոր... Թող օրհնյալ լինի մարգարեի անունը…

Եվ գիշերային լռության մեջ լսվեց փլատակներում մի խառնիճաղանջ, խուլ աղաղակ, որ հասնում էր մինչև հեռուները:

— Սալավա՛թ, սալավա՛թ…

Ե

Բայց այստեղ իսկ հարկավոր է դառնում մի փակագիծ բանալ պարզելու համար այն բոլոր պատմական կարևոր դեպքերը որոնք տեղի էին ունենում այդ 1891 թվականի աշնանը Պարսկաստանի մեջ, որոնք գրեթե ամբողջ հետևյալ տարին սպառնացին հեղափոխելու երկիրը և որոնք մեծ կապ ունեին մեր պատմածների հետ:

1890 թվին պարսկական կառավարությունը, երկրի ծխախոտի և թամբաքուի մենավաճառը հանձնել էր մի անգլիական ընկերության: Երկու կողմերի միջև կազմած դաշնագիրը արտոնում էր անգլիացոց՝ շահագործել երկրի ծխելիքի արդյունաբերությունը, վճարելով կառավարությանը, բացի զուտ արդյունքի ¼ մասից մինչև այդ առնվող սահմանված ծխախոտային տուրքերից, այլև տարեկան 15,000 անգլ. ոսկի շահ: Դրա փոխարեն ընկերությունը միմիայն ինքը պիտի իրավունք ունենար արտոնել ծխելիք վաճառելու. ամեն արդյունագործող միմիայն նրան կարող էր վաճառել ծխելիքի բերքը: Պետությունը պարտավորվել էր զորեղապես օգնել ընկերությանն այդ հոդվածը գործադրելու:

Դաշնագիրը կրում էր Նասրեդդին շահի, արտաքին գործոց նախարարության ստորագրություններն ու կնիքները մի կողմից, իսկ մյուս կողմից անգլիական դեսպանատան և ընկերության ներկայացուցիչ մայոր Տալբոյի հաստատությունները:

Բայց անգլիական ընկերությունը, սկզբնական պատրաստությունների համար, դաշնագրի գործադրությունը հետաձգեց մի ամբողջ տարի և 1891 թ. ամռան միայն հայտարարեց ժողովրդին իր ստացած արտոնությունները և անմիջապես գործի սկսավ:

Այստեղ հարկ է ընթերցողին մի անգամ ընդմիշտ ի նկատի ունենալ այն, որ Պարսկաստանի մեջ երկու օտար պետությունների, անգլիական և ռուսական, շահերն անդադար հանդեպ գալով միմյանց, գտնվում են անընդհատ բախման մեջ:

Երկու պետություններն էլ ճգնում են հնար եղածին չափ քայլեր առաջ դնել երկրի մեջ, տնտեսական բոլոր շուկաները գրավել իրենց արդյունաբերություններով և մյուս կողմից էլ չեզոքացնել միմյանց ազդեցությունը, արգելք լինելով միմյանց ամեն պարագայում:

Իրենց դեսպանների և հյուպատոսների միջոցով, երկու մեծ պետություններն աշխատում են նոր արտոնություններ ձեռք բերել շահից և կառավարությունից, առևտրական մեծ շուկաների համար առանձնաշնորհումներ ունենալ, ազդեցություն վայելել, նույնիսկ դիպլոմատիկական գործերում: Դրա համար էլ նոքա չեն խնայում ո՛չ միջոց և ո՛չ էլ դրամ:

Այդ տեսակետով ավելի հանդուգն և ձեռնարկող գտնվել է միշտ Անգլիան, որ միլիոններ է ցանում Պարսկաստանի մեջ, ահագին կաշառքներով շլացնում պարսիկ մեծ պաշտոնյաների՝ իր ձեռքն առնելու համար: Ռուսաստանն իր կողմից նույնպես ոչ մի ջանք, երբեմն իսկ խիստ միջոցներ է խնայում կամ արգելք լինելու և կամ այն նույն արտոնություններն իր ձեռքն անցկացնելու համար:

Երկիրն այսպես, իրապես բաժանված է երկու մեծ պետությունների մեջ և ասպարեզ է նրանց տնտեսական զորեղ մրցումների: Ամբողջ արևելյան Պարսկաստանը, սկսած Բուշիրից մինչև Թեհրան, անգլիական վաճառքը, լեզուն և ազդեցությունն է տիրապետում. հյուսիս-արևմտյան մասերը ողողված են ռուսական ապրանքներով, գտնվում են ռուսաց ազդեցության տակ և Անգլիան, ըմբռնելով անհնարությունը, ոչ իսկ քայլեր է անում որևէ շուկա կամ որևէ ազդեցություն ունենալ այդ կողմերում:

Բուն մայրաքաղաքում են կենտրոնանում երկու պետությունների ազդեցությանց և շահերի շփման ծայրերը: Երկու բանկային զորեղ հաստատություններ այնտեղ ճգնում են միշտ տիրապետել դրամական աշխարհը, միմյանց վարկը ձգել, շուկային տիրանալ, բարձր պաշտոնեությունը ձեռքի տակ առնել, պարսիկ ինքնակալից կորզել այս կամ այն մենավաճառը:

Երկու դեսպանատներն անընդհատ դավեր են լարում միմյանց դեմ, ճգնում են չեզոքացնել միմյանց ոտնձգությունները, և, իրար քայլերին արգելք լինելու համար, չեն խնայում դիմելու ամեն տեսակ միջոցների:

Բացի սրանից, ընթերցողին հարկ է գիտենալ նաև հետևյալը: Ամբողջ Պարսկաստանում քաղաքական իշխանությունը գուցե այնքան ազդեցիկ չէ, որքան կղերականը, որ միշտ շահերով բաժան է եղել մարմնական իշխանությունից և ջանացել է դեմ լինել նրան՝ տիրապետող մնալու համար: Այդ իսկ նպատակով կղերականությունը, զարգացնելով կրոնական ֆանատիզմը ժողովրդյան մեջ, երբ սա որևէ հանգամանքում դժգոհ է մարմնական իշխանությունից — աշխատել է միշտ ժողովրդի կողմը բռնել:

Բացի կրոնական բազմատեսակ ծեսերի, ֆանատիկական պաշտամունքների, կղերականությունը կրթության գործն էլ սահել է իր ձեռքի մեջ և այսպիսով տեր է դարձել հասարակական կարծիքների, որը միշտ հիմնվում է կրոնական որևէ օրենքի և կամ ավանդության վրա:

Քաղաքական իշխանությունն անզոր է հանդիսացել կրոնի պատվերներին որևէ կերպով դեմ դնելու մեջ: Մուշտեհիդների (կրոնապետ) պատգամները համարվել են սուրբ. ոչ մի շահ, ոչ մի թնդանոթ չէ հաջողել որևէ սեյիդի մոլեռանդությանն արգելք հանդիսանալ: Կրոնական ցանցն այնպես սեղմել է պարսիկ ժողովրդին, որ սա ոչ մի քայլ չէ անում այլևս առանց կրոնավորի, առանց կրոնի: Ոչ մի դեպքում պարսիկ ժողովուրդն այնքան միահամուռ ոտքի կանգնելու և նույնիսկ իրեն զոհելու ընդունակ չէ, որքան որևէ մեծ կրոնավորի հրամանի ժամանակ:

Քելբելայում նստած մեծ մուշտեհիդի պատգամները միշտ ավելի ազդեցիկ են եղել, քան շահի հրամանն ու սպառնալիքը: Եվ այդ է պատճառը, որ ամեն շահ, եթե չէ կամենում անմիջական ապստամբություն հարուցանել, պարտավոր է միշտ հաշտ ապրել կրոնավորության հետ և զիջանել նրա պահանջներին:

Արդ՝ ծխախոտի մենավաճառը շահը հանձնելու էր անգլիացիներին, առանց կարծիք հարցնելու կրոնավորությունից: Եվ հետո, մենավաճառը տրված էր անգլիացոց, հետևապես ռուս կառավարությունը պիտի արգելք հանդիսանար: Այդ դեպքում թե ռուս կառավարությունը, թե կրոնավորությունը և թե ժողովուրդը միացել էին անգլիացոց և պարսիկ մարմնավոր իշխանության դեմ ու պիտի ջանային ոչնչացնել տրված արտոնությունը:

Եվ այդպես էլ եղավ: 1891 թվի օգոստոսին, անգլիական մենավաճառի՝ Թավրիզում կպցրած հայտարարությունները պատռվում են և նրանց տեղ կպցնում հեղափոխական, ուղղակի շահի դեմ գրված հայտարարություններ: Տեղական կառավարչապետ — Էմիր Նիզամը, չհամաձայնվելով թագաժառանգի հետ՝ ձեռք առնվելիք միջոցների վերաբերությամբ, տալիս է իր հրաժարականը և շահը ստիպում է իր մեծ պաշտոնյաներից մեկին՝ Էմին-էլ Հուզուրին ուղարկել Թավրիզ՝ պայթող խռովությունները դադարեցնելու:

Բայց այդ նույնիսկ օրերին, Թավրիզի ժողովուրդը, կրոնավորության դրդմամբ, ուղղակի շահին է տալիս մի երկար հեռագիր, որում նա պահանջում է «քրիստոնյաների չհանձնել մյուսիլմանների արտոնությունները, որովհետև նա դեմ է ղուրանի պատվերներին»: Այդ հեռագրով ժողովուրդը հայտարարում է նաև, որ չլսվելու դեպքում, նա վճռել է պաշտպանել իր պահանջներն ու ղուրանի հրամանը՝ զենքը ձեռքին…

Թագավորը կրիտիկական դրության մեջ է: Իր կաբինետից հեռագրով նա սկսում է բանակցել Թավրիզի հետ: Բայց սեպտեմբերի 4-ին Թեհրանում լուր է ստացվում, որ մի սպառնալից ամբոխ, հավաքված թագաժառանգի պալատի առաջ, պնդում է պահպանելու ղուրանի օրենքները և ետ խլելու անգլիացիներին տրված արտոնությունը:

Դեռ ոչ մի բռնի միջոցներ տեղի չեն ունենում: Ամբոխը պահանջում է միմիայն ետ առնել քրիստոնյաներին տված մենավաճառը:

Բայց պայմանագրությունը ստորագրված էր և եթե շահը կամենար ոչնչացնել նրան, պարտավոր էր 2 միլիոն մի տուգանք վճարել անգլիական ընկերության:

Թեհրանի կառավարությունը մտածում է դիմել ռուսաց դեսպանատան և խնդրել միջամտություն՝ Թավրիզի խռովությունները հանդարտեցնելու, սակայն ռուսական դեսպանությունը կտրական կերպով պահանջ է դնում նույնը, ինչ որ ժողովուրդը, ջնջել անգլիական ընկերության տված արտոնությունը:

Մյուս կողմից անգլիական դեսպանատունը պնդում է իր պայմանագրության վրա՝ տուգանքի սպառնալիքը մեջտեղ բերելով: Շահը երկու կրակի մեջ, շվարել-մնացել է: Մտածում է զորք ուղարկել Թավրիզ՝ խռովությունը զսպելու, բայց ռուսաց դեսպանատունը հայտարարում է, որ իսկույն կմիջամտի, իր՝ Ջուլֆայում ունեցած զորքով: Եվ դա կասեցնում է նորից շահին:

Այս բոլորը դեռ հայտնի չէր Թեհրանի ժողովրդյան: Փոստում բռնվում էին և կամ ուղղակի հետաձգվում Թավրիզի սուրհանդակը. հեռագրատներում չէին ընդունում այդ խնդրին վերաբերյալ հեռագիր:

Սակայն, ով գիտե ինչպես, մի խուլ, անորոշ շշուկ արդեն հասել-սկսում էր տարածվել, երբեմն իրողությունը սաստիկ գունավորված, երբեմն այլանդակած: Սուրհանդակի չգալը, հեռագիրների չստանալը գործին ավելի խոշոր կերպարանք էին տալիս և շահը իր պալատում, մինիստրներն ու բոլոր մեծ պաշտոնեությունը երկյուղի մեջ, չգիտեին ինչ անել:

Այդ դրությունը տևել էր մինչև սեպտեմբերի կեսը: Շահը այնուհետև թույլ էր տվել ռուսաց դեսպանատան՝ հեռագրելու Թավրիզի ռուսաց հյուպատոսին, որ մենավաճառի արտոնությունը կջնջվի, չնայելով որ անգլիացիք շարունակում էին հնչեցնել տուգանքի սպառնալիքը: Դորա հետ միասին շահը հեռագրել էր Թավրիզ իր որդուն, թե հենց որ տուգանքի վճարման բանակցությունները վերջանան, մենավաճառությունը պիտի ջնջվեր:

Սուրհանդակն այնուհետև բաց են թողնում, թագաժառանգը շահի վճիռը հաղորդում է ժողովրդին և Թավրիզից ստացվում են խաղաղ լուրեր:

Բայց այս առժամանակյա խաղաղությունը շատ նման էր փոթորկի հառաջընթաց լռությանը, որովհետև հազիվ թե Թեհրանում հասնում են լուրեր, որ Թավրիզի ազգաբնակչության մտքերը սկսել էին խաղաղել — շահը միամտացած, ոչ միայն չէր աճապարում իր խոստումը կատարելու, այլև աշխատում էր ձգձգելու անգլիական ընկերության հետ անելիք բանակցությունը մենավաճառը ջնջելու մասին:

Անշուշտ սկսել էին գործ տեսնել անգլիական ոսկիները, միացած տուգանքի սպառնալիքի հետ: Կաշառված պաշտոնյաները ճգնում էին շահին համոզել հօգուտ անգլիական ընկերության. մյուս կողմից ռուս կառավարությունը պնդում էր վերջ տալ խնդրին: Մտածվեցան միջին ճանապարհներ: Ընկերությունն առաջարկեց Ատրպատականի համար սահմանված անգլիացի պաշտոնյաների փոխարեն՝ նշանակել պարսիկ ծառայողներ և չորս ամսով հետաձգել մենավաճառի գործադրությունը:

Ժողովուրդն ու կրոնավորությունը, նկատելով, որ խաղացնում էին իրենց, սկսեցին դարձյալ հուզվել: Ատրպատականին զիջած արտոնությունների լուրը հասնելով Սպահան և Շիրազ, սեպտեմբերի 15-ին այնտեղ ևս տեղի ունեցան հետզհետե սպառնալից կերպարանք ստացող ցույցեր և այդ՝ նորից մտատանջության մեջ դրեց Նասրեդդին շահին:

Մինչ այդ, հանկարծ վրա հասավ փոթորիկի առաջին նշանը: Թագավորը Քելբելայի մուշտեհիդից ստացավ մի նամակ: Մուշտեհիդը ձեռքը ղուրանի վրա, երկար նամակով ապացուցանում էր, որ օտարներին տրված որևէ մենաշնորհը՝ դեմ էր մահմեդական կրոնին: Նա սպառնում էր վատ հետևանք, եթե անմիջապես չջնջվեր ծխելիքի մենավաճառը:

Շահը թեև առերևույթս ցույց տվավ, որ մուշտեհիդի նամակին չարժեր ուշք դնել, սակայն ներքնապես հուզված, իսկույն ձեռագրեց Բաղդադ իր հյուպատոսին՝ գնալ Քելբելա, մուշտեհիդի մոտ, հայտնել հանգամանքները, վճարելիք տուգանքի մեծությունը և համոզել չափավորելու սուրբ մարդու համոզմունքները…

Այս բոլորը տեղի էր ունենում հոկտեմբեր ամսին, մեր պատմության ժամանակ: Ցրտերը ոչ միայն դեռ չէին սկսել, այլ սկսելու նշաններ անգամ չէին ցույց տալիս:

Փոթորիկը սակայն խուլ կերպով աճում էր ժողովրդյան խավերի մեջ: Հայտնվեցին կրոնավորության միջից գրգռողներ, համարձակ քարոզողներ և ֆանատիկներ: Ո՛չ մի հանդարտ միտք չէր մնացել, բացի գուցե շահի իրեն միտքը, որ դեռ հույսը դրած անգլիացոց միամտացնելու և իր մինիստրների ապահովեցնելու վրա, կարողանում էր որսի ելնել Թեհրանի շրջակայքը և չէր նկատում, թե ինչեր էին կատարվում ոչ միայն երկրի զանազան անկյուններում, այլ նույնիսկ մայրաքաղաքի մեջ:

Դեսպանատները, մանավանդ անգլիական, գուշակեցին շուտով, որ մեծ փոթորիկներ են պայթելու և սկսեցին պատրաստություններ տեսնել:

Անգլիական դեսպանատունն ամրացրեց և նորոգեց իր պալատի շուրջը պտտող աշտարակավոր պարիսպները, փոքրիկ թնդանոթներ տեղավորեց շենքի զանազան կողմերում, զենքեր ցրեց իր հպատակներին և մի 50-60 հոգուց բաղկացած կանոնավոր պահակ գունդ կազմեց դեսպանատան մեջ:

Նույնիսկ շահի փոքր որդին՝ Նայիբը Սալթանեն, որի տունը գտնվում էր հոր պալատին կից՝ միջնաբերդի մեջ, երևի ավելի լավ տեղյակ լինելով գործերի ընթացքին, կամ գուցե վախենալով, կարողացավ իրավունք ստանալ լիովին փակելու, պատ դնելու պալատը մտնող զանազան մանր դռների առաջ, այլև վանդակի փոխարեն պարիսպ շինելու պալատի առաջ գտնվող մեծ պարտեզի շուրջը: Մի անգամ հրաման առած ամրացնելու միջնաբերդը, մեծ աճապարանքով նա սկսեց փակել տալ բոլոր անցքերն ու դռները, աշտարակների վրայի թնդանոթները մաքրել, պատրաստել և կազմակերպել պահակների մի զորեղ գունդ լեռնական վայրենի ցեղերից: Այնուհետև միջնաբերդի երկու դռները փակվում էին սովորականից ավելի շուտ, մթնելուն պես և գիշերով նրանց մոտից անցնողը ենթարկվում էր մանրամասն հարցուփորձի:

Ընդհանուր տխրություն էր տիրում ամեն տեղ, լուռ և մտամոլոր էին երևում ոչ միայն մինիստրները, այլև բոլոր պաշտոնյաները մինչև իսկ աստիճանավորները:

Ամենքը նայում էին միմյանց վրա կասկածանքով…

Զ

... Կանայք պատի տակից, իսկ Խոսրևը փողոցի մեջտեղից, ետ մնացած, սակայն գաղտագողի, աչքը միշտ նրանց, գնաց ուր նոքա գնացին, որովհետև աղախինը քիչ ետ էր մնացել և ասել էր երիտասարդին.

— Հետևիր մեզ և նշանակած տեղս սպասիր մինչև գամ իմաց տամ. խանումս ուզում է խոսել քեզ հետ…

Եվ Այիշե խանումն իր աղախին Ֆաթմայի հետ շուկայից շուկա անցնելով դուրս եկան Սեր-չեշմե, քայլեցին դեպի Շահաբդյուլազիմի թաղը և մտան նրա ծուռումուռ փողոցները:

Խոսրևը երբ այդ տեսավ, պահ մի վարանեց: Նեղ ավերակներով ու փլատակներով, աղբանոցի փոխված բացվածքներ ունեցող այդ հեռավոր փողոցների ամայությունն ուշքի բերեց նրան: Սիրտը սեղմվեց. սկսեց զղջալ, մինչև իսկ քայլերը դանդաղեցրեց և վերջ ի վերջո մի ավերակի մոտ կանգ առավ:

Երևի աղախինը նկատեց այդ, որովհետև բռնեց խանումի թևից, մի քանի րոպե խոսեց նրա հետ, ապա, շուրջը նայելուց և ստուգելուց հետո, որ անցորդ չկար, արագ քայլերով մոտ եկավ և ասաց Խոսրևին:

— Մի՞թե աղան Հոգնեց արդեն:

— Ո՛չ...— շփոթվեց երիտասարդը,— բայց այս որտե՞ղ եք տանում ինձ:

— Ախ, այո,— ծիծաղեց աղախինը,— երևում է, որ այս կողմերը չես եղել: Խանումի մոտ ենք գնում, բայց կողմնակի խուլ փողոցներով. իսկույն դուրս կգանք մեր տան առաջ... Սակայն, եթե վախկոտ ես, ետ դարձիր. քեզ խնդրող չկա…

Ասաց, առանց պատասխանի սպասելու դարձավ և միացավ խանումին և երկուսն էլ շարունակեցին իրենց ճանապարհը:

Խոսրևը մի վայրկյան շվարած մնաց, հետո ամաչեց իր վախենալուց, թոթովեց իրեն և հետևեց նրանց, վճռելով միշտ հեռվից գնալ՝ տեսնելու, թե ուր են հասնելու վերջ ի վերջո:

Փողոցից փողոց — ավելի փլվածքների և բացվածքների մեջ եղած շավիղներով, երբեմն ուղղակի քանդված պատերից անցնելով, երկու կանայք քիչ հետո իջան մի նեղ ու խուլ փողոց, որ ծայրից ծայր միապաղաղ աղյուսե և հեռվում մի փոքրիկ դռնակ: Հասկացավ: Հարեմխանայի հետևի դռնով էին ուզում իրեն ներս մտցնել: Եվ վախ զգաց: Ըմբռնեց, որ մի նշանավոր մարդու տուն էր մտնելու... կյանքի մեջ առաջին անգամն էր այդ դիպվածը, թեև Այլիշեի գեղեցկությունը գերել էր նրան, բայց վախն ավելի զորեղ գտնվեց:

Կանգ առավ փողոց դուրս հանող փլվածքի այս կողմը և սպասեց:

Աղախինը, որ թողել էր խանումին, ծանր քայլերով դեպի փոքրիկ դուռը դարձավ, իջավ փլվածքից երիտասարդի մոտ և արագ՝ ասաց.

— Սպասիր այստեղ. քեզ կբերեմ կնոջ վերնազգեստներ և հետո ինձ հետ միասին կմտնենք□□□ ներքինի չկա. մի ծերունի ծառա է միայն, որ խանումի շունն է... Հագուստը քեզ կբերեմ մյուս դռնով…

Ու անհետացավ, թողնելով երիտասարդին սրտատրոփ և վախով լցված:

Երբ երկու կանայք անհետացել էին, մի րոպե մտածեց ետ դառնալ, փախչել: Սրտի ճմլումն ավելանում էր, մի տեսակ անհանգստություն էր համակում նրան: Նստեց մի գլորված պատի կտորի վրա և պահ մի մտածեց:

Թե ուր էր — ինքն էլ չգիտեր: Շահաբդյուլազիմի թաղումն էր,— այդ հասկացել էր. բայց եթե ետ դառնալ կամենար, ձիաքարշի գիծը գտնելու համար, անշուշտ նրան պետք է հարցնել առաջին պատահած անցորդի:

Մյուս կողմից հարեմխանան, այն հաճույքը, որ նորից պիտի տեսներ գեղեցիկ Այիշեին տնային կիսամերկ հագուստով, երեսը լիովին բաց, որ պիտի մանավանդ ունենար այդ կնոջ իր գրկի մեջ — այնտեղ, այդ խորհրդավոր պատերի հետևում, իր կյանքումը երբեք չտեսած, մինչև այժմ իրեն հաճախ գրավող կանանոցում:

Ու մնաց: Եվ տասնհինգ րոպեից հետո նա, Ֆաթմա աղախնի հետ, դողդոջուն, գունատ՝ երեսի ծակոտկեն րուբենդի տակ, պարուրված կապույտ սավանով, հագած կանացի լայն շալվար, ոտքերը մի զույգ անհարմար կարմիր մուճակների մեջ — մտնում էր փոքրիկ դռնից ներս:

Հարեմխանայի այդ բակը սկսում էր մի հրաշալի, հովասուն և լավ խնամված պարտեզով:

Դռան վրա նստած ծառան միայն գլուխը բարձրացրեց և ասաց.

— Այդ դո՞ւ ես, Ֆաթմա:

— Ես եմ. խանումը եկե՞լ է:

— Նոր եկավ. իսկ դու ինչո՞ւ էիր մենակ թողել նրան... որ խանն իմանա... Հետինդ ո՞վ է:

Այս բոլորը նա ասում էր ոչ իբր քնոողի պես, այլ իբր հետաքրքրվողի: Ծերունի դռնապանը, իրավ որ, Այիշե խանումի շունն էր. մի խռֆած, ողորմելի ծերուկ, որ գրեթե միշտ ննջում էր դռան հետևը կկղած:

— Խանումին ես Սեր-չեշմե թողի, որ այս նոր աղախնին գնամ բերեմ:

— Հա նոր աղախի՞ն է... իսկ սիրո՞ւն է:

— Քե՞զ ինչ, ծերունի…

Ծիծաղեց Ֆաթման և երիտասարդի հետ ներս մտան:

Այիշեն Նասրուլլաի խանի չորրորդ և ամենասիրելի կինն էր, բերված Շիրազից և առանձին արտոնություններ վայելող: Նրան տված էր հարեմխանայի երկրորդ բակը, բոլորովին անջատված առաջինից և միմիայն մի փակ դռնով նրա հետ կապված:

Այդ բակում Այիշեն տեր և իշխան էր լիազոր. ուներ իր առանձին պարտեզն ու շատրվանով ավազանը, իր խոհանոցն ու սենյակները, իր աղախիններն ու սև ստրկուհին: Նասրուլլաի խանը ոչինչ չէր խնայել սիրած կնոջը հուրի դարձնելու և նրա բնակարանը՝ դրախտ:

Ճոխություն էր տիրում ամեն կողմ. թավիշ, մետաքս և գորգեր, հազարներ էին նստել տանտիրոջ վրա:

Այդ իսկ բակումն էր, որ ոտք կոխեց երիտասարդը և քիչ հետո մտավ մի պերճ զարդարված սրահ, որի դռան առաջ նա սառած մնաց հիացումից:

Մետաքսապատ մի բարձր ներքնակի վրա, մեջքը փափուկ և ճոխ բարձերի թիկն տված՝ նստել էր ժպտուն, գեղեցկության մի հրաշակերտ, թանկագին ակնեղեններով շողշողուն, տնային կիսամերկ, կուրծքն ու ոտքերը բաց հագուստով Այիշե խանումը, որ հրավիրում էր պատանուն մոտ գնալ և տեղ բռնել իր կողքին:

Խոսրևը մի վայրկյան հիացմունքից չկարողացավ քայլ առնել: Հետո, Ֆաթմայի օգնությամբ ազատվեց կանացի հագուստից և դողդոջուն մոտ գնաց:

— Մոտ նստիր, այստեղ…— համարձակ և քաշող ժպիտով բռնեց նրա ձեռքից կինը և գրեթե նստեցրեց իր ծնկների վրա:

Աղախինը դուրս գնաց, հետո ներս եկավ ուրիշ երկուսի և սև ստրկուհու հետ, որոնք լուսամուտները փակեցին — բերին խմելիքներ, թեյ, քաղցրեղեն և ձեռները կուրծքներին, կանգնած՝ մնացին դռան մոտ:

Խանումը և ոչ իսկ բանի տեղ էր դնում նրանց ներկայությունը և շարունակում էր սիրալիր, նախ մոտ քաշել երիտասարդին, հետո նրա այտերը գգվել և հուսկ ուրեմն, առանց այլևայլության՝ գրկեց ու սկսեց համբուրել ամաչող երիտասարդին:

— Դու ինչ որ կարծես ամաչում ես, խան…— քրքջաց նա,— այդ ստրուկներից... մի ամաչիլ, նրանք իմ շներն են, ուրիշ ոչինչ... Անունդ Մեհտի խան է, չէ՞...

— Այո՛…

— Այդքա՞ն միայն խոսելդ... տղամարդ չես. ուրիշը քո տեղը լիներ, այժմ կգրկեր, համբույրներով կծածկեր ինձ, գեղեցիկ տաղեր կասեր, ուրախությունից կգժվեր... իսկ դու... կարծես աղջիկ լինես... լավ, ես քեզ օրինակը տամ, խոսել սովորեցնեմ... էյ, գինի տվեք:

Եվ երբ աղախիններից երկուսը դուրս էին վազում, Այիշեն ոստնեց, կրքոտ կերպով քաշեց դեպի իրեն երիտասարդին, գրկեց ու գոչեց.

— Զվարճացի՛ր և ոչինչից մի քաշվել... իսկ եթե վախենում ես, կասեմ քեզ, որ առանց իմ հրամանի ոչ ոք, լսո՞ւմ ես, նույնիսկ տանտերը ոտք կոխել չէ կարող այս բակը…

Ասա գրկած երիտասարդին, դարձավ Ֆաթմային ու ասաց.

— Շիրինի (քաղցրեղեն)... կանչիր Զոհրային և թող թառը (նվագարանը) բերե…

Եվ այսպես հարեմխանայի կրքոտ կինն ամեն բան արավ շփոթված ու ամաչող երիտասարդին համարձակություն ներշնչելու համար:

Հետո, երբ երկար զգվանքները փոխադարձ էին սկսում դառնալ, երբ գինի ու երաժշտություն էր գալիս, երգ, պար, քրքիջ ու զվարճությունը ողողում էին սենյակը, Խոսրևն արդեն լիովին մոռացել էր վախն ու ամոթը և համարձակ, արբշիռ կերպով ընկղմում էր հեշտության մեջ:

Այիշե խանումը կատարելապես արբեցնում էր նրան «երկու շրթունքներով — բաժակի և իրեն»: Պարզ է, որ վարժ էր նա այդ բոլորին: Աղախիններն իսկ ժպիտով և սովորած, դիտում էին իրենց խանումի նույնիսկ չափազանց համարձակ, լկտիության հասնող զգվանքներն շարժվածքները:

Ամեն ինչ լավ էր գնում. խանումը արբենում էր, արբեցնելով Խոսրևին. հեշտասիրական ծայրահեղ ցույցերի մեջ՝ մի աղախինը նվագում էր, երկրորդը երգում դիմացնին, գետնի վրա միմյանց հետևից սփռոց էին կազմում կերակուրներ, քաղցրեղեն, օշարակ և այլն: Դրսում սկսում էր մթնել. ժամանակը սահում էր աննշմարելի:

Եվ անշուշտ Խոսրևն իր կյանքի մեջ գուցե առաջին ու վերջին անգամ լիուլի կճաշակեր երազած գերագույն հաճույքը, եթե տեղի չունենար ինքնըստինքյան շատ սովորական, բայց չարագուշակ հետևանք ունեցող դեպք:

Որտեղից որ էր, երևի մոտակայքում գտնվող մի մզկիթի մինարեի վրայից, հանկարծ ներս խուժեց մի բարձր, հնչեղ ձայն, որ զիլ ձայնով կանչում էր.

— Ալլահ աքպե՛ր…

Երեկոյան ազանն էր: Հավատացյալ իսլամներին երեկոյան աղոթքի հրավիրող մեծագոչ ձայնը:

Թեև արբած, բայց Այիշե խանումը նստեց, ձեռքը դեմքին քսեց ու ասաց բարձրաձայն:

— Ալլա՛հ աքպեր... Ֆաթմա, չմոռանանք ճշմարիտ մյուսիլմանի պարտավորությունները... փռիր այն կողմ խալիլ-նամազը (գորգ աղոթքի համար) և ես ու շահզադեն կկատարենք մեր երեկոյան աղոթքը... գնացեք դուք էլ…

Աղախինները ցած դրին ամեն ինչ և դուրս գնացին: Ֆաթման բարեպաշտությամբ փռեց փոքրիկ գորգը, մի ինչ-որ մետաքսե քսակից հանեց սուրբ հողից շինած փոքրիկ քարը, դրեց նրա վրա և դուրս գնաց:

— Միասին աղոթենք, խա՛ն,— դարձավ Այիշեն Խոսրևին:

Երիտասարդը լուռ, լոջացած ու շփոթված՝ չգիտեր ինչ ասել կամ անել: Որպես կրակապաշտ պարսիկ, նա ոչ միայն չէր աղոթելու, այլ պիտի ջանար ներկա չլինել մահմեդականի աղոթքին:

Այդ շվարումը Այիշեի ժպիտը շարժեց.

— Երևի դու էլ մեր այժմյան ջահելների պես նախանձախնդիր չես... բայց գիտես, ես մուշտեհիդի աղջիկ եմ... և եթե ուզում ես սիրվել ինձնից, ունենալ ինձ... առաջ աղոթիր... հետո էլի կզվարճանանք:

Խոսրևը մնաց անշարժ և զգաց, որ գունատվում էր:

— Մի՞թե այդքան խաթր չշահեցի քեզ մոտ,— մոտեցավ նրան Այիշեն, գրկեց ու սկսեց զգվել,— իմ խաթրի համար... դեհ, ապա... մյուսիլման դարձնեմ քեզ... կատակ մի կարծիր, որ մուշտեհիդի աղջկա սիրեկանն ես…

Երիտասարդի դեմքը կծկվեց և նա ոտքի ելավ ու գունատ, մռմռաց.

— Չեմ կարող:

— Չե՞ս կարող...— զարմացավ կինը,— չես կարող... մայրդ ու հայրդ ուրեմն քեզ չե՞ն սովորեցրել աղոթելը:

— Ո՛չ, չեն սովորեցրել...— շտապեց ասել երիտասարդը՝ կառչելով այդ պատրվակից:

Այիշեն ուրախ ծիծաղեց: Դիմադրությունը բորբոքեցնում էր նրան:

— Այ քեզ բան...— ասաց նա,— ուրեմն ոչ մայն պիտի ինձ մոտ սովորես սիրել և զվարճանալ, այլև աղոթելը… սա խո պարծանք եղավ ինձ համար... Ապա մոտ եկ և ինձ նման արա... ես քեզ աղոթելն էլ սովորեցնեմ:

Դրությունն անելանելի էր: Մի վայրկյան, միայն մի վայրկյան Խոսրևը մտածեց անել ամեն ինչ, կեղծել, որպես խաղ, որպես առերես դերասանություն, զգալով որ շատ վատ բան էր լինելու, եթե չկատարեր գեղեցիկ կնոջ կամքը: Բայց այդ վայրկյանը երկար չտևեց: Մոր, իր շատ սիրելի մոր հրաշալի դեմքը, հեզ և սիրող հայացքը պատկերացավ դիմացը իր հոր պատվերները, իր կրոնի ազատ, մեծ և վսեմ վարդապետությունը հիշեց և, երբ Այիշեն ուզում էր քարշ տալ նրան դեպի գորգը, ցնցեց գլուխն ու այս անգամ վճռականորեն ասաց.

— Ո՛չ, չե՛մ կարող... չե՛մ ուզում…

Այիշեն ևս առ ևս զարմացած՝ թողեց նրա թևը և հետաքրքրված՝ հարցրեց.

— Բայց ինչո՞ւ, դու մյուսիլման չե՞ս, դու կռապա՞շտ, հրեա, քրիստնյա՞ ես... դու չե՞ս միթե, քո հայրդ ու մայրդ անհավատնե՞ր են... և այդպես ձևացնում ես քեզ իմ առաջ... երեխա մի լինի՛ր... եթե ասեմ, որ գրկիր ինձ, համբուրիր, եթե ասեմ, որ ոտներս համբուրիր:

— Ուրախությամբ... բայց մյուսիլմանի աղոթք՝ ոչ…

— Ինչպե՞ս…— դեմքը կնճռեց Այիշեն,— ուրեմն իրա՞վ, դու մյուսիլման չե՞ս... գուցե բաբի՞ ես դու...

— Խոսիր, շուտ ի՞նչ ես դու…

Ու մի քայլ հեռանալով, սպառնալից, նայեց նրան:

Երիտասարդը կռթնեց պատին և լուռ մնաց:

— Խոսի՛ր,— ճչաց Այիշեն,— ասա, ո՞ւմ էր արդյոք, որ համբուրեցի, գգվեցի, մի մյուսիլմա՞նի, թե մի անհավատ շան, մի բաբիի կամ□□□ խոսի՛ր, եթե ուզում ես, որ շարունակեմ քեզ սիրել, եթե չես ուզում, որ զղջամ, պղծված համարեմ ինձ…

Խոսրևը մի քայլ արավ դեպի դուռը և ասաց դողդոջուն.

— Թույլ տուր ինձ հեռանալ... շնորհակալ եմ սիրուցդ... բայց... հրամայիր ինձ դուրս տանել այստեղից... մեղավոր եմ, որ գրավվեցի, եկա...

— Ա՛ ո՛չ... դու ինձ հետաքրքրում ես... ես քեզ ուզում եմ, հասկանո՞ւմ ես, ուզում եմ ամբողջ հոգովս... ես միայն այսօրվա համար չէ, որ սիրում եմ քեզ. ես ուզում եմ, որ դու իմը լինես մի՛շտ… ամե՛ն օր… դու միշտ պիտի գաս ինձ մոտ… ես Ֆաթմային կասեմ, որ տունդ ճանաչի և ամեն անգամ, երբ հարմար գտնեմ՝ գաս ինձ մոտ... ո՛չ, ես քեզ նման սիրունը չեմ տեսել, քեզ պես ոչ ոքի չեմ սիրել... հասկանո՞ւմ ես…

Եվ այս ասելով, կրքոտ, տաք երկրի պագշոտ շեշտերով, նա մոտեցել էր, փարվել երիտասարդին, գգվում էր նրան ջերմ, տռփական համբույրներով ծածկում նրա շրթունքները, այտերը...

— Ասա՛□□□ ասա, որ դու մյուսիլման ես: Հասկանո՞ւմ ես, ես մուշտեիդի աղջիկ եմ, կրոնն ինձ համար մի պահանջ է դարձել, ես պիղծ եմ համարում այն, ինչ որ մյուսիլմանի չէ, ես շո՛ւն եմ համարում և սատկացնելու արժանի այն ամենին, ով մյուսիլման չէ... Խոսի՛ր, ի՞նչ ես դու... եթե մյուսիլման ես, աղոթիր ինձ հետ… չգիտես՝ սովորեցնում եմ... իմ խաթրի, իմ սիրո համար. արա՛

ուզածս և պիտի տեսնես, որ ո՛չ մի կին ինձ նման չէ սիրել և չի սիրիլ քեզ... աղքա՞տ ես — քեզ ոսկիներով կլցնեմ... պատվի՞ ես ցանկանում — քեզ պալատ մտցնել տամ... խոսի՛ր, ասա միայն, որ դու մյուսիլման ես…

Հետո մեկե՛ն, թողեց նրան գրկից, կանգնեց քիչ հեռու և ավելի հանդարտ ձայնով ասաց.

— Լավ ուրե՛մն, մի՛ աղոթիլ, ոչինչ... չեմ ուզում...

Խոսրևն ազատ շունչ առավ: Բայց շտապեց, որովհետև Այիշեն խորունկ և խիստ ձայնով շարունակեց.

— Սակայն,— ասաց նա,— ամեն մյուսիլման իր որդուն փոքրությունից սովորեցնում է մի բան, մի գերագույն բան, որ ապացուցանում է իսլամ լինելը... Արտասանիր ինձ Քելեմեի շահադաթը (վկայության խոսքերը) և մի աղոթիլ ես քոնն եմ ընդմիշտ... Արտասանի՛ր…

Եվ ձեռքը պարզած՝ լուրջ սպասեց:

Երիտասարդն ավելի ևս գունատվեց:

— Ասա...— գոչեց խստությամբ Այիշեն,— ասա ինձ հետ. «Ալլահիլա-հուլ-ուլլահ»□□□ Կրկնիր□□□ Մուհամեդը ռասուլ ուլլահ, Ալիեմ վելի ուլլահ»... Չե՞ս արտասանում… ահ… դու մյուսիլման չես ուրեմն...

Եվ կատաղի, ոստնելով դեպի նա, բռնեց նրա երկու ուսագլուխներից ու ճչաց.

— Ի՞նչ ես դու ուրեմն. քրիստոնյա... հրեա՞...

Այլևս անհնար էր ծածկվել և Խոսրևը մեռելատիպ, երերուն և սոսկումից թուլացած, ասաց.

— Ես գեբր /Կրակատաշտ պարսիկ:/ եմ:

— Գե՞բր... Անեծք... պիղծ, տասնհազար անգամ անիծյալ, շո՛ւն, աղտոտ գե՞բր… Անե՛ծք, անե՞ծք…

Հետո ետ քաշվեց, թքեց, մի վայրկյան կատաղի աչքերով նայեց նրան ու մեկեն, արագ վճռականությամբ վազեց դեպի սենյակի մի կողմը՝ գոռալով.

— Ի՞նչ, մի գե՞բր համբուրի, գգվի մուշանիդի աղջկա... մի շուն անհավատ այստեղ մտնի և կենդանի դո՞ւրս գա…

Խոսրևը զգաց, որ ամեն ինչ վերջացել էր և նրան հարկավոր էր մի կերպ դուրս նետվել այդտեղից ու արագ կերպով վազեց դեպի դուռը: Այիշեի ճիչը, լսված մյուս սենյակներից, ներս թափեց աղախիններին, որոնք սոսկմամբ տեսան, թե ինչպես գեղեցիկ տիկինը բարձերի տակից քաշում, հանում էր դամասկյան սուր դաշույնը:

— Խանո՛ւմ, հոգիս...— գոչեց Ֆաթման փակելով Այիշեի դեմքը,— ի՞նչ եղավ քեզ...

— Գեբր է, գեբր է այդ շուն ...— ճչաց Այիշեն, ճգնելով ազատվել նրա ձեռքից,— թողեք որ սատկացնեմ նրան... էս համբուրեցի, գգվեցի մի գեբր, ես մուշտեիդի աղջիկս... սիրեցի մի գեբրի՛…

Բայց Խոսրևն արդեն դուրս էր ձգել իրեն սենյակից, շտապմամբ հագել էր կոշիկները, բակը ոստնել ու վազում էր մթան մեջ՝ թաքնվելու պարտիզի խուլ կողմերում:

Փախչելու ժամանակ նա լսում էր դեռ Այիշեի ճիչը, որ հայհոյում էր, հրամայում էր թողնել զարնելու, գոչում էր գեբրին սատկեցնել...

Բայց գեբրը պարտիզի մեջ այս-այն կողմն էր վազում մի ելք որոնելու: Պատերը բարձր էին. միտք չկար ծառերի վրա մագլցելու: Շուտով անշուշտ ճրագները դուրս կհանեին, մարդիկ կկանչեին, կգտնեին նրան…

Պետք էր խուսափել, ամեն ճիգ գործել՝ դուրս գալու այդ սոսկալի որջից:

Եվ նա մի քանի անգամ փորձեց, այս-այն կողմը պատերին մոտեցավ, խոր մթության մեջ շոշափեց ամեն ինչ, փորձեց ելքի դուռը գտնել. գիտեր, որ այնտեղ մի ծառա կար, բայց և գիտեր, որ դժվար չէր լինիլ հաղթել նրան, մի կողմը շպրտել և անցնել:

Այդպես, այս-այն կողմ վազելուց հետո, հանկարծ նրա ձեռքը դիպավ մի դռան: Շոշափեց փակը, հրեց, հետո ձեռքը բարձրացրեց դռանը վերը, քաշեց կապը և դուռը հետևի վրա առանց աղմուկի բացվեց, հետո մի ծանր վարագույր դեն հրեց և զարմացմամբ տեսավ, որ փոխանակ փողոցի, գտնվում էր մի ուրիշ ավելի մեծ և պարտիզալից բակի մեջ:

Դուռը բացվելու ուրախությանը հաջորդեց վիատություն: Զգաց, որ ուժերը թողնում էին իրեն և տեղնուտեղը կքվեց մի ծառի տակ: Բակի մեջ խոր լռություն էր տիրում, բայց սենյակների մեծ, գույնզգույն լուսամուտներից երևում էին ներսի ճրագները:

Այդպես մնալը երկար չէր կարող տևել և երիտասարդն ուղղվեց ու մի ճար մտածեց: Նախ շուրջը նայեց, հետո հանկարծ հիշելով, որ կարող էին ճրագներ հանել իրեն որոնելու, խարխափելով նորից բակի այս-այն կողմը գնաց և դուռը որոնեց:

Այդ միջոցին էր, բակի մյուս կողմից ճռնչաց մի դուռ, հետո վայրկենապես դուրս ելնող լույսի մեջ երևաց մի մարդ, որը զգուշությամբ իջնում էր, աշխատում ոտնաձայն չհանել և քայլում դեպի բակի ամենաբարձր շենքը:

Անշուշտ դուռն այն կողմ է, մտածեց Խոսրևը և ոտի ծայրերով հետևեց նրան:

Մարդը մտավ շենքի մեջ, ելավ սանդուղքներից ամենայն զգուշությամբ, բաց արավ մի դուռ և ներս մտավ մի մութ տեղ, ուր այլևս նրա ոտների ձայնը չէր լսվում, գորգեր փռած լինելուն համար: Խոսրևը ջանաց աչքից չկորցնել նրան: Մարդը բաց արավ մի ուրիշ դուռ և կամենում էր մտնել այնտեղ, երբ հանկարծ, երևի լսեց ոտնաձայն իր հետևից, կանգ առավ, դարձավ ու կծկվեց խավարի մեջ:

Խոսրևն էլ կանգ առավ: Երկար, երկուսն էլ շունչներնին պահելով՝ մնացին անշարժ, հետո մարդը զգուշությամբ գնաց դեպի դուռը, և աշխատեց բանալ անձայն: Խոսրևը շարժվեց: Այդ շարժումը բավական եղավ: Մարդն իսկույն թողեց դուռը, ոստնեց դեպի նա, բռնեց թևից և ասաց խռպոտ ձայնով.

— Ո՞վ ես դու, ասա՛, թե չէ իսկույն կսպանեմ:

Խոսրևն ուժգնությամբ ցնցեց նրան և նույնպես ցած ձայնով ասաց.

— Իսկ դու ո՞վ ես... ինձ սպանելու համար նախ քեզ նման թույլ չպիտի լինել և հետո, տե՛ս…

Ու արագությամբ վերարկուի հետևից մի դաշույն հանելով ծայրը պարզեց դեպի մարդը:

— Դու ներքինի կամ ծառա չե՞ս ուրեմն,— հարցրեց սա, և օտա՞ր ես... իսկ ի՞նչ գործ ունիս հարեմխանայի մեջ:

— Իսկ դու. եթե տանտերն ես, ինչո՞ւ այդքան զգուշությամբ ես դուրս գնում հարեմխանայից. դո՛ւ էլ ուրեմն օտար ես:

Մարդը լռությամբ մի շարժում գործեց, հետո հանկարծ լսվեց մի շփումն և վառվեց մի լուցկի:

Երկուսն էլ նայեցին միմյանց: Խոսրևի դիմաց կանգնել էր իրեն հասակի մի պատանի:

— Ա՛...— արեց պատանին,— ահա՛ թե ինչ. հորս կանայք սիրեկաններ են մտցնում ներս:

— Եվ դու հորդ կանանց մոտից ես դուրս գալիս գիշերով:

— Ես մո՛ր մոտ էի:

— Ստում ես, մորդ մոտ՝ առանց ներքինիի իմանալու և մորդ մոտից այդպես ծածուկ... Դու հորդ հարճերից մեկի մոտն էիր…

— Թող լինի... բայց դու կմեռնես, իսկ ես այս դռնից հետո բիրունը կանցնեմ…

Ու լուցկին մարեց: Պատանին ոտքը վերցրեց գնալու: Վճռական րոպե էր: Խոսրևը հասկացավ, որ պատանին, եթե մի աղաղակ հաներ, իր վերջին րոպեն հասել էր: Ուստի և արագ վճռականությամբ՝ ամուր բռնեց պատանու թևից, դաշույնը դրեց նրա կուրծքին և ասաց.

— Եթե մի քայլ ևս արել ես, կզարնեմ:

— Այդպե՞ս,— գոչեց պատանին,— լավ ուրեմն...

Եվ մի արագ շարժումով մերկացրած դաշույնը դեմ տվավ նրան մինչև իսկ քիչ ծակեց Խոսրևին:

Մթան մեջ այն ժամանակ տեղի ունեցավ մի կատաղի կռիվ երկու երիտասարդների մեջ: Խոսրևը չէր ուզում զարնել, այլ աշխատում էր մի կերպ ազատվել հարվածներից. հետո մի հարմար րոպեում ետ-ետ գնաց, հրեց դուռը և իրեն գտավ մի լայն սրահի մեջ, որից հետո երևում էր լայն բակը և դիմացը՝ փողոցի դուռը, լուսավորված լապտերներով:

Եվ մինչ պատանին վազում էր նրա հետևից գոռալով, Խոսրևը ոստնեց դեպի բակ և վազեց փողոց: Պատանին պնդեց նրա հետևից անդադար գոռալով.

— Բռնեցեք մարդասպանին, գողին...

Ծառաները երևի կամ քնած էին և կամ զբաղված, որովհետև մինչև որ դռները կբացվեին, մինչև որ աղմուկ և շարժում կառաջանար, Խոսրևը փողոց էր մտել և վազում էր սաստիկ արագությամբ, իսկ պատանին էլ նրա հետևից:

Բանն այն է, որ պատանին իսկույն իր նախանձի դրդմամբ մտածել էր, թե անշուշտ դա իր սիրուհու մի ուրիշ սիրեկանը պիտի լիներ, իր հակառակորդը, որ այժմ տեսել էր ամեն բան և եթե կենդանի մնար, կարող էր հորը պատմել և ով գիտե ինչեր կծագեին դրանից:

Ու նույն արագությամբ մթան մեջ պնդեց նրա հետևից: Քիչ հետո երկուսն էլ դուրս գնացին մի նեղ փողոց, այնտեղից Խոսրևը ոստնեց մի ավերակի մեջ և ջանաց խուսափել, մտածելով, որ ծառաները սրերով հետևիցն էին ընկել:

Բայց ծառաները դեռ հազիվ փողոցի դուռն ելած, չէին իսկ տեսել, թե այդ ինչ փախչողներ էին և ուր անհետացան:

Ավերակի մեջ, Խոսրևը գայթեց, ընկավ, հուսահատաբար մտածեց, որ հասել էր մեռնելու րոպեն, բայց երբ մեքենայորեն դառնալով տեսավ, որ հետևից եկողը միայն պատանին էր, անմիջապես կանգ առավ, մտավ մի պատի հետև, թողեց որ մոտենար և երբ հասել էր, ձեռքի քարովն այնպես խփեց նրան, որ պատանին ընկավ:

Խոսրևն այն ժամանակ փորձեց փախչել, բայց պատանին բռնել էր նրա ոտքն ընկնելիս և հայհոյում էր:

Պետք էր վերջ տալ այդ բոլորին, կարող էին ձայները լսել: Կռացավ, սեղմեց պատանու կոկորդը, հետո դաշույնը բարձրացրեց, ուժգնությամբ մինչև դաստապանը խրեց նրա կուրծքը, սոսկումով ցատկեց ու դուրս թռավ ավերակներից:

Ու առանց ետ նայելու, կարծես դարձյալ պնդում էին հետևից, մազերը ցցված, աչքերն արյունով լի, փոշոտ ու զառանցանքի մեջ լինողի նման վազեց ու վազեց, ինքն էլ չգիտենալով թե ո՞ւր էր գնում և կամ որտե՞ղ էր գտնվում:

Այիշե խանումին տենդային զառանցանքների մեջ անկողին էին մտցրել ուժով: Աղախինները երկու ժամ էր, ճգնում էին նրան հանդարտեցնել, ուշքի բերել, բայց նա անընդհատ ճչում էր, դաշույնն էր ուզում, երիտասարդին կանչում:

Մինչ այդ, հանկարծ գիշերային լռության մեջ, հեռվից լսվեց մի երկար աղաղակ, որ եկավ ցնցելու բոլորին:

Ֆաթման ոտքի ելավ խանումի սնարի մոտից և ասաց.

— Ի՞նչ է այն:

Հետո դարձավ մյուս աղախիններին և հարցրեց.

— Գտա՞ք անպիտանին:

— Չգտանք, մտել է մյուս հարեմխանեն:

— Կորսվեցանք...— ձեռքերը գլխին խփեց Ֆաթման,— երևի այդ նրա ձայնն էր, ներքինիները սպանեցին նրան... Շուտ փակեք միջին դուռը և ուրացեք, հասկանո՞ւմ եք, որ այստեղ տղամարդ մտած լինի:

Բայց ինչպես երևաց, և դռնապանը իր քնած տեղից, և մյուս բակի կանայք, ներքինին ու ծառաները, այլև բիրունի /Տղամարդկանց մասը բնակարանի մեջ: Կանանց մասը կոչվում է էնդերուն: Բառացի նշանակությամբ՝ բիրուն — դուրս և էնդերուն — ներս:/ աղաները լսել էին նույն աղաղակը, որովհետև իսկույն մի մեծ շարժում առաջացավ ամբողջ տան մեջ:

Դռնապանը ներս վազեց, մյուս բակից դուռը ծեծեցին, լսվեցավ ծառաների իրարանցում, միմյանց կանչելը, աղաների բարձրաձայն հարցերը…

Քիչ հետո դարձյալ, և, այս անգամ ավելի մոտից, լսվեց նույն աղաղակը: Այնքան նա մեծ էր ու կատաղի, որ ամեն դեմք գունատվեց:

Վաղուց է, որ ամենքը գիտեին, թե ինչեր էին կատարվում Պարսկաստանում: Թավրիզի, Շիրազի և Սպահանի ցույցերը ծխախոտի մենավաճառության դեմ՝ ամենքը լսել էին:

Անշուշտ Թեհրանումն էլ նույնն էր կատարվում — մտածեցին Նասրուլլահ խանի տանը: Մի քանի ծառաներ փողոց դուրս թռան, աղաները (Նասրուլլահ խանի եղբայրներն ու որդիները) տանիքի վրա բարձրացան վերարկուով և սպիտակ անդրավարտիքներով, իսկ հարեմխանայի առաջին բակի կանայք ներքինիին ուղարկեցին բիրուն՝ իմանալու եղածը:

— Մենավաճառի դեմ է, հանդարտեցեք...— հորդորեց նա կանանց:

Բայց երրորդ անգամ աղաղակն արդեն մոտենում էր և տանիքի վրա կանգնած աղաներից մեկը — լավ լսեցին նաև կանայք ու ծառաները — կանչեց.

— Այս կողմն են գալիս... բայց ինչո՞ւ, ի՞նչ կա այս կողմը…

Եվ իրարանցումը տան մեջ սաստկացավ: Մարդիկ գիտեն, որ ժողովուրդը զայրացած էր նաև պաշտոնեության, և մենավաճառը օտարներին տվող պալատականների դեմ: Նասրուլլահ խանը շահի գանձապահներից մեկն էր: Չլինի՞ արդեն ժողովրդի կատաղությունն այն կետին էր հասել, որ մտադիր էին մեծ պաշտոնյաների տների վրա հարձակվել:

— Այս կողմն են գալիս...— կանչեց փողոցից մի ձայն ևս:

— Հոսե՛յն, Ալի՛, Աքպե՛ր...— ձայնում էր տանիքի աղաներից մեկը կռացած դեպի փողոցը,— շներ, ուր եք կորել, եկե՛ք դռները ամրացրե՛ք...

— Մահմուդ, դու քաջ ես,— ասում էր աղաներից մյուսն իր հետևում կանգնած ծառային,— փողոց վազիր, գնա այդ աղաղակի կողմը և տես ովքե՞ր են, ո՞ւր են գնում, ի՞նչ են ուզում…

Ոչ միայն Մահմուդը, այլև մի քանի ուրիշ ծառաներ էլ, հետո դրացի տնից ելնելով 4-5 հոգի ևս, ոմանք ուղղակի պատերից ցած թռնելով՝ վազեցին մթության մեջ, դեպի աղաղակի կողմը:

Աղմուկը Նասրուլլահ խանի բիրունի կողմիցն էր գալիս — արտաքին մեծ դռան լայն փողոցից, կրկնվում էր պարբերաբար ու մոտենում էր հետզհետե ուժգին, ավելի կատաղի դառնալով:

Աղաներն առանց կատակի՝ սկսեցին վախենալ: Ոմանք ցած իջան զենքեր պատրաստելու, իսկ տանուտերի բացակայության ժամանակ նրա եղբայրը, որ հսկում էր, հրամայեց ծառաներին՝ համենայն դեպս բոլոր եղբոր որդիներին, կանանց ու երեխաներին իմաց տալ, որ եթե իրավ վտանգ լիներ, կարողանային կողմնակի դռներով ազատվել և ուրիշի տները գնալ:

Իրարանցումը մեծանում էր փողոցում: Ամեն տան տանիքների վրա սկսեցին ստվերներ երևալ. փողոցի մեջ վազող վազողի էր:

Տասը րոպեից հետո Նասրուլլահ խանի ծառաներից մեկը շնչասպառ տուն էր ընկնում և գոչում.

— Փախե՛ք, մեր տան վրա են գալիս…

Այս ձայնը բավական եղավ շարժելու ամենքին: Ճիչ, խառնաշփոթություն, աղմուկ տիրեց տան բոլոր մասերում:

— Խոսի՛ր,— հարցնում էր տանտիրոջ եղբայրը գունատ, կանգնած շնչասպառ ծառայի առաջ,— ինչ կա, ինչո՞ւ մեր տան վրա են գալիս, ի՞նչ ունին...

— Խեսփուշներ են... և որքան ցնցոտի, լոթի որ կան քաղաքում... Մի ինչ-որ դիակ ունին հետները... Բահերով, կացիններով են գալիս... հայհոյում են, սպառնում են բոլոր պաշտոնյաներին, խաներին սպանել, տները թալանել…

Եվ իրավ, փողոցի ծայրից լսվում էր նորից այնպիսի սոսկալի ոռնոց, որ Նասրուլլահ խանի եղբայրը ոստնեց ու շտապմամբ վազեց հարեմխանայի կողմը:

— Շուտ...— գոչեց նա վազելով,— հետևի դռներից դուրս, բոլորդ... փախեք, գալիս են...

Անկարագրելի է, թե ինչ եղավ հետո: Կանայք մոռանալով, որ առանց սավանի են, երեսները բաց, շատերը կիսամերկ — ճչալով փախչում էին, ոմն մի արկղիկ կորզած, մյուսը շփոթվելուց վերմակ էր քարշ տալիս հետը, աղախինները կաթսաներ էին տանում, ծառաները՝ ինչ որ պատահում էր: Ցատկում էին պատուհաններից, կոխոտում թուփ, բույս, իրար հրում, տղամարդիկ քիչ էր մնում կոխ տային կանանց, մի ծառա մինչև իսկ դեն շպրտեց հարեմխանայի դռնից անցնող իր խանումներից մեկին և չնայելով նրա ճիչերին, փախավ…

Երկու-երեք հոգի ճգնեցին բանալ Այիշե խանումի բակի դուռը — ծեծեցին, բայց անօգուտ: Ներսից փակել էին, որովհետև այնտեղ էլ իրարանցում էր. դեպի ավերակներն ելնող նեղ դռնից աշխատում էին թանկագին իրեղեններ դուրս կրել աղախինները, իսկ Ֆաթման և սև ստրկուհին մտած իրենց խանումի երկու թևը, մի սավանով փաթաթում էին նրան և ճգնում դուրս տանել:

— Ո՛չ, թողեք...— գոռում էր Այիշեն,— չե՛մ գնալ... ո՛չ…

Ու ճչում էր, դիմադրում:

Այդպես ժամանակ էր ահա, որ փողոցի ծայրում երևացին եկող խուժանի վառվող կերոնները. հետո թնդաց կատաղի աղաղակը և խեսփուշներից առաջնորդված մի ահագին բազմություն ցնցոտիների՝ կանգ առավ Նասրուլլահ խանի մեծ դռան առաջ:

Խեսփուշներն այնքան շատ չէին, որքան նրանց հետևող ցնցոտիները, լոթիները և կատաղի ամբոխը, որ հավաքվել էին քաղաքի ամեն կողմերից:

Չէր երևում ո՛չ մի կանոնավոր հագնված մարդ, չկար և կամ ամբոխի մեջ էր ծածկված մոլլա Նեջեֆ-կուլին: Ամենքից առաջ քայլում էր սեյիդ Հարիբուլլահը, որ երբեմն, աղաղակները լռելու ժամանակ, դառնում էր, բարձրացնում ձեռքերն ու մի քանի բառով գրգռում հետևողներին:

Երբ հասել էին Նասրուլլահ խանի դռան առաջ, ամբոխը կանգ առավ, կերոնների լույսով դիակը դրին դռան առաջ, սեյիդ Հաբիբուլլահը կանգնեց նրա մոտ, ձեռքի կացինով ուժգին հարվածեց դուռը և գոռաց.

— Է՛յ դուք, անհավատներ, ժողովրդի արյունը ծծող լրբեր, բացեք դուռը և տվեք մեզ մարդասպանին…

— Տվեք մեզ մարդասպանին...— կրկնեց ամբոխը:

Բայց երբ լուռ սպասեցին պահ մի, տան կողմից ոչ մի պատասխան դուրս չեկավ: Այն ժամանակ սեյիդը դարձավ ամբոխին և ասաց.

— Ահա, նայեցեք այդ տանը... Այստեղ է այն ավազակներից մեկը, որ պղծում է մեր օրենքը, մեր հացն ու ջուրը օտարի ձեռքն է տալիս և՝ նրա պոռնիկ կանայք սպանում ու դուրս են նետում իրենց որջերից մեր երիտասարդներին... Հանուն մեծ մարգարեի, ջարդեցեք դռները, թալանեցեք տունը, կոտորեցեք բոլորին և թող աստուծո օրհնությունը ձեզ վրա լինի…

Ասաց, ոստնեց դեպի դուռը, կացնի մի ուժգին հարված տվեց ու ետ քաշվեց...

Բարձրացավ կատաղի ոռնոց բազմաթիվ բերաններից, հետո դուռը ճռնչաց հարվածների տակ, փշրվեց մի քանի րոպեի մեջ և ամբոխը միմյանց հրելով ու կոխկրտելով ներս ընկավ…

Այդ խաժամուժի մուտքը հարուստ տան մեջ, ջարդն ու թալանը, ուրախ աղաղակներն ու ամանեղենների փշրվելը մի սոսկալի տեսարան էր, որ վերջանում էր միայն այն ժամանակ, երբ մի հրդեհ, ամեն կողմից վառած, լուսավորում էր դատարկ սենյակներն ու լզում ամեն ինչ՝ որ վառվող էր ընդարձակ շենքում:

Տան մեջ ոչ ոք չէր մնացել: Ամբոխը գոհ էր և զբաղված էր թալանով, բայց խեսփուշներն ու սեյիդ Հաբիբուլլահը գոհ չէին: Վերջինս, հարեմխանայի բակի ավազանի մոտ կանգ առած, սպասում էր տեսնելու մարդասպանին և կամ սպանվածին իբր վրեժ՝ մի քանի դիակներ: Բայց երբ տեսավ, որ արյուն չկար և խուժանը իրենց թալանն էր դուրս տանում առանց արյուն թափելու, ելավ ավազանի կողի վրա ու մեծաձայն գոչեց.

— Է՛յ, թալանող անասուններ, որ միմյանց ավարի վրա ընկնել գիտեք և մոռանում եք վրեժը... Ո՞ւր է մեր հավատքը օտարին ծախող դիակը, ո՞ւր է մարդասպանի գլուխը...

— Ոչ ոք չէ մնացել տան մեջ, աղա Սեյիդ,— ասաց մոտ կանգնածներից մեկը,— փախել են բոլորը…

— Եվ մենք նրանց տունը կրակի տվինք,— գոչեց մի խեսփուշ:

— Լավ, ուրեմն...— արեց սեյիդը իջնելով,— բավական վրեժ առինք, այժմ գնանք ուրիշ կողմ…

Ու առանց մի խիլ իսկ վերցնելու ավարից, սեյիդ Հաբիբուլլահը դուրս եկավ տնից խեսփուշների գլուխն անցած, որոնք ավարներով բեռնավորված ժողովեցան, և ինչպես մտել էին, այնպես էլ աղաղակներով դուրս գնացին:

— Գնա՛նք,— գոռում էր սեյիդը կացինը ձեռքին ցնցելով,— ժամանակ է բոլոր անհավատներին ոչնչացնելու, այսո՛ր վրեժի օր է…

Այս վերջին բառերն էին, որ լսվեցան թաղում և խուժանը դուրս գնաց, թողնելով, որ հետզհետե մեծացող հրդեհը լափեր ամբողջ փողոցի կեսը բռնող շքեղ շենքը ամեն կողմից…

Բ

Այս բոլորը պատահում էր աշնան վերջին, երբ բոլորովին ձյուն չկար Թեհրանում, եղանակն էլ տաք էր գարնան պես:

Քելբելայի մեծ մուշտեհիդի հրամանը, որ հաղորդում էր սեյիդ Հաբիբուլլահը խեսփուշներին, միմիայն մյուս օրն էր հայտարարվում քաղաքի մեջ:

Եվ այդ հայտարարությունը, պետք էր տեսնել, թե որպիսի՜ ապշեցուցիչ հետևանք ունեցավ. հետևանք, որ գուցե երբեք տեսնված չէր այդքան որոշ ո՛չ մի երկրում:

Հազիվ թե մի խումբ մոլլաներ ու սեյիդներ, թե՛ մզկիթների, թե՛ հրապարակների, թե՛ շուկաների մեջ համարձակ ու բարձրաձայն հաղորդում էին այդ հրամանը, որ անմիջապես և միահամուռ բոլոր ծխախոտ վաճառողները դղրդյունով կողպեցին իրենց խանութները, բոլոր ղեյլունները ցուցանման՝ փշրվեցին կամ մի կողմ դրվեցան, ամեն պապիրոս գետին ընկավ ու տրորվեց և ամե՛ն, բացարձակապես ամեն մարդ դադարեց ծխելուց:

Մենավաճառը վերացնելու համար էր մուշտեհիդի այդ առաջարկած, հրամայած ծայրագույն միջոցը:

Ո՛չ միայն շուկաներում հրամանը այդպիսի հանկարծական հետևանք առաջացրեց, այլ շուտով մուշտեհիդի պատվերը կայծակի արագությամբ մտավ նույնիսկ շահի հարեմխանան, ուր նույնպես փշրվեցան ծխափողներն ու ղեյլունները. շահի — իրեն շրջապատում անգամ դադարեցին ծխելուց, թեև զգուշացան ցույց անելու ձևով նետել պապիրոսները — ոտի տակ տրորել ծխախոտ, փշրել ղեյլուններ — ինչպես այդ անում էին ամեն փողոցի մեջ, շուկայի ամեն խանութ, ամեն անկյուն…

Մեծ մուշտեհիդի հրամանի տարածվելը և ժողովրդի ցույցը մի հինգշաբթի օր էր:

Այդ օրն իսկ քաղաք պիտի մտցնեին Խելարդեշտում բռնված ապստամբ սեյիդին, որին Ալեմգիր անունն էին տալիս և որ հայտնի կերպով քարոզել էր ապստամբություն՝ կրոնը պաղծող պետության դեմ, կիտել էր իր գլխին հարյուրավոր մոլեռանդների ու ճանապարհի վրա արյուն և ավեր սփռելով՝ մայրաքաղաքի վրա էր ուզում գալ:

Նասրեդդին շահը իր սովորական արագ վճռականությամբ իսկույն մի վաշտ զորք էր ուղարկել, ապստամբները ջարդվել էին, սեյիդ Ալեմգիրը բռնվել և այդ օր՝ հանդիսով քաղաք էր բերվում:

Վաղ առավոտվանից ամենքը շտապում էին Թոփխանե հրապարակը՝ ապստամբ գերիի մուտքը տեսնելու:

Սակայն և այդ օրը կատարվում էր Թոփխանեի մոտ գտնվող կրթության հրապարակում՝ սովորական շաբաթական զորահանդեսը:

Շրջապատված մի ստվար շքախմբով, թագավորի որդին, որ զորաց ընդհանուր հրամանատարն էր, Դերը-Էլմաս ծառուղու դարբասից արդեն երևում էր: Դռան կողքին շարված տասնի չափ թնդանոթաձիգ սուսերամերկ պահակներ անմիջապես բարև բռնեցին, վեց շեփորներ կերկերային և արքայորդին ծանրաքայլ, մեծավորական ակնարկներ նետելով ամեն կողմ, անցավ խոնարհած գլուխների միջով ու քայլեց դեպի կրթության հրապարակը:

Բայց այդ ի՜նչ այլանդակ խաժամուժ էր, որ խռնված՝ սպասում էր Դերվեզա-Ղազվին դարբասի կողքին:

Կիսամերկ, ցնցոտի, հաշմանդամ կանայք, մանուկներ, ծերեր ու երիտասարդներ վիրալից դեմքով, բոբիկ ու աղտոտ բռնել էին խռնված ամբոխի երկու շարքի առաջ: Հրում-հրմշտում էին միմյանց, ոտնատակ տալիս թույլերին, աշխատում էին իրար առաջ կանգնել, միմյանց ետ թողնել…

Պարզվեցին ձեռքեր, երբ աղան մտավ շարքի մեջ, բարձրացան աղաղակներ: Ֆերրաշները, որոնք քայլում էին առջևից, աշխատեցին իրենց երկար փայտերով ետ մղել նրանց, կանայք խռպոտ ձայնով ճչացին... և արքայորդին ստիպվեց անցնել նրանց միջով:

Չնայելով կատարվող հուզումներին, Թեհրանի բազմաթիվ մուրացիկները այդ օրն իսկ չէին կամեցել կորցնել և, ինչպես սովորություն էր դարձել, քաղաքի ամեն կողմերից, լուսածագից առաջ

անգամ կիտվել էին այդտեղ «աղայի» անցնելուն սպասելով, որովհետև արքայորդին էլ սովորություն էր դարձրել անցնելիս միշտ նրանց մի բուռ դրամ նետել:

Դա սովորական բան էր և մուրացիկներից բացի, շատ քիչ մարդիկ էին առհասարակ հավաքվում հինգշաբթի օրերը արքայորդու անցնելու ճանապարհի վրա:

Բայց այդ օրը, բացի մուրացիկներից, հրապարակի վեց դարբասներից կույտ առ կույտ ներս էր լցվում բազմությունը, տեղ բռնում դատարկ կողմերը և սպասում Ալեմգիրի բերելուն:

Սկզբում, քանի դեռ «աղան» չէր անցել, ամբոխի և արքայորդու անցած ճանապարհի վրա շարված մուրացիկներին պահակները զսպված էին պահում: Իսկ երբ անցավ, գրեթե վազն ի վազ սահեց նա այդ այլանդակ շարքի միջով, նետեց աջ ու ահյակ մի քանի բուռ դրամ — այն ժամանակ պահակները ետ քաշվեցին և տեղի ունեցավ մի խայտառակ խառնուրդ:

Գետին ընկնող յուրաքանչյուր դրամի վրա նետվել էին տասնյակ մուրացիկներ: Կին, տղա, ծեր, երիտասարդ խառնվել էին իրար, ահռելի և միանգամայն զզվելի կատաղությամբ: Թավալում էին ցեխի մեջ, բռունցքներով ծեծվում, խածնում էին, ոտնատակ տալիս իրար... Ճիչ, հայհոյանք, ոռնոց, աղմուկ…

Կանանց ցնցոտի սավանները ընկել էին, տղայք, խրված ցեխի մեջ՝ ոտնատակ էին գնում: Մի կողմում մի երիտասարդ գետին էր տապալել մի կնոջ և աշխատում էր նրա բռան մեջ եղած դրամը կորզել: Կինը գալարվում էր, հայհոյում, կծոտում. երիտասարդը հարվածում էր, գզգզում: Մի ուրիշ կողմ երկու ոտաբոբիկ ծերունիներ ճգնում էին հասնել՝ մարդկանց ոտների միջով սպրդող պատանուն, որ հաջողվել էր բավական դրամ ժողովել ու փախչել: Մի այլ տեղ՝ երկու կանայք պատին էին սեղմել մի ծերունու, ճչում էին, որ շատ էր ժողովել և որ իրենք կիսամերկ էին, որ այդ գծուծը չպետք է զրկեր իրենց: Ապտակ, կսմիթ, թուք ու ցեխ էին կարկտում նրա վրա. իսկ ծերունին անդրդվելի, բռունցքը գրպանի մեջ դրամով, լուռ թույլ էր տալիս, որ ծեծեն, բզկտեն իրեն, բայց ոչ փախչում էր և ոչ էլ ձեռքը գրպանից հանում…

Գտել էր ամբոխը իր զվարճությունը, հեռու կանգնած՝ քրքջում էին, հաղթողին քաջալերում կանչելով, ծեծվողին ծաղրում սուր խոսքերով:

Մարդկային խորին, ահավոր թշվառության այդ տեսարանը, ստամոքսային անասնական այդ կռիվը ժամանց էր սպասող ամբոխի համար:

Ոչ ոք տեղիցը չշարժվեց, մի քանի, ավելի այդպիսի բաների սիրահարները, մոտեցել, զննում էին, մինչև որ վերջ ի վերջո պահակների սպաներից մեկը գոռաց մուրացիկներին.

— Դե՛հ, բավական է, անամոթներ, կորսվեք, գնացեք…

— Թողե՛ք,— ձայնեց նրան ամբոխից մեկը,— մեզ զվարճացնում են:

Մուրացիկները և ոչ իսկ ուշադրություն դարձրին սպային, զորքերն էլ փորձեցին քշել նրանց, գոնե բաժանել կռվողներին, բայց հայհոյանք միայն ստացան: Նույն բանին արժանացավ նաև հրապարակի կարգապահ Հոսեյն նայիբը, որ փայտը ձեռքին, գոռգոռալով մոտ վազեց ու սրա նրա մեջքին հարվածներ իջեցրեց…

Եվ գուցե դեռ երկար շարունակվեր այդ, եթե հանկարծ չլսվեր Լալազարի կողմից երաժշտության ձայն, հետո մի աղմուկ, որ ալեձև տարածվեց ամբողջ հրապարակում.

— Բերո՛ւմ են, բերո՛ւմ են…

Մուրացիկները իսկույն ոտքի ելան, ամբոխը սեղմվեց դեպի Լալազարի բերանը և վայրկենապես ամեն ինչ լռեց:

Դարբասից մտնում էր նախ երաժշտությունը, որ նվագում էին պարսկական կոզակները, հետո երևացին 50 այլ կոզակներ իրենց գնդապետի հետ և հուսկ ուրեմն, հարյուրի չափ փոշոտ, աղտոտ

զինվորների մեջտեղում՝ երևաց սպիտակ ձիու վրա նստեցրած ապստամբը, որի ձեռքերը կապված հետևից՝ շղթան բռնել էր մի սպա, իսկ ոտները ամրացրած էին ձիու փորի տակ:

Երիտասարդ մարդ էր. չնայելով սպիտակ հագուստի վրա դրոշմված ցեխին և փոշուն, չնայելով կապույտ փաթեթի կեղտերին և գզգզված դրությանը, նրա դեմքը պարզ երևում էր լուսավորող արևի մեջ:

Ամբոխը սառած, լարված հետաքրքրությունից՝ դիտում էր այդ դեմքը: Սեյիդը ուղղաձիգ, սառը և անտարբեր նայում էր ուղիղ իր առաջ և մի տխուր, բայց արհամարհական ժպիտ խաղում էր նրա կիսաբաց շրթունքների վրա:

Ավազանի մոտ երաժշտությունը լռեց, ամբոխը ետ քաշվեց և կոզակների խումբն իր գերիի հետ մտան Դերը-Էլմաս ծառուղին: Ժողովուրդը խառնվեց այն կողմ, դարձյալ աղմուկ բարձրացավ և ամբողջ լայն փողոցը մինչև պալատի դուռը, ապստամբը և ոչ իսկ որևէ քաջալերական բառ լսեց ամբոխից:

Սակայն, երբ շահի մզկիթի առաջից ծռվում էին, այստեղ կատարվեց մի դեպք, որ շանթի ազդեցություն ունեցավ:

Հանկարծ ակիթից դուրս թռավ մի սպիտակազգեստ երկարահասակ սեյիդ, հրեց-հրմշտկեց ամբոխին, ոստնեց պատից դուրս ցցված պատվանդանի վրա և գոռաց գերիին.

— Ողջո՛ւյն, սեյիդ Միրզա-Ռիզա Ալեմգիրին...

Ալեմգիրը նայեց այն կողմ, գունատվեց, հետո ժպտաց և ասաց բարձրաձայն.

— Ողջո՛ւյն, սեյիդ Հաբիբուլլահ, ուրախ եմ, որ վերջին անգամ տեսնում եմ քեզ... Ես խաղս կորցրի…

— Իսկ մե՞նք՝ դեռ ո՛չ...— գոչեց սեյիդ Հաբիբուլլահը և դառնալով դեպի խառնվող ժողովուրդը, որոտացող ձայնով գոչեց.

— Ով սիրում է աստծուն և նրա մեծ մարգարեին, հանուն Քելբելայի մեծ մուշտեհիդին…

Իսկույն ձայները լռեցին և ամբոխը կանգ առավ: Կոզակների գնդապետը ըմբռնեց, որ մի նոր բան է կատարվելու հօգուտ գերիին, անմիջապես դարձավ ու գոռաց կոզակներին.

— Հառա՛ջ, վազքով... մտրակեցե՛ք գերիի ձին…

Բայց սեյիդ Հաբիբուլլահը տեսավ այդ, կայծակի արագությամբ նետեց իրեն պատվանդանից ցած և պայթելու չափ բարձր ձայնով գոռաց.

— Մի՛ թողնեք, մահմեդականներ, Քելբելայի մուշտեհիդի նայիբն է, որ բռնել-սպանել են ուզում…

Այդ խոսքերը բավական եղան ալեկոծության համար: Հազարավոր ամբոխը գրոհ տվավ դեպի կոզակները, որտեղից որ էր երևան եկան գավազաններ, սրեր... Կոզակների մի խումբը մտրակեց ձիերին, մյուսը նիզակները դեպի ետ՝ դեմ տվին... իսկ սեյիդ Հարիբուլլահը, որ ոտքի էր ելել ընկնելուց, ձեռքերով շեփոր կազմեց բերնի կողքերին և գոռաց դեպի ամբոխը:

— Հասե՛ք, խեսփուշներ…

Իսկույն ամբոխի գլխների վրայով գրեթե, զանազան կողմերից դուրս նետվեցին մի խումբ այլանդակ ցնցոտիներ, որոնք վրա տվին կոզակներին: Աղմուկ, ճիչ, ոտի տակ ընկնողների աղաղակները, փայտերն ու նիզակները, նետված դաշույններն ու բռունցքները խառնվեցին միմյանց ահռելի կատաղությամբ:

Կոզակները՝ մի սպայի հրամանի վրա՝ անմիջապես ձիերի գլուխը դարձրին, հետո միմյանց սեղմվեցին — փողոցի լայնքը բռնելով և նիզակները հավասարապես դեմ տվին խուժող ամբոխի առաջ…

Մինչ այդ, նրանց հետևի կողմում գնդապետը մի ուժգին հարված տվավ սրի տափակ կողմով Ալեմգիրի ձիու մեջքին, և խումբը գերիի հետ սրարշավ իջան, ձիերովն ուղղակի պալատի դռնով ներս ընկան և մեծ դարբասը շառաչյունով փակվեց նրանց հետևից…

Պալատի դռան մոտի պահակներն անմիջապես դուրս լեցվեցին, պարսպի վրա երևաց Նայիբը-Սալթանեի գլուխը և չէր անցել տաս-տասնհինգ րոպե, որ ամբոխը ջարդված, ծակծկոտված, մինչև իսկ տեղացող գնդակներից հալածված՝ քշվեց երկու կողմից պալատի փողոցների մեջ և կես ժամ հետո պալատի ամբողջ թաղի դարբասները շառաչյունով փակվում էին բոլոր անցորդների առաջ:

Ալեմգիրը կորսված էր այլևս, ժողովուրդը, սեյիդ Հաբիբուլլահը և սկզբից դարանի կեցած խեսփուշները չկարողացան ազատել նրան, շնորհիվ տեղին:

Սեյիդ Հաբիբուլլահը տրորված, հրված ու ջարդված դուրս նետվեց ամբոխից և ուշքի եկավ միայն այն ժամանակ, երբ տեսավ, որ Էնդերունի դռնից դուրս՝ գտնվում է Նասըրի խիավանում:

Կանգ առավ, հուսահատաբար ձեռքերը ծնկներին խփեց և քիչ մնաց լաց լիներ: Այնքան լավ պատրաստված դավադրությունը, շնորհիվ ամբոխի խռնվելուն և այդ պատճառով էլ՝ իր ուշանալուն՝ անհաջող եղավ:

Ճգնել էր պատռել ամբոխը, մոտ գնալ կոզակներին, գերիին, բայց ամեն անգամ ետ էր հրել նրան ժողովուրդը իր հեղեղումով և նա հազիվհազ, արյուն քրտինք մտած՝ կարողացել էր հասնել կոզակներին շահի մեչիտի կողքին… և ահա ամեն ինչ այժմ ոչնչացել էր, ժողովուրդը փշրվել էր տեղի նեղությունից — դեմ տված զորեղ զինվորական շղթայից և հալածվում էր՝ թողնելով պալատ մտցնելու Ալեմգիրին, որտեղից անշուշտ նա ողջ չէր դուրս գալու:

Հուսահատաբար կքվեց մի ծառի տակ և ծունկները տրորելով շուրջն էր նայում:

Խեսփուշներն անգամ չկային: Ամբոխի հոսանքը ցրվել, միմյանցից բաժանել էր նոցա ևս…

Թ

Մինչ այդ, սեյիդ Ալեմգիրին, որ իսկապես կոչվում էր Աղա Միրզա-Ռիզա, մտցրին արտաքին բակից դեպի ներս՝ շահի սրահը, ուր թագավորն իր մինիստրների հետ նստած խորհրդի սրահում՝ սպասում էր:

Պահ մի աղմուկը, հրացանաձգությունը ցնցել էր նոցա, ամենքը վախեցած ու շփոթված շարժվել էին դուրս վազելու, բայց շուտով հայտնվեց Նայիբը-Սալթանեն և հանդարտեցրեց՝ տեղեկացնելով շահին եղածները, հաղորդելով, որ խուժանն արդեն ցրված է և Արքի (պալատի թաղի) դարբասները փակված ու պաշտպանված նրանց առաջ:

Շահը դեմքը կնճռեց, պահ մի լռեց, հետո խիստ ձայնով ասաց.

— Եվ ո՞վ էր այդ սեյիդը, որ գրգռում էր ժողովրդին:

— Հայտնի չեղավ, ձերդ մեծություն…

— Լավ, ներս բերեք ապստամբին:

Ներս բերին Ալեմգիրին, որի ոտները շղթաներից ազատել էին, բայց ձեռքերը դեռ հետևից կապված էր և չվանի ծայրը բռնել էր սաադը-դովլեն, այն պաշտոնյան, որ ուղարկված էր ապստամբի դեմ զորքով:

— Աֆֆերի՛մ...— ասաց շահը խորը գլուխ տվող պաշտոնյային,— բարաքյալլահ□□□ Այժմ քանդիր դորա ձեռքերը և գնա ինքդ հանգստացիր…

Հետո, երբ քանդել էին և սեյիդ Ալեմգիրը անշարժ մնում էր դռան մոտ, շահը ակնոցները դրեց աչքին և պահ մի սկսեց խոր զննել նրան ոտից մինչև գլուխ:

Սեյիդը մնում էր լուռ, անշարժ և քիչ գլուխը խոնարհեցրած:

— Աջայի՛բ... (զարմանք),— խոսեց վերջապես շահը,— սա՞ է այդ նշանավոր Ալեմգիր կոչվողը... սա խո մի ջահել լակոտ է…

Հետո դարձավ նրան և ասաց խստությամբ.

— Դո՞ւ ես, որին Ալեմգիր անունն են տվել... Խոսի՛ր.. Դո՞ւ ես Ալեմգիրը, որ հանդգնեցար իմ դեմ ելնել... Պատասխան տուր:

Ալեմգիրը մի վայրկյան նայեց շահին ուղղակի և ասաց.

— Ինձ այդպես են կոչում... Իսկ ես ոչ:

— Իսկ դու ո՞չ: Իսկ ի՞նչ ես կոչում դու քեզ, ապստա՞մբ, թե՞ մարգարեից ուղարկված:

— Ես ինձ կոչում եմ սեյիդ Միրզա-Ռիզա, մարգարեի սերունդից…

— Հը՛մ... իսկ ո՞վ է ուրեմն այդ Ալեմգիր ասածը…

Սեյիդը դարձյալ լուռ մնաց մի րոպե և գլուխը կրծքի վրա խոնարհած, հետո նայեց ինքնակալին խորունկ շեշտով խոսեց.

— Թող աշխարհիս աղոթարանը /Շահին տրվող սովորական տիտղոս:/ թույլ տա ինձ մի քանի լավ խոսքեր ասելու նրան: Խոսքեր, որոնք ոչ թե իմ — սեյիդ Միրզա-Ռիզայի կողմից են, այլ իսկական Ալեմգիրի, բուն Ալեմգիրի կողմից…

— Աջայի՛բ…— դարձավ շահը սադրազամին,— ուրեմն այս մարդը ինքն իրեն Ալեմգիր չէ ուզում կոչել... տեսնո՞ւմ եք, բավական համեստ է եղել հարամզադան…

Ու ծիծաղեց: Պալատականներն էլ ծիծաղեցին:

— Ո՛չ, ձերդ մեծություն,— խոսեց սեյիդը,— ես ինձ այդպես ո՛չ անվանել եմ և ո՛չ կանվանեմ... Այդ մեծ անունը, իրավամբ միմիայն մեկին է պատկանում աշխարհումս և այդ **«միմիայն մեկը» — ժողովուրդն** է□□□

Շահը, որ ժպիտը դեմքին սպասում էր շողոքորթություն լսելու իր հասցեին և արդեն մտքում ողորմելի էր գտնում ապստամբին, ապշեց՝ լսելով այդ խոսքերը: Շարժվեց աթոռի վրա և մի «հըմ» արձակեց: Հետո նորից ակնոցը ցցեց քթին և ավելի ուշադրությամբ սկսեց զննել խոսողին:

— Այո՛,— շարունակեց սեյիդը,— աշխարհում միմիայն մի հատ **Ալեմգիր** (աշխարհակալ) կա, ամեն տեղ, հյուսիսից հարավ, արևմուտքից արևելք միմիայն նա է, որ իսկական աշխարհակալ է... ժողովուրդն է այդ և ահա այդ նույն Ալեմգիրն է, որ խոսեց իմ բերանով մեր իրավունքները բռնաբարող, մեր կրոնը պղծող և մեզ օտարին ծախողների դեմ...

Շահն իջեցրեց ակնոցը և հուզված ոտքի ելավ: Հետո մի քանի քայլ առաջ գնաց ու ասաց.

— Մա՛րդ, դու բաբի չե՞ս արդյոք:

— Ո՛չ, երբեք, ձերդ մեծություն... Ես մարդ եմ և այս րոպեիս Ալեմգիրի, իսկական Ալեմգիրի բերանը... Շատ եղավ մեզ այս բոլորը, թագավոր, շա՛տ եղավ, խնայիր քո ժողովրդին, խնայիր երկիրը և խնայիր մեր սուրբ կրոնը... Ժողովուրդը, ճշմարիտ է, ուղտ է համբերատար, բայց երբ չափազանց են տանջում նրան առյուծի է փոխվում... Քո պաշտոնյաները, ով աշխարհիս աղոթարանը, քո մեծամեծները խաբում են քեզ և ոսկիների փոխարեն օտարին ծախում մեր երկիրն ու կրոնը, մեր իրավունքներն ու արտոնությունը... Գալիս է այն օրը, երբ պարսիկը իր հողի մեջ օտար, ստրուկ և ֆակիր կհամարվի... Այս րոպեիս իսկ, թագավոր, նա մռնչում է սաստիկ ցավերից, տառապում է, ուտելու հաց չունի□□□ պաշտոնյաներդ եզիդների նման կեղեքում են

նրան անհաշիվ ու անգթորեն և խլեցին մեր ամեն ինչը... Ո՛չ տուն մնաց, ո՛չ իրավունք, և ո՛չ շարժվելու տեղ... Այժմ ղուրանն են ծախում ինգլիզին՝ նրանց ոսկին առնելով□□□ Ձգուշացիր, թագավոր, Ալեմգիրը զարթնել է, քիչ հետո կմռնչա կատաղությունից, ճանկերը կպարզի և այլևս ոչ ոք նրան դեմ դնել չէ կարող…

— Բայց... բայց...— ասաց շահը քանզևս հուզված,— այս սեյիդը հիմար չէ եղել և հիանալի էլ պարսկերեն է խոսում…

Հետո դարձավ մինիստրներին և ասաց քմծիծաղով.

— Տեսնո՞ւմ եք, ինչպես գիտե ձեր կերած կաշառքների մասին, ձեր կեղեքումները, ագահությունը... Բարաքյալլա՛հ սեյիդ... դեհ, տեսնե՞նք, էլ ուրիշ ի՞նչ գիտես... գուցե և այն գիտես, որ եթե ինգլիզներից ետ վերցնեմ տվածս արտոնությունը, պիտի միլիոններով տուգանք վճարեմ... ինգլիզը խո գիտե՞ս, կատակ չի սիրում անել... հը, գիտե՞ս այդ…

— Ձերդ մեծությունը ծիծաղել է սկսում ինձ վրա. թո՛ղ լինի. ես և ամբողջ ժողովուրդը գիտենք այդ... բայց ժողովուրդը համաձայն է վճարել այդ միլիոնները, միայն թե օտարների չտրվի մեր իրավունքները, չսահմանափակվի մեր ազատությունը..

— Այդպե՞ս... իսկ դու ունե՞ս այդ միլիոնները:

— Ալեմգիրը ունի...— ասաց հպարտությամբ սեյիդը,— նա կտա. ժողովիր նոցա մեծերին, կանչիր նոցա առաջնորդներին և պիտի համոզվես, որ ժողովուրդն իր շորերն իսկ կծախե, միայն կուզենա իր իրավունքները պահպանել և չծախել նրան օտարահավատների…

Շահը մի վայրկյան լուռ նայեց նրան, հետո դարձավ սադրազամին և ասաց.

— Հիմար չէ, ես ու իմ աստվածը. խելոք է ձեր բոլորիցդ… խելոք է և լավ խորհուրդներ է տալիս. սադրազամ, աչքի առաջ ունեցիր...

Ապա մեկեն դարձավ սեյիդին և ասաց խստությամբ.

— Իսկ դու չե՞ս այն, որ ասել է, թե պիտի կործանել իմ թագավորությունը, դու չե՞ս նա, որ գալիս էր ինձ դեմ կռվելու: Ասա՛, ուրանո՞ւմ ես այդ:

— Ո՛չ, թագավոր, ճիշտ է, այդ ես էի... բայց քո նույնիսկ մեկ պաշտոնյայի հանցանքի պատասխանատվությունը ընկնում է քեզ վրա, իսկ քո պաշտոնյաները...

— Լսո՞ւմ եք, մարդիկ,— գոչեց շահը պալատականներին, ապա դարձավ սեյիդին և ծիծաղելով ավելացրեց.

— Աֆֆերիմ, երևի գիտես, որ մեռնելու ես և դրա համար վճռել ես այդպես խոսել:

— Եթե գիտենայի, որ կապրեմ — դարձյալ այս նույնը և ավելի խիստ խոսքեր կասեի…

— Եվ պիտի ապրես...— քայլեց դեպի նա շահը,— պիտի ապրես, սակայն մինչև այն օրը, երբ ապացուցանեմ քեզ, թե Ալեմգիրը կոչածդ ամբոխը մի նախիր է, որին ուզածս ժամանակ և ուզածս տեղը կքշեմ, կջարդեմ, կոչնչացնեմ… և այն օրը, երբ Ալեմգիր ասածդ ոչխար դառնա ոտներս լզելու չափ, այն օր ես նրան կբերեմ քո կախաղանի տակ՝ քեզ վրա ծիծաղել տալու համար□□□ և ա՛յժմ, գնա□□□ Տարեք դրան բանտ…

— Ձգուշացիր, թագավոր,— խոսեց սեյիդը, երբ սպասավորներից մեկը նրան էր մոտենում դուրս տանելու,— Ալեմգիրը զորեղ է և... անհաղթելի:

— Կտեսնենք, կտեսնենք... Տարեք և լավ պահպանեցեք դրան... ուրիշ ասելիք ունի՞ս:

— Ոչ... միայն այն, որ Ալեմգիրը պիտի մռնչա... և վա՛յ ձեզ այն օրը, կփշրվեք և կամ նա իր պահանջածը կստանա…

— Այդ մասին կխոսենք քեզ հետ կախաղան գնալուց մի ժամ առաջ…

Ասաց շահը, ձեռքով նշան արավ դուրս տանելու, հետո մեջքը դարձրեց և մտավ իր առանձնասենյակը:

Ալեմգիր կոչվող սեյիդին տարան: Շահը ներս մտնելիս նշան արավ սադրազամին իր հետ գնալու և որովհետև բարձրաձայն էր խոսում, սրահի մեջ եղածները պարզ կերպով լսեցին սույն խոսքերը.

— Եվ ոչ մեկը, սադրազամ, ոչ մեկդ այդ սեյիդի չափ խելք չունիք... իրավունք ուներ նա□ պիտի գա մի օր, երբ Ալեմգիր-ժողովուրդը ձեր ագահաբար կերածները բոլորը ձեր քթիցը կհանի... հեռացեք բոլորդ…

Այդ ժամանակ էր ահա, որ սադրազամը ցած ձայնով մի բան ասաց նրան, որից հետո պալատականները սոսկումով ոստնեցին՝ լսելով շահի զայրալիր աղաղակը:

— Ինչպե՞ս...— գոռում էր ինքնակալը կատաղի,— արդեն□□□ և ժողովուրդը լսո՞ւմ է, կատարո՞ւմ է…

Պալատականները վախեցած միմյանց երեսի նայեցին: Հասկացել էին: Սադրազամը շահին հաղորդել էր մուշտեհիդի արգելքը ծխելու մասին և ժողովրդական ցույցերը, պատմել էր նաև Աշտիանցու—Թեհրանի մեծ մուշտեհիդի համակամությունը այդ խնդրում:

Պահ մի խոր լռություն տիրեց. ամենքի աչքը սևեռված էր շահի առանձնասենյակի բաց դռանը:

— Կանչել իսկույն Հաջի Մուհամմեդ Հասան թաջիրբաշուն /Վաճառականապետ, որ պետության կողմից ճանաչված է իբր դատավոր վաճառականների և նրանց արածներին պատասխանատու:/, պատժել նրան, որ թույլ է տվել խանութները փակել... Աքսորել նրան....

Պալատականների դողը բռնեց. ինքնակալը սաստիկ զայրացած էր երևում:

— Թո՛ղ...— լսվեց քիչ հետո նորից նրա ձայնը,— թող այդպես լինի... ո՛չ մի խոսք այլևս... Կանչել տուր Նայիբը-Սալթանեին... աքսորել թաջիրբաշուն…

Հետո, երբ դարձյալ լռությունը տիրեց, սենյակից գլխիկոր դուրս եկավ սադրազամը և գունատ՝ ձեռքով արեց ամենքին իսկույն հեռանալու:

Բոլորը ոտերի ծայրերի վրա շտապեցին դուրս ելնել սրահից:

Փոթորիկը սկսվում էր. ամենքը տխուր, մտախոհ և հուսաբեկ էին, զգալով, որ մոտեցել են ծանր օրերը:

Ժ

Սկսել էր մանր ձյունել, և ցրտերը վրա էին հասնում. բայց այնպիսի ցրտեր, որոնք միայն մի կամ երկու օր են տևում, այն էլ ոչ ավելի, քան զերոյից մի քանի աստիճան ցած: Տաք չէր — ահա բոլորը, այլև ցեխ էր, անտանելի ցեխ՝ մանավանդ լպրծուն դարձած շուկաներում և աղտոտ փողոցներում:

Պալատի շուրջը միայն քիչ մաքուր էր, այն էլ, որովհետև քարացած չէր մեծ մասամբ, հալած ձյունից ցեխանում էր և եղած աղբի ու տերևների մնացորդների հետ զզվելի կույտեր գոյացնում պատերի տակ:

Չնայելով դրան, դեկտեմբերի այդ ցուրտ օրը մայրաքաղաքի զանազան կողմերից հասնելով պալատի առաջ, ջորիներից ցած էին իջնում զանազան կրոնավորներ՝ շրջապատված հետիոտն խումբ-խումբ ծառաներով, հետո քղանցները ժողովում և ներս էին մտնում:

Շահը քաղաքում չէր և սադրազամն ազգային ժողով էր գումարում, ուր հրավիրված էին բարձր ազնվականությունից, բարձր հոգևորականությունից և միջին դասակարգից մի քանի հայտնի, հարուստ ու ազդեցիկ մարդիկ:

Սկզբից նա հայտարարել էր, որ ժողովը կայանում է՝ որոշելու համար, թե որտեղից և ինչպես պետք էր վճարել անգլիական մենավաճառի ընկերության տուգանքը, քանի որ ըստ հրամանի շահի մենավաճառը ջնջում էր:

Այդ բոլորը կատարվում էր մի շարք կարևոր դեպքերի իբր արդյունք: Ժողովուրդը հուզվում էր և ցույցեր էր արդեն սկսել. կրոնավորությունն արձակ-համարձակ գրգռում էր ժողովրդին՝ ոտքի ելնելու:

Օգտվելով մենավաճառի դեպքից, Պարսկաստանի այդ՝ եթե ոչ առաջին, գոնե երկրորդ շահը — կրոնավորությունը սեղմել էր իր շարքերը, կազմակերպվել գաղտնի ընկերության զորեղությամբ ցանցերը մեծացրել, գործակալներն ու դրդիչները բազմացրել և մտադիր էր մի կտրական հարված տալ շահի տիրապետության և մի անգամ ընդմիշտ զգացնել իր զորությունը:

Սեյիդ Միրզա-Ռիզա Ալեմգիրը ձեռնարկել էր հայտնի ապստամբության՝ նրա քաջալերությամբ, և չափազանց ոգևորությամբ ու արագ, առանց լայն պատրաստության գործի սկսելը՝ ոչնչացրել էր նրա շարժումը: Սեյիդ Հաբիբուլլահը Քելբելայի մեծ մուշտեհիդի նայիբներից (գործակալ) էր և Թեհրանի բարձր կրոնավորության հանձնարարությամբ էր ոտքի հանել խեսփուշներին...

Կրոնավորությունը ժողովրդի օգտի դիմակի տակ, այժմ այն աստիճան հանդգնորեն հրապարակներում, մզկիթներում և շուկայում ապստամբություններ էր կազմակերպում, որ սադրազամն ըմբռնեց կացության ծանրությունը:

Զինու ուժով անհնար էր դեմ դնել. զորքն անգամ ընդունակ էր դառնալու մեծ մուշտեհիդի կողմը, քանի որ, ինչպես նկատվեց, զորապետից սկսած մինչև հետին զինվորը ամենայն հպատակությամբ լսում և կատարում էին մուշտեհիդների հրամանը, փշրել էին իրենց ծխափողերը, ղեյլունները և համարձակությունն այն աստիճանի էին հասցրել, որ չէին քաշվում փողոցներում, բազմության մեջ՝ հայհոյել մինիստրներին, թագավորին…

Այս բոլորը շատ լուրջ հետևանքների կարող էին հասնել: Հնար չկար ուրեմն որևէ միջոցով չեզոքացնել կրոնավորության ազդեցությունը: Մնում էր մի կերպ զիջանել գոնե, նախ հուզումները դադարեցնել, սպառնացող ընդհանուր ապստամբության դեմն առնել:

Եվ շահը հեռացել էր քաղաքից ու չնայելով ռուսաց դեսպանատան նամակին վերադառնալու, որովհետև ժողովուրդը մտածում էր քրիստոնյաների կոտորած առաջացնել — նա ներս չեկավ, լուր ուղարկեց դեսպանատան, որ հոգ չանեն և հրամայեց սադրազամին շտապել ժողովը գումարելու:

Ուրբաթ օր էր ժողովի օրը նշանակված, դեկտ. 19-ին Ժողովուրդը ներկայացնող այդ խորհուրդը գումարվում էր շահի դիվանխանեն, որ երեկվանից պատրաստված էր դրա համար: Սադրազամն առավոտ շուտով պալատումն էր բոլոր մյուս մինիստրների հետ և ընդունում էր եկողներին:

Հետզհետե սենյակ էին մտնում սպիտակ փաթթներով ախոնդներ, կապույտ և կանաչ ապարոշներով սեյիդներ, խոնարհվում սադրազամի և մինիստրների առաջ, մի քանի րոպե փոխադարձ հաճոյախոսություններ անում և երբ սրահը լիքն էր, մեծ մինիստրն իր կողքին կանգնած մի բարձր կրոնավորի դարձավ և ասաց.

— Ի՞նչպես եք կարծում, չսկսե՞նք:

— Ինչպես ձերդ վսեմությունը կցանկա. բավական ժողովել են:

— Այո, գրեթե բոլորը կան:

Եվ դառնալով խումբ առ խումբ միմյանց հետ խոսողներին, ասաց բարձրաձայն.

— Աղաներ, սկսենք... համեցեք տեղ բռնեք...

Ամբողջ տասնհինգ րոպե տևեց մինչև միմյանց հրամցրին վեր ու վար, հետո տեղավորվեցին այնպես, որ սադրազամի աջ կողքը բռնել էին երկու հայտնի ախոնդներ, ձախը մի նշանավոր

սեյիդ, հետո մինիստրները, ապա մյուս կրոնավորները և ամենից ցած՝ մայրաքաղաքի հայտնի հարուստ վաճառականներն ու սեղանավորները:

Բոլորը նստել էին գետնին, պատերի տակ փռված թավշյա ներքնակների վրա:

Երբ տեղավորվեցին և մի քանի րոպե լռություն էր տիրել, մեծ վեզիրը շարժվեց, գրպանից կլոր փաթաթած մի թուղթ հանեց, դարձավ ժողովականներին և ասաց.

— Աղաներ, աշխարհիս աղոթարան, Իրանի մեծ շահնշահը, որի կյանքն աստված երկար պահպանե…

— Ամե՛ն,— ասացին ամենքը:

— … Բարեհաճեց լսել մեծ մուշտեհիդների և ժողովրդյան խնդիրը և վճռեց լուծել անգլիական ընկերության տված ծխախոտի մենավաճառը... Թավրիզում արդեն դա կատարված է և եթե այդ ընկերությունը դեռ պահում է իր ծառայողները և առևտրականներից առած թամբաքուն — պատճառը, ինչպես բոլորդ գիտեք, այն է, որ աշխարհիս աղոթարանը ստորագրություն է տվել Անգլիային, եթե ջնջի մենավաճառը, իբր վարձատրություն՝ պիտի հատուցանե նրանց կրած վնասները: Եվ իրավ, դուք էլ լավ տեսնում եք, որ ինգլիզներն ամբողջ Իրանում մեծ ծախսեր են արել և չեն կարող թողնել այնպես ու առանց մի օգուտի՝ հեռանալ: Բացի դրանից, Իրանը չի կամենալ, որ իր ինքնակալը տված խոստումը չկատարի, այլև ինգլիզը երեխա չէ, որ մենք ձեռքիցն ամեն բան խլենք, իրեն էլ գլխին խփենք ու երկրից դուրս ձգենք... Մի խոսքով, հարկավոր է այդ մարդկանց վնասները տալ և ճանապարհ ձգել.. Այնպես չէ՞, աղա...— դարձավ նա կողքի բարձր կրոնավորին:

— Իհարկե,— շտապեց ասել մոլլան,— այդ այդպես է. ինչքան որ անհավատ է ինգլիզը, բայց երբ մենք վնաս ենք տվել նրանց, պիտի վճարենք...

— Այսինքն,— ավելացրեց մյուս կողքի սեյիդը,— նախ պիտի ետ տանք, իհարկե, առածներս, հետո վնասներն էլ վճարենք...

— Իսկ ի՞նչ է նրանց պահանջը,— խոսեց ցածի կողմից մի սեղանավոր,— եթե մի քանի հազար թումանի…

— Ո՛չ,— ժպտաց սադրազամը,— այստեղ մի քանի հազարը ոչինչ չի անիլ□□□ միլիոններ են պետք:

— Անշուշտ,— խոսեց մեծ մոլլան,— աշխարհիս աղոթարանն իր գանձարանում լի փող ունի, որին աստված միշտ լի պահի, և կվճարի ու Իրանը կազատի անհավատների պղծումներից...

— Մի քանի միլիոնն ի՞նչ բան է շահնշահի միլիարդներով լի գանձարանի առաջ,— խոսեց մի ուրիշ մոլլա,— վճարենք և պրծավ գնաց:

— Շահի գանձարանը,— ասաց սադրազամը,— այնքան հարուստ չէ, որ կարողանա մի անգամով 12 միլիոն թուման տուգանք վճարել…

— Ինչպե՜ս...— կանչեց ներքևից մի վաճառական,— 12 միլիոն... Դա խո մի ամբողջ Իրանն արժե...

— Ասա աստաֆրուլլահ /Քավ լիցի:/, Հաջի Միրզա Լյութֆի,— ձայնեց մի սեյիդ,— Իրանը մի՞թե այդքան քիչ ես գնահատում…

— Տասներկու միլիոն...— ձայնեցին ամեն կողմից: Հետո գլուխներն սկսեցին դեպի միմյանց կռանալ, փսփսոց լսվեց այս-այն կողմից և վերջապես մոլլաներից մեկը քիչ բարձր ձայնով ասաց.

— Միթե անգլիացիք արդեն իրենց պահանջը արե՞լ են թղթով:

— Թղթով ո՛չ, սակայն ինձ տեղեկացրել են, աշխարհիս աղոթարանը գիտե, որ պահանջված գումարը դորանից պակաս չէ լինելու:

Այստեղ սկսեց մի վիճաբանություն, որ հետզհետե տաքացավ և ընդհանուր դարձավ: Վիճում էին թե անգլիական ընկերությունն իսկապես այդքան պիտի վնասեր և թե ինչ ունի նա արած, որ պահանջում է այդպիսի խոշոր գումար: Եղան առարկություններ, տաքացան, հայհոյեցին անգլիացիներին և հուսկ ուրեմն հասան այն հարցին, թե որտեղից և ինչ միջոցներով կարելի էր ձեռք բերել պահանջված գումարը:

Այն ժամանակ մինիստրներից մեկը, որ անշուշտ սկզբից ուներ սադրազամի խոսքը, զգուշությամբ մեջ ձգեց մի նոր հարկ սահմանելու և կամ անգլիացիներին երկրի մեջ մի ուրիշ արտոնություններ տալու խնդիրը:

Այս վերջին կետը հանդիպեց զորեղ դիմադրության, մանավանդ երբ Քելբելայի մուշտեհիդի փոխանորդներից մեկը խստությամբ գոչեց.

— Մեծ մուշտեհիդը պահանջ է դնում ոչ միայն խլել օտարների ձեռքից թամբաքուի մենավաճառը, այլև բոլոր այն արտոնությունները, որոնք տրվել են անհավատներին... Իրանի մեջ միմիայն իրանցին իրավունք ունի երկիրը շահագործելու և ուրիշ ոչ ոք:

Պահ մի ամենքը լռեցին՝ լսելով մուշտեհիդի հրամանը.

— Նույնը և ես կասեմ,— ասաց Թեհրանի մուշտեհիդ Միրզա Հոսեյն Աշտիանու գործակալը:

Աշտիանին ինքը չի կարողացել գալ, որովհետև շատ ծեր էր:

Խնդիրը կենդանացավ ուրեմն միմիայն եկամուտի նոր աղբյուրներ գոյացնելու վրա:

Եվ այստեղ էր ահա, որ հանկարծ մի երկարահասակ սեյիդ բարձրացրեց գլուխը և ձայնեց.

— Թող շնորհ անի ինձ մեծ սադրազամ-Էմին-Սոլթանը և պատկառելի ժողովը՝ լսելու:

Իսկույն ամեն շշուկ դադարեց և ամենքը սեյիդի կողմը դարձան:

— Ո՞վ է դա,— հարցրեց սադրազամը կողքի կրոնավորին,— ես դրան չեմ կանչել և չեմ էլ ճանաչում:

Կրոնավորը ժպտալով խոնարհվեց ու ասաց.

— Այդ սեյիդն ինձ՝ ծառայիդ հետ է եկել... Քելբելայի մեծ մուշտեհիդից հատկապես եկած գործակալն է... Սեյիդ աղա Հաբիբուլլահ…

Սադրազամը գունատվեց և շրթունքը կծեց: Ահա թե ինչ. մեծ մուշտեհիդի կողմից հատուկ գործակալներ են մտնում մայրաքաղաք և իրեն այդ հայտնի չէ: Հետո դեմքը կնճռեց և խստությամբ նայեց մինիստրներից մեկին:

Բայց սեյիդը ելել էր տեղիցը, ցցել երկար հասակը, ձեռքը պարզել և խոսում էր այդպես.

— Միակ մի հատ հնարք կա: Մեծ ուժ չունենք անհավատներին վռնդելու մեր երկրից, ոչինչ չտալու նրանց... Ինգլիզներն էլ շատ լավ գիտեն մեր թույլ լինելը և եթե նույնիսկ վնաս էլ կրած չլինեն, կառնեն մեզնից այդ միլիոնները... Պիտի տալ, ահա միջոցը, և պիտի տան այդ գումարը՝ նախ՝ շահնշահի գանձարանը և երկրորդ՝ այն մարդիկ, որոնք մեր արտոնություններն ինգլիզներին տալու համար մեծ փողեր են վերցրել…

Այս խոսքերը շանթի նման ընկան ժողովականների վրա: Մինիստրները շարժվեցին: Սադրազամն ուզեց ոտքի ելնել, բայց սեյիդը դարձավ դեպի նա և գոչեց.

— Ես չեմ զրպարտում. սակայն ձեզնից, Էմինը-Սոլթան, մինչև վերջին մինիստրը հարյուր հազարներով կաշառքներ եք ստացել ինգլիզներից... Նախ վերադարձրեք այդ գումարը, իսկ մնացածը ժողովուրդը պատրաստ է տալ…

Սադրազամը զայրացած ոտքի ելավ, նույնպես և մինիստրները, հետո բոլոր ժողովականներն էլ և խառնվեցին իրար: Մեծ մինիստրը մի ակնարկ նետելով եղածի վրա, զգաց, որ ամեն ինչ կորսված

էր և շտապեց կողքի դռնով դուրս նետվել: Նրան հետևեցին մինիստրները, որոնցից հետո սրահի մեջ բարձրացավ մի աղմուկ. սեյիդ Հաբիբուլլաhի ձայնը երբեմն գերիշխում էր, երբեմն մի ուրիշ մոլլայի զայրացկոտ խոսքերն էին լսվում և հուսկ ուրեմն, խառնիխուռն, ժողովականները միմյանց հետ վիճելով՝ սկսեցին դուրս գնալ, նստել ջորիները և շտապով հեռանալ պալատից:

Մինչ այդ, սադրազամը շտապով մտել էր խորհրդարանին կից սենյակը, սպասել, որ մինիստրներն էլ գային, հետո փակում էր դուռը և գունատ ասում նրանց.

— Ամեն ինչ վերջացավ, տղաներ... պետք է հեռագրել շահին քաղաք մտնելու…

Այդ միջոցին լսվեց մի աղմուկ դրսից, հետո դեպի բակը տանող դուռն ուժգնությամբ բացվեց և մի սպասավոր ներս մտավ շտապով ու սադրազամին տվավ մի հեռագիր ու ասաց՝

— Ղազվինից է. հրամայել են ասել, որ շատ կարևոր է:

Սադրազամը դողդոջուն ձեռքով պատռեց ծրարը և երբ կարդացել էր, ամենքը նկատեցին թե նա ինչպես ավելի գունատվեց և սկսեց դողալ:

— Աղաներ,— խոսեց նա մի վայրկյան լռությունից հետո դառնալով մինիստրներին,— Ղազվինում խռովություն է... Քաղաքապետը փախել է և Թեհրան է գալիս…

Հետո ծալեց թուղթը, գրպանը դրավ, խոնարհվեց ու ավելացրեց.

— Ես գնում եմ շահի մոտ…Իմաց տվեք այս բոլորը Նայիբը-Սալթանեին…

Ու թողնելով մյուսներին խորին անձկության և սարսափի մեջ, դուրս նետվեց սենյակից...

Հիրավի, Ղազվինում սկսվել էր ժողովրդի գործնական ցույցը, որ նմանում էր ուղղակի ապստամբության:

Մի մոլլա էր եղել սկզբնապատճառը: Բազարում տեսնելով, որ մեկը ծխում էր ղեյլուն, զայրացած խփել ու ջարդել էր ծխելիքը և ծեծել ծխողին: Սա գնացել էր քաղաքապետին գանգատ: Քաղաքապետն ուղարկել էր ֆերրաշներ՝ բռնելու մոլլային, բայց մոլլան գրգռել էր ժողովրդյան և այնպես լավ, որ ահագին ամբոխը վրա էր տվել քաղաքապետի պալատի վրա և սպառնացել սպանելու նրան:

Եվ այդպես էր ահա, որ քաղաքապետն ստիպվել էր փախչել քաղաքից, այն էլ շնորհիվ շահից այնտեղ աքսորված Թեհրանի թաջիրբաշի Հաջի Մոհամեդի: Ամբոխը թողել էր անցնելու իր օգտի համար աշխատող Հաջի Մոհամեդին կառքով, իսկ նրա կողքին գունատ և մեռյալի պես նստած քաղաքապետին, լավ չնկատելով ծածկված կառքի խորքում, կարծել էր Հաջիի ընկերներից մեկը…

Ի

Թեև սովորաբար մութ և ամայի են լինում Թեհրանի շուկանները գիշերով և նրա երկար անցքերի բնակիչներն են կազմում նախ՝ շների ոհմակները, հետո՝ այս-այն կողմ դարուղաններն (բազարի պահապաններ) և վերջապես ստվերների պես պատերի տակով սահող-անցնող խեսփուշները, սակայն այդ գիշեր բոլորովին ուրիշ կերպարանք ուներ նա, մանավանդ պալատի մոտ գտնվող շարքերում:

Ընդարձակ կամարների տակ սոսկալի աղմուկով հնչում էին շների ձայները, որովհետև շարժուն ստվերների խմբեր լուսավորված մի-մի աղոտ լույս սփռող լապտերով, արագությամբ երթևեկում էին մթին խորշերում. լսվում էին մարդկային աղմուկ, միմյանց հեռվից ձայնելու կոչեր և որն ավելի անսովոր էր — մեկեն հնչում էին ոտնաձայներ որևէ մութ կողմից և խավարից բարձրանում էին ոռնոցներ, բացականչություններ ու խառնիխուռն, անորոշ, բայց սպառնագին աղաղակներ:

Հետո այդ բոլորն ալիքի նման հոսում էր դեպի մի խորություն, անցնում դեպի մի այլ շարք և գնում ավելի հեռուները:

Պահնորդ այլևս չէր երևում. այլևս չէին լսվում նրանց զգուշացնող կանչերը. միայն շներն էին վրդոված. հարյուրավոր շներ, որոնք միահամուռ հաչոցներով, արձագանք տվող կամարների տակ, խառնելով իրենց ձայնը մարդկային աղմուկներին՝ դժոխային կերպարանք էին տալիս շուկաներին:

Աղմուկն ավելի շատ էր Սեբզե-մեյդանից ուղիղ դեպի ներքև պարզվող երկար ու լայն շուկայի մեջ: Շուկայի բերնից սկսած, հանկարծ հրապարակ էին ոստնել մթությունից, հարյուրավոր այլանդակ դեմքեր, որոնց առջևից քայլում էր մի մոլլա — կապերտի մեջ փաթաթված ու վիզը նրա մեջ թաղած սևադեմ անձ և մի ինչ-որ հսկա կիսամերկ, որ ձեռքի փայտն էր ճոճում օդի մեջ և խանութների տախտակյա փեղկերին ահավոր հարվածներ իջեցնում աջ ու ահյակ:

Իսկ մոլլան զիլ ձայնով գոռում էր անընդհատ. այնպիսի զիլ, սուր ձայնով, որ շներն անգամ սարսափով կծկվում էին պատերի տակ:

Որոշել որևէ նախադասություն այդ ժխորից, այդ քաոսային աղմուկներից՝ շատ դժվար էր հեռվից: Ամեն ինչ խառնվում էր իրար և մանավանդ արձագանքի թնդյունը կամարների տակ, ձայնային մշուշի նման ամեն ինչ խեղդում էր իր ծալքերի ցնցումների մեջ և խառնուփնթոր տանում հեռուները:

Բայց մոլլա Նեջեֆ-կուլին գիտեր, թե որոնց էր առաջնորդում. եթե աղմկում էր, խոսքերի հեղեղ էր դուրս վիժում կոկորդից, այդ ոչ թե հասկանալի մի բան ասելու համար էր, այլ միմիայն քաջալերելու, ոգևորելու իր աղաղակներով:

Ու հաջողվում էր. ոչինչ խաղաղ չէր մնում շուկայի մեջ. խլրտում, վազք, դռների վրա փայտի ուժգին հարվածներ…

— Է՛յ, փողոցայիններ, Է՛յ խեսփուշներ, լոթիներ, Է՛լ մոխրատան ցնցոտիներ, Է՛լ ճշմարիտ մյուսիլմաններ. զարկեք, փշրեք, գոռացեք… այսօր կռիվ կա, կոտորած կա, այսօր փառքի օրն է, հանուն մեծ մուշտեհիդի…

Ահա նրա բոլոր խոսքերը, որոնք կրկնվում էին, եռապատկվում և որոնցից յուրաքանչյուրն արտասանում էր նա ավելի և ավելի բարձր, զիլ, ականջ խլացնող ձայնով…

Երբ այդպես հարյուրավոր ամբոխը մոլլայի կատաղի աղաղակներով հասել էր շուկայի մեջտեղը, ձեթի ճրագի աղոտ լույսի մեջ երևաց, որ բոլորը գրեթե զինված էին ոչ միայն երկար ցուպերով, այլև սրերով և մինչև իսկ հրացանի սվիններով, որոնց ով գիտե որտեղից էին ձեռք բերել և ցցել երկար փայտերի ծայրերին ու նրանցով աջ ու ահյակ ծակոտում էին ինչ որ պատահում էր — պատ, խանութի դուռ, հաչող շների, կործանում էին ձեթի ճրագները, քարուքանդ անում տեղ-տեղ վերևից կախված լապտերները:

— Հառաջ ցնցոտինե՛ր, գոռացե՛ք, աղմկեցե՛ք, Է՛յ, խեսփուշներ, հոգիներդ կհանեմ, եթե որևէ պատ կանգուն թողնեք ա՛յս անիծյալ շենքից... դեհ, գոռացեք «սալավաթ»...

— Սալավա՛թ...— ոռնում էր ամբոխը...

Շուկայի շարքերի հանգույցում նրանց միացավ մի ուրիշ խումբ ևս, նույն տեսակ աղմուկներով, սակայն ավելի կանոնավոր և ավելի լավ զինված: Նրանց առաջնորդում էր մի սեյիդ, որ ձեռքում ճոճում էր կեռ ու երկար սուր և թնդացնող ձայնով կանչում.

— Քայլեցեք, հավատացյալներ, այսօր կրոնի հաղթանակի օրն է…

Երբ խմբերի գլխավորները մոտեցան միմյանց, սեյիդը բռնեց մոլլայի թևը և շտապով հարցրեց.

— Շա՞տ եք:

— Չորսից-հինգ հարյուր:

— Լավ զինվա՞ծ:

— Փայտ, սուր, սվին, ատրճանակ…

— Իսկ բա՞հ, կացի՞ն:

— Նրանք հետևից են գալիս... մոտ 50 հոգի...

— Լավ□□□ գոռացե՛ք, թող ավելի շատանան...

— Իսկույն կհարձակվենք…

— Իսկույն... քանի դեռ շենքը չեն պաշարել զինվորներով…

— Սալավա՛թ գոռացեք, Է՛յ, ցնցոտիներ…— դարձավ մոլլան իր հետևից եկող ամբոխին,— ծեծեցեք պատ, դուռ, շներին զարկե՛ք, աղմկեցեք…

— Հառա՛ջ,— դարձավ սեյիդը իր հետևից եկողներին,— քարուքանդ անենք բռնավորների անիրավությունները:

Ու քայլեցին դժոխային խառնուրդով, անասելի աղմուկներով:

Այս բոլորն այնքա՜ն հանկարծակի էր կազմվել և այնքան ահավոր էր, որ ո՛չ մի դարուղու չհամարձակվեց շարժվել տեղից — Սեբզե-մեյդանից դուրս գտնվող գիշերային պահակներն զգացին, որ շուկայում ինչ-որ բան է կատարվում, իսկույն իմաց տվին պալատի շրջապատից ներս եղած զորախմբին, հետո հնչեց մի շեփոր Արքի միջից և հուսկ ուրեմն պալատի թաղի զանազան կողմերում կերկերացին ուրիշ շեփորներ ևս…

Մինչև Արքը /Ամբողջ պալատի թաղը, որ պարսպապատ է:/ զարթնում էր, սպաները քնաթաթախ, իրար անցած՝ չգիտեին եղածը, մինչև բուն պալատի միջից հարց էին տալիս եղածի մասին և շտապով զարթեցնում էին քաղաքապետ-զորաց հրամանատար արքայորդուն... շուկայի միջի զինված խուժանը, որ Սեբզե-մեյդանի դռան փակված լինելուն համար նետվել էր Ջաբբախանայի փողոցի կողմը — դեպի բանտերը, արդեն կուտակվում էր նրա պատի տակ և կացինների հարվածների ձայնը հասնում էր մինչև շահի հարեմխանան…

Հարձակումը բանտի վրա էր: Երկար չտևեց. տասնևհինգ րոպեի մեջ ջարդել էին դռները, ներս խուժել, պահապաններին ծեծել, փախցրել և չէր անցել այլևս տաս րոպե, որ խուլ աղմուկներից հետո հանկարծ մթան միջից փողոց դուրս բերին ձեռքերի վրա բարձրացրած մի սեյիդի և ահավոր աղմուկը որոտաց.

— Սալավա՛թ…

— Սալավա՛թ...— հնչեց ամեն կողմից:

Հետո ամբոխն սկսեց ջարդուփշուր անել ամեն բան, բայց մեկեն առաջնորդող սեյիդը գոռաց.

— Վերջացա՛վ... ով սիրում է մարգարեին, թող ետ քաշվի, Ալեմգիրն ազատված է…

Ապա շտապով մոտ քաշեց մոլլային, մի բան ասաց նրան և հանկարծ Նեջեֆ-կուլին ցցվեց երկու ոտքի վրա ու ձայնեց.

— Խեսփուշնե՛ր, ի՛նձ մոտ…

Ամեն կողմից սահելով կամ ոստնելով շրջան կազմեցին խեսփուշները, առին իրենց մեջ մոլլային, սեյիդին և ազատված բանտարկյալին, ճեղքեցին ամբոխը և անհետացան մթին փողոցներում:

Եվ ժամանակն էլ էր. դիմացից լսվում էին արդեն ոտնաձայներ, բարձրանում էր մի մութ, պատի նման շարժուն գիր և փողփողում էին հրացաններ:

Զինվորներ էին, որոնք մի սպայի հրամանի տակ սվինները դեմ տված գալիս էին ամբոխի վրա:

Ամբոխը, մնացած առանց առաջնորդների և աղմուկներով քաջալերողների, խառնիխուռն տեղի տվավ, սպայի հրամանի վրա ցրվեց կողմնակի նեղ փողոցներում և քիչ հետո զինվորները հրացաններն իջեցրած՝ միմյանց երեսի էին նայում:

— Բայց ի՞նչ եղավ,— գոռաց սպան,— ինչո՞ւ էին եկել և ինչո՞ւ այսպես շուտ ցրվեցին:

— Բանտի վրա էր,— ասաց մի զինվոր:

Մոտ վազող բանտի պաշտոնյաները դողդոջուն պատմեցին եղածը:

— Դռները ջարդել էին, փշրել սեյիդ Միրզա-Ռիզա Ալեմգիր կոչվող բանտարկյալի շղթաները, հետո ոչ մի վնաս չտալով, ոչ մի կաթիլ արյուն չհոսեցնելով, ձեռքերի վրա էին բարձրացրել ազատվածին և անհետացել.

— Ո՞վքեր էին, ի՞նչ ամբոխ էր, ո՞վ էր առաջնորդողը…

— Խեսփուշներ էին…

Սպան դեմքը կնճռեց, հրամայեց զինվորներին ներս մտնել, իսկ ինքը պալատ գնաց՝ սպասող Նայիբը-Սալթանեին լուր տանելու:

Շահն էլ զարթնել էր և հուզված ման էր գալիս սրահում, սպասելով լուրերի:

— Նայիբը-Սալթանեն գունատ առաջ եկավ և պատմեց եղածը:

— Այդպես,— ասաց շահը,— ազատեցին նրան... ուրեմն նա իրավունք ուներ…

Հետո մտախոհ նստավ, ձեռքով արավ որդուն՝ հեռանալու և մռմռաց.

— Իրավունք ուներ հարամզադան... ես դեռ չեմ ճանաչում ժողովրդին. Ալեմգիրը շարժվում է…

Այս դեպքերն էին տեղի ունենում ահա այն գիշերը, որի լուսանալուց հետո էր, որ կատարվեց պարսկական նորագույն պատմության մեջ կարևոր և հետաքրքիր կետ կազմող դեպքը — ժողովրդի ապստամբությունն իր ինքնակալի դեմ:

L

Վաղ առավոտից ամբոխը խռնվել-բռնել էր պալատի շուրջը: Արքի դռները կիսաբաց էին թնդանոթների հրապարակի կողմից, իսկ զինվորները պատ էին կազմել ներսից. մինչև իսկ մի քանիսը բարձրացել էին դարպասի գլխի բարձր աշտարակների վրա և այնտեղից դիտում էին ժողովրդի շարժումը:

Այդ միևնույն դրության մեջ էր նաև վարի կողմի — Մեյդան-շահ կոչվող հրապարակի վրա բացվող դուռը: Սեբզեմեյդանի կողմից, շուկայից ելնելով խռնվում էին փողոցի մեջ ամեն տեսակի մարդիկ և անցուդարձը լիովին կանգ էր առել:

Հուզված մտքերը մի պատրվակ էին որոնում և այդ պատրվակը շահը — ինքը տվավ:

Անհամբեր, կատաղած գիշերային անցքից և մանավանդ սաստիկ զայրացած, որ ժողովուրդը խլել էր Ալեմգիր սեյիդին բանտից, շահը մտածել էր մի կտրական հարվածով ամեն ինչ վերջացնել և առավոտ շուտով իր Միրզա Իսսա, Թեհրանի նոր փոխ-քաղաքապետին ուղարկել էր Թեհրանի մեծ մուշտեհիդի՝ Աշտիանու մոտ: Բացի դրանից, նա գիշերով հրամայել էր զարթեցնել և պալատ կանչել սադրազամին և բոլոր մյուս նախարարներին, գոռացել էր, հայհոյել անխտիր ամենքին, խիստ նախատել իր որդի— Նայիբը-Սալթանեին, որ չէր կարողացել ապստամբ սեյիդին մի ապահով տեղ թաքցնել, ոտները գետնին էր խփել և գոչել.

— Այսօր իսկ վերջ տալ բոլորին, ապա թե ոչ՝ բոլորդ ձեր պաշտոններից կզրկվեք…

Միրզա Իսսահ՝ սիրտը դող եղած շահի իրեն հանձնած կարևոր պատգամավորությունից, մենակ, առանց թիկնապահի անգամ գնացել էր Աշտիանու մոտ:

Հարյուրամյա ծերունի մուշտեհիդը, չնայելով նոր լույսը բացվելուն, զարթուն էր: Քաղցր ժպիտով ընդունեց շահի պատգամավորին, հրամայեց կողքին նստել, հրամայեց թեյ բերել և ասաց.

— Ներեցեք, որ անկարող եմ ղեյլուն հրամցնել... հարամ է ծխելը…

Փոխ-քաղաքապետը քիչ կարմրեց, մի քանի խոսք կակազեց, հետո գլուխը կախ, առանց ծերունու երեսին նայելու՝ ասաց.

— Ես, իհարկե, իմ կողմից... ոչինչ, ոչինչ չունիմ ասելու. Հազրաթը Մեհտիի ջաննիշին /Նշանավոր մուշտեհիդները համարվում են անհետացած իմամ Մեհտիի հոգին կրողը: Ջաննիշին՝ նշանակում է հոգեկիր:/ մեծ մուշտեհիդի հրամանը՝ հրաման է, աստուծո պատգամ... Բայց, գիտեք... Աշխարհիս աղոթարան շահնշահը, որի կյանքն աստված երկար անե, որ ինքը, ինչպես գիտեք, բարեպաշտ, մեր սուրբ կրոնի համար ջերմեռանդ…

— Իհարկե, գիտեմ,— ժպտեց ծերունին միջահատելով,— և ինձ շատ ցավեցնում է նրա համառությունը... Ինքն էլ, փառք աստուծո, լավ գիտե, որ շերիաթին դեմ է, ուղղակի կրոնին դեմ է օտարահավատներին ծախել մեր իրավունքները, մյուսիլմանի սեփականությունը... Շատ, շատ եմ ցավում... բայց ինչ արած, կրոնն ավելի մեծ է, ղուրանն ավելի հարգելի՝ քան ամեն թագավոր…

— Բայց,— առարկեց փոխ-քաղաքապետը,— աշխարհիս աղոթարանը ցանկանում է այս բոլորին վերջ տալ... Ինքներդ գիտեք և տեսաք, որ նա ջնջեց մենավաճառը, ուրեմն էլ ինչ է մնում, չէ՞ որ նա կատարեց կրոնի պատվերը, ժողովրդի պահանջը... իսկ ժողովուրդը, ձերդ սրբությունը դեռ չեք ուզում ծխել... Ծխող մարդու համար,— ավելացրեց նա ժպտալով,— գիտեք, շատ դժվար է այսքան երկար դիմանալ առանց բարկանալու՝ խենթության նման բաներ... այ, ժողովուրդն էլ հենց այդպես է... չծխելուց...

Մուշտեհիդը լրջացավ, նայեց նրան պահ մի, հետո ասաց.

— Ձերդ վսեմությունը շահի կողմից հրամա՞ն ունի ինձ տալու:

— Ո՛չ, աստված ոչ անի, ինչո՞ւ հրաման... Կրլեյը-ալեմը միայն խնդրում է ձեզ սկսել ծխելու և օրինակ լինելու ժողովրդյան, որ այս բոլոր խռովությունները... Գիշերս, օրինակ. բանտի վրա են տվել, պահապաններ սպանել, մի ապստամբի ազատել…

— Լսել եմ,— ասաց մուշտեհիդը,— բայց ոչ մի կաթիլ արյուն չէ թափված... իսկ ազատվողը Քելբելայի մեծ մուշտեհիդի նայիբն է, որին չէր կարելի բանտարկել... Շահը այդտեղ էլ սխալ է գործել... բայց ես չեմ ծխի... Քելբելայի մեծ մուշտեհիդին է պատկանում վերացնել արգելքը. և այդ արգելքը կվերջանա, եթե օտարականների ձեռքից ամեն ինչ խլվի և մեր ժողովրդյան իրավունքները վերադարձվի մեզ…

Փոխ-քաղաքապետին, մուշտեհիդի կտրուկ և քիչ խիստ ձայնով ասված այդ խոսքերից հետո, մնում էր միայն ոտքի ելնել և մեկնել, սակայն նա նստած մնաց և գլուխը մտախոհ՝ խոնարհեց կրծքի վրա:

Դա զարմացրեց կրոնապետին և երբ երկուսն էլ քիչ լուռ էին մնացել, ասաց.

— Ուրիշ էլ ասելիք ունի՞ք... աղոթքիս ժամանակն է…

Փոխ-քաղաքապետը ոտքի ելավ ծանրությամբ, հետո գունատ՝ խոնարհվեց և հազիվ լսելու ձայնով մրմնջաց.

— Աշխարհիս աղոթարանը հրամայեց ինձ հայտնել, որ եթե չեք ուզում ծխելը սկսել, հարկավոր է ձեզ հեռանալ քաղաքից և գնալ նշանակված տեղը...

— Աքսոր...— ժպտեց մուշտեհիդը,— ինչ կա... Ասացեք շահին, որ ես կգնամ, որովհետև ծխել չեմ կամենում…

Հետո վերցրեց գետին դրված ղուրանը և բաց արավ: Փոխ-քաղաքապետը խոնարհվեց և դուրս գնաց:

Սակայն մուշտեհիդը սենյակում մենակ չէր. բացի դրանից, բաց դռներից բոլոր ծառաներն ամեն ինչ լսել էին: Եվ չէր անցել կես ժամ, որ լուրը տարածվել, ցնցում էր ամբողջ քաղաքը:

Ժամը 10-ի մոտերը արդեն լի էր թե Թոփխանեի հրապարակը, և թե Արքը շրջապատող փողոցները: Աշտիանուն աքսորելու լուրը բերնե-բերան անցավ-տարածվեց, հուզված ամբոխը, շարքերը սեղմած և սպառնագին՝ իրար անցան, մոլլաներ ու սեյիդներ բացարձակ քարոզում էին հարձակվել պալատի վրա, գնալ շահի մոտ, իրենց բողոքն ու պահանջը դնել...

Ապստամբությունն սկսում էր մեծ, ահավոր չափերով:

Դեսպանատներն սկսեցին լեցվել քրիստոնյաներով, անգլիական դեսպանատունը զինվեց, թնդանոթներ հանեց լեցրած՝ պատրաստեց իր դռան աշտարակների վրա: Իսկ մենավաճառի ընկերության գրասենյակն անմիջապես դատարկվեց, որովհետև մի սպառնագին ամբոխ, արդեն աղաղակել սկսած՝ քայլում էր դեպի շենքը:

Պալատում շահն իր պարտեզն էր իջել, անհանգիստ քայլում էր ծառուղու մեջ, ձեռքի փայտով ծառերի բները ծեծում անխոս և մռայլ, մինչ սադրազամն ու մինիստրները միմյանցից հեռու սպասում էին և ոչ ոք չէր համարձակվում մի բառ արտասանել:

Այդպես տևեց մի քանի ժամ, դրսից փոքր առ փոքր ամբոխի ձայնը բարձրացնում էր և ժամը 1-ի մոտերն արդեն մի ահավոր աղաղակ գալիս էր ցնցելու պալատը:

Բազարի մուտքից — Սեբզե-մեյդանից տրվեցավ ժողովրդյան առաջ գնալու նշանը:

Մի սեյիդ էր այդ, մի երկարահասակ երիտասարդ, որ ճղեց բազմությունը, ելավ մեյդանի դռան պատվանդանի վրա և գոռաց.

— Հանուն մեծ մարգարե, իմամ Մեհտիի և նրա ջաննիշին՝ Քելբելայի և Թեհրանի մեծ մուշտեհիդների...

— Սալավա՛թ...— կանչեց ամբոխը:

— Գնանք շահին մեր ասելիքն ասելու և թող կործանվին այն մարդիկ, որոնք անհավատներին են ծախում մեր երկիրը.... Քայլեցեք…

Հետո ոստնեց ցած և համարձակ գնաց դեպի Արքի մեծ դուռը, որ բացվում էր ճիշտ պալատի վրա՝ Մեյդանը-շահի կողմից:

Ամբոխի բուռն հոսանքից կիսաբաց դուռը ճռնչաց, և ժողովուրդը, հազարավոր գլուխներ, ահագին աղաղակներով խուժեցին ներս, ետ մղելով պահակ զինվորներին:

— Դեպի պալատ, մյուսիլմաններ, ով սիրում է Հազրաթը Մուհամմեդին... Կանչեցեք, յա՛ Ալի…

— Յա՛ Ալի՛…— ոռնաց ամբոխը և քայլեց:

Պալատի մեծ դուռը կողպած էր: Սեյիդը քայլեց դեպի Նայիբը-Սալթանեի փողոցը՝ ամբոխը հետևից. սակայն այնտեղ մի գունդ զինվորներ, այն էլ շահի լեռնական կատաղի թիկնապահները, մի խիստ պատ կազմած, սվինները դեմ տվին…

— Ճանապա՛րհ,— գոռաց սեյիդը նրանց,— եթե դուք էլ անհավատ եզիդներ չեք, ճանապարհ տվեք…

— Ե՛տ գնացեք,— գոռաց մի սպա,— հրաման չկա այս կողմից:

— Լավ, ուրեմն, ժողովուրդ,— դարձավ սեյիդն ամբոխին,— եթե այս կողմից ճանապարհ չկա, ուրիշ կողմով գնանք.... Հառաջ մյուս փողոցներով…

Ամբոխը «յա Ալի» աղաղակները բերնին դարձավ, Արքի դռնից դուրս եկավ, հետո փողոցում մի կատաղի վազք սկսեց երկու ճյուղերով: Մի ճյուղը սեյիդի առաջնորդությամբ պտույտ գործեց Շեմյուլ-իմարեթի շուրջը և Էնդերունի դռնից ներս խուժեց, իսկ մյուսը մի ինչ-որ կարճահասակ մոլլայի հետ Ջաբբախանայի փողոցից վրա տվավ Արքի երկաթապատ դռան, փշրեց, պահակներին ոտքի տակ առավ, միմյանց կոխոտեց և Դերը-Էլմաս ծառուղու միջով հասավ միանալու առաջինին:

Սեյիդը Հաբիբուլլահն էր, իսկ մոլլան՝ Նեջեֆ-կուլին իր հավիտենական անբաժան Սեյիդ խանի և ամենահանդուգն խեսփուշների հետ:

Պալատի դռնից խուժանը մղվեց դեպի Նայիբը-Սալթանեի տան առաջ: Այդտեղ, մինչև այդ ոչ մի զենքի չդիմող ամբոխն արդեն կատաղեց, երբ դարձյալ դեմ եկավ այս անգամ շահի ձիավորված թիկնապահներին:

— Յա՛ Ալի,— գոռաց սեյիդ Հաբիբուլլահը, հետո գետնից մի քար վերցրեց և նետեց դեպի զինվորները:

Նշանը բավական էր. իսկույն քարերի մի կարկուտ էր, որ գնաց տեղալու զորքի գլխին, իսկ մոտ կանգնածներն սկսեցին փշրել արքայորդու տան լուսամուտները և հառաջանալ:

— Հառա՛ջ,— ոռնում էին հետևից սեղմողները,— պալա՛տ մտեք…

Ասելը հեշտ էր, բայց մուինը-նիզամը, թիկնապահների սպան, սուրն էր հանել և գոչում էր ամբոխին.

— Ե՛տ գնացեք, թե չէ կիրամայեմ կրակել...

— Չե՛ս համարձակվիլ, անհավատների ընկեր, եզի՛դ□□□— կանչում էր նրա դիմացը սեյիդը:

— Ե՛տ ասում եմ...— սպառնաց սպան:

— Հառա՛ջ ժողովուրդ:

— Կրա՛կ…

Ու հետևեց հրացանների պայթյուն, նեղ փողոցը լցվեց ծուխով, ճիչերով... Մի խառնաշփոթություն հաջորդեց դրան. ամբոխը երեսը դարձրեց ու սկսեց ետ մղվել…

— Կրա՛կ, ե՛տ քաշվեցեք... զինվորնե՛ր, այստե՛ղ. կրա՛կ…

Ահա թե ինչ էր լսվում երբեմն հրացանների պայթյունի, խառնիխուռն աղաղակների, ճիչերի, հայհոյանքների մեջ…

— Հառա՛ջ, խեսփուշնե՛ր, դաշույններով...

Մոլլայի զիլ կանչն էր: Առաջին ընկնողներից մեկն էր եղել: Գնդակը ճիշտ կրծքում, ետ մղվեց, ընկավ մի գործավորի վրա, մի խուլ աղաղակ արձակեց, կքվեց... և մի վայրկյանում ոտքերի տակ գնաց, խուսափող ժխորի ոտքերի տակ…

Մինչ այդ պալատում սոսկումը քարացրել էր ամենքին: Բայց ո՛չ. դրամատիկական այդ ծայրահեղ րոպեներին, չպակասեց ծիծաղելին ևս:

Շահը մտած խոր, ներքին սենյակները, լուռ նստել էր մի անկյունում՝ թմրածի նման: Սադրազամը մի քանի անձերով շրջապատված՝ կծկվել էր Գյուլիստան այգիի պատի տակ և ձեռքի թղթերն էր շուռումուռ տալիս: Լռությունը թագավորում էր ամեն տեղ պալատում. ոչ ոք չէր խոսում, ամենքը սրել էին ականջները դեպի փողոցը:

Իսկ այդ բոլորի մեջ հանկարծ ներսից երևում են վեց սենեկապաններ գլխից մինչև ոտք զինված որսի հրացաններով և առաջնորդած Միրզա Մեհմեդ խանշահի սպասավորից, անցնում են կոկոզավիզ ու կանգնում հարեմխանայի դռանը:

Ծիծաղելի էր տեսնել նրանց երկփողյան ողորմելի զենքերը, նրանց գունատ դեմքն ու դողդոջուն շրթունքները և այդ բոլորի հետ կոկոզավիզ կեցվածքը:

Յոթ հոգով ուզում էին պալատը պաշտպանել... Դրսում հրացանաձգությունը շարունակվում էր ճիչերի, խառնիխուռն աղաղակների հետ, սակայն ամբոխը ետ-ետ էր գնում, որովհետև տեղացող գնդակները փռում էին նրանցից համարձակներին, մանավանդ որ զինվորների գնդերը սկսում էին գրեթե պաշարել նրանց երեք կողմից, սեղմելով դեպի Էնդերունի շատ նեղ անցքը:

— Կրա՛կ…— դեռ լսվում էր սպայի ձայնը:

Բայց այլևս չէր լսվում և ոչ իսկ մոլլայի զիլ աղաղակները:

Ձարդված, պատերի սեղմած, հրած, հրմշտկված, տեղացող գնդակների կարկուտից սարսափահար՝ շտապել էր նա կծկվել, ոտքերի միջով անցնել և գրեթե կիսամեռ դրության մեջ էր, որ գնաց ընկնելու Նասըրի խիավանի մի սրճատան մեջ: Խեսփուշների փոշին անգամ չէր երևում, ամբոխը կոխոտել, տարել էր նրանց, մի քանիսները գետնի փոշին էին լզում, շատերը վիրավոր, հայհոյելով այս-այն կողմն էին անհետացել և Սեյիդ խանը, դժբախտ օպիում ծխողը, ճիշտ մի ծառի տակ, գնդակահար մեռել էր փոքրիկ փոսի մեջ, գնդակի պես ինքն իր վրա ժողովված:

Եվ դեռ հրացանները պայթում էին, փողոցը ծխով, ճիչերով լեցնում…

Պահ մի ևս, և մի փոքրիկ թնդանոթի փողը երևաց պալատի աշտարակի վրա…

Քիչ հետո Արքը դատարկվել էր — թողնելով փողոցների մեջ բազմաթիվ դիակներ...

Սակայն պարսիկ ժողովուրդը հաղթել էր:

Ճշմարիտ է, զոհեր և շատ զոհեր էր տվել նա, բայց այդ զոհերի գնով էր, որ հաջողվեց իր իրավունքները ետ կորզել:

Շահը վախեցավ, զգաց, որ հիրավի **Ալեմգիրը** երբ զարթնում է և մռնչում, կարող է ոստումներ ևս գործել ու իր ճիրանների տակ բզկտել ա՛յն ամենը, ինչ որ իր իրավունքներն է բռնաբարում:

Ու մենավաճառը ջնջվեց, մյուս օրից իսկ լիովին լուծվեց, վճարելիք տուգանքը մի կերպ կատարվեց: Շահը մի ընծա ուղարկեց Աշտիանուն, աղաչեց Քելբելայի մուշտեհիդին և չէր անցել 20 օր, մունետիկները շուկաներում ու հրապարակներում հայտարարեցին մենավաճառի ոչնչացումն, հետևապես՝ ծխելու արտոնություն մուշտեհիդի կողմից:

Ժողովուրդն իր արյան գնով ետ էր ստացել կորցված իրավունքները:

Սեյիդ Միրզա Ռիզան իրավունք ուներ — Ալեմգիրը անհաղթելի էր... և այն՝ միմիայն իր համառ, աննկուն և որը գլխավորն է՝ ոգու ամբողջ ու միահամուռ ձգտման ուժով…